

340/24

**Droschak"**  
ORGANE  
de la Fédération  
Général. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse:  
RÉDACTION DU JOURNAL  
„Droschak“  
GENÈVE (Suisse)

## „ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՐԱՆՆԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

875

### Պ Ի Է Ռ Կ Ի Յ Ե Ա Ռ

Ինտոզը մահ և մի ծանր կորուստ...

Երբ գուժեց Պարիզից մեր խմբագրութեան, որ Պիեռ Վիյեառ յանկարծամահ է եղեր Ընդամենը 47  
 Տասնամյակ, իր հարուստ ձիրքերի զարգացման գագաթին, գերեզման է իջնում այն մարդը, որ բոլոր  
 արտագրիչների մէջ ամենահարազատն էր մեզ համար՝ մի մտերիմ, մի ընկեր, աւելի բան ընկեր —  
 Բ... Այդ բառի իսկական նշանակութեամբ, այդ գաղափարի ամենավեճ իմաստով 17 տարուց ի վեր  
 որ շեփորում էր անկարեկիր աշխարհի առջև հայ ժողովրդի նւիրական և ողբերգական դատը, նրա  
 գնաժամն ու օրհասը 12 տարուց ի վեր նա մեզ հետ էր, յՊաշնակցութեան՝ հետ, բաժանում էր  
 թիւնների բերկրանքը և ձախորդութիւնների վիշտն ու դառնութիւնը... Մեր շարքերից է, որ  
 մի խոշոր դէմք, հայոց մասլլ երկնակամարից է, որ անհետանում է մի պայծառ և հրապուրիչ աստղ  
 ղը էր, յեղափոխական Ֆրանսիայի հարազատ զաւակներից, Դանտոնների ու Բլանկիների խանդավառ  
 մի շքմարիտ յհամաշխարհային քաղաքացի՝ մի շիտակ քաղաքացի, որ վազում էր ամեն տեղ, ուր  
 անձայական ձայնը կոչում էր իրեն, նետում էր երիտասարդական անչէջ խանդավառութեամբ՝ բոլոր  
 տների մէջ, բոլոր մարդասպան բռնութիւնների ու անիրաւութիւնների դէմ, խօսում էր, գրում էր,  
 լուր արարում — և այդ անխնջ պայքարի մէջ գտնում էր իր գերագոյն երջանկութիւնը  
 Ի մահը — ուղգ է հայ ժողովրդի, հայ երիտասարդութեան համար Ասւած է, որ ամեն մարդ երկու  
 ունի — իր սեփականը և ապա Ֆրանսիան Ֆրանսիացի Վիյեառը երկու սիրւած ու գուրգուրած հայրենիք  
 սեփականը և Հ ա յ ա ս տ ա ն ը...  
 Ես ք մեծ է և այս վայրկեանիս մտադիր չեմք ներկայացնելու այդ հրապուրիչ կեանքը իր այլազան  
 թիւնների մէջ, Մենք յետոյ ցոյց կը տանք, թէ ինչ էր հանգուցեալը մեզ համար, հայ ժողովրդի,  
 համար

### 1911—1912

... արի էր Ի ս լ ա մ ի համար  
 կողմից... Ֆրանսիան Մարոկկոի դէմ,  
 Անգլիան՝ Պարսկաստանի դէմ, Իտա-  
 Ֆրանսիայի դէմ... Խաչը և մահիկը վա-  
 րձապարտ չէին զարնել իրարու. մի  
 սերտ պրշաւանք՝ է, բայց ոչ այլ և ս  
 թիւններից, այլ յանուն... բա-  
 րձապարտ աշխարհակառչները խոս-  
 ւել խաւար, յետամնաց երկիրներում  
 արօհկոն և Պարսկաստանը Առա-  
 ու արդէն Ֆրանսիայի բացարձակ  
 դարձաւ երկրորդ եգիպտոս.  
 ում է կեանքի և մահու մէջ,  
 անահարած և արիւնած:

2եռքից կ'երթայ և թիւրքական Տրիպոլիսը Մի  
 վայրկեան նրա յարուցած տագնապը սպառնաց ընդհա-  
 նուր տակնուվրայում, վտանգի մասնեց ամբողջ երկրի  
 գոյութիւնը... Մի վայրկեան կար, երբ Ռուսաստանի  
 անակնկալ պահանջի հանդէպ, նեղուցների խնդրի առթիւ,  
 քաղաքակիրթ մարդկութիւնը սարսուռով մտածում էր,  
 թէ հասել է յաւիտենական յհիւանդ մարդու՝ ճա-  
 կատագրական վախճանը Բախսը, սուկայն, այս անգամ  
 էլ ժպտաց օսմանեան կիսալուսնին, պարիզեան կարճաակ  
 դեպքանաժողովը Սաղոնովի մասնակցութեամբ, գտաւ,  
 ըստ երևոյթի, որ վայրկեանը դեռ պատեճ չէ, որ  
 դեռ պէտք է սպասել  
 Որքան խրատական են այդ անակնկալ տագնապները  
 Թիւրքիայի վարիչների համար, որքան հրահանգիչ են  
 նրանք, մասնաւորապէս, մեզ համար Բորբորում էր մի  
 հրդեհ, որ կարող էր կլանել մեզ, Պատրաստ էինք  
 դիմադրելու...  
 Ամբողջ տարին երիտասարդ Թիւրքիան ներկայացրեց

874



212-9190



ներքին տխուր երկպառակութիւնների մի քստմնելի տեսարան Բաւական չէ, որ նա միանգամայն անընդունակ էր յայտնուում կանգնելու ժամանակի պահանջների բարձրութեան վրայ, մղելու երկրի անիւր դէպի ճշմարիտ վերածնութիւն, կազմուելու համագիտականութեան բացած խորունկ վերքերը, կազմուելու հայերին, մակեղանայիններին, հին ու ժամի մտնամեծ զոհերին, բաւական չէ, որ մղելու, սահմանափակ մտայնութեամբ նա ազատ ասպարէզ էր առիտ գաւառներում հակաքրիստոնէական, մասնաւորապէս հակահայկական բնազդներին, լուեւեայն սրբագործում էր հրոսակների աղաղակող ուժերները և գրանով իսկ խրատուում էր յետաշրջման հոսանքը, գրանով իսկ միջամտութեան պատրական առիտ արտաքին ոտններին, — Երիտասարդ Թիւրքիան՝ անգամ իր հայրենիքի ամբողջութեանն ուղղակի սպառնացող պատերազմի ու ճգնաժամի հանդէպ՝ անկարող եղաւ պահպանել միութիւն ու ներդաշնակութիւն և մնաց միշտ պառակտած, հակամարտ, անդամալոծ... Կուսակցական ծանծաղամիտ պայքարները զինագաղար բնաւ չունեցան, — պայքարներ՝ որ միանգամայն զուրկ էին գաղափարային աստուծոյ, որ մեծ մասամբ պտտուում էին անձերի ու անձանցի շուրջը, մեծ մասամբ սոցորուած էին փառատենչ, կորստաբեր անորոշութեան, որոնք և հասցրին ներկայ ծանր ճգնաժամին, Պատգամաւորական ժողովի լուծման... Գոհանակ լուեցնելու կուսակցական կրքերը այս հանդիսուոր և գրամատիկ օրերում և բոլորը իբրև մէկ մարդ ծառանալու արտաքին թշնամու դէմ — ինչպէս որ ընդունած է իրաքանչիւր շատ թէ քիչ բարեկիրթ պետութեան մէջ — նրանք՝ զուտարիւն օսմանցիները՝ աւին աշխարհին պերճախօս պայցոյցներ իրենց ներքին համաճարակ փրտախտ... Այն ժամանակ, երբ այդ աշխարհը սպառում էր, թէ երիտասարդ թիւրքերը պիտի ցոյց առային, որ սահմանադրական ու ժամի տակ թիւրք պետական օրգանիզմը թարմացել է և աւելի ուժով ու ներդաշնակութեամբ, աւելի գիտակցօրէն և հայրանասիրական աւելի մեծ աւելնով պիտի նետուի հայրենիքի թշնամիների դէմ

Ահա տխուր իրողութիւններ, որ բոլորում են տարւայ անցքերի թուցիկ տեսութիւնից, իբրև ահաւոր մի անտանիշ, որ հարցական նշանի տակ է գնում՝ թիւրք վարիչ մարմինների քաղաքական ու քաղաքացիական հասունութիւնը, որս հետ նաև երկրի ասպարէն...

Պատմութիւնը կրկնուում է... Նոյն պատկերն էր երբեմն, Բիւզանդական կայսրների օրով, երբ օսմանցիք սպառնալի կանգնել էին Կ. Պոլսի պատերի առջև, իսկ ներսը տիրում էր մի անհարկ ներկայառակութիւն, մաքրի, ուղղութիւնների կործանարար մի շփոթ...

Աղաղիկեան վիլլայի կալանաւորը կարող է թերևս իրաւամբ նկատել իր քաջամարտիկ անոյեաններին. «երբ

ես էի միահեծան հրամանատարը կայսրութեան՝ տերազմի ժամանակ, ճիշտ է, ես էլ չէի փրկում բնիքի ամբողջութիւնը, բայց գէթ իմ օրով ել կազմում էր միաբան, ներդաշնակ, կուռ ու կազմանակ»...

\* \*

Պատմութիւնը կրկնուում է — նաև մեզ համար, ամիսներ սրանից առաջ փոթորկը նորէն պայթեց խարհը իրարու անցաւ և Արևելքի խաղաղութիւն մազից էր կախած մնացել — մենք վերստին հարց առախ, յանկարծակիի եկած. «Ի՞նչ ենք մենք, գիտում, ո՞ր է մեր ազգային բաղաբաղութիւնը... Ի՞նչ էական մտահոգութիւններով է «ազգը» իր երևելիներով, իր խոհուն գլուխ Ազգային ժողովով և ազգային իշխանութիւններն արգեօք գիմագրելու կարողութիւն, զինքնիս պաշտպանելու միջոցներ»...

Եւ այդ հարցը շարունակ վերադառնալով շրթների վրայ, քանի որ ապրում ենք միտանգաւոր ժամանակաշրջանում, քանի նորանոր անակնկալներ են առաջանում — կատաղիքը յեղաշրջող անակնկալներ

Պատասխանը ծանօթ է ժողովրդի բնութեան հանդէպ և նոր հնարաւոր պատգամի «ազգը» — ինչպէս «հին, բարի ժամ» — իր հրատապ, կենտրոնական հոգեւոր ղեցիներն ու վանքերը, գերեզմանատեղեկութիւնները, Երուսաղէմը, Աղթամարը, կուում է իր աւանդական պաշտօնը՝ ինչն անկան համայնք, երբէք քաղաքունակում է եկեղեցիների ու դպրոցի հայ ժողովրդի փրկութեան խարխուլը ճշմարիտ քաղաքականութեան դիրքաւորումը նախկին թուլամորթ երկչափութիւն իր պատեանի մէջ, նա չի լսում իր ահազանգերը, չի անդրադառնում կեանքն ալեկոծող անցքերի վրայ և հուրանքով հայ քաղաքական կուսակցութեան ժուրում է նրանց գոյութեան խարտեանական և նղովեալ խնդիրներից ու համար հազար անգամ աւելի հրաւրիչ խնդիրը կար — հայոց կրօնականութիւնը և ամբողջ ասեղեքարական տրամադրութեան հայոց մթնոլորտը թնդում էր տակոչերից Կ. Պոլսից մինչև մտազբաղ էին, թէ ով պիտի և գրեթէ նաև անբովանդակ

\*) Չենք միանգամայն ժխտել թիւնների արժեքը Այս անգ...



Այդպէս ենք եղել միշտ Անհուն եռանդ ու կորով ենք սպառել՝ այդ կարգի խնդիրների վրայ և յանցաւոր կարճամտութեամբ դանց ենք անել ազգային ինքնապահպանութեան առաջնակարգ պահանջը, որին ամեն ման հպատակու՛մ է, որին ամեն բան պէտք է հպատակուի Այդպէս էին և մեր երևելի նախնիները, սկսած վերածնութեան առաջին օրերից, 60-ական թւականներից, երբ նրանց ձեռքը արւեց «Ազգային Սահմանադրութիւն» կոչեցեալ թուղթը, երբ հօգիների կապանքները մասամբ փշրւեցին և լեզուները բացւեցին... «Ազգերնիս կը յառաջագի՛մէ կոր» — սասցին նրանք և հոսեցրին անվերջ ու պերճ ձուների հեղեղները... Երևակայեցին, թէ ազգն արդէն երջանկացած է, օրօրւցին տասնեակ տարիներ սին պատրանքով թէ հայութիւնը արդէն իսկ բաղաբական ստորագելիներով օժտւած ազգ է, մինչդեռ նրան տրւած էր Սահմանադրութիւնը, իբրև սոսկ կրօնական-լուսաւորչական համայնքի և նա մնում էր այդպիսին։ Այժմ ձառքերի հեղեղները և Ազգային ժողովի պերճախօս մրցումները, ոչ վանքերի ու դպրոցների վերաշինու՛մն ու բազմացումը չէին մացնում իրական բարօրութեան և ոչ մի շող, ձուռագայթ ժորթուող հայաստանցու խրճիթի մէջ... Եւ երբ հասան պատմական թւականները, երբ արևելեան թատերաբեմում խլրտացին ժողովուրդները իրենց ուրոյն պահանջներով ու ձգտումներով, երբ արևմտեան դիւանագիտական արեօպագում ազգերի կենդանութեան միակ, ազգու, խորհրդաւոր բանաձև յայտարարեց. «Je m'insurge, dans je suis!» (եւ արատարում եմ, ուրեմն և գոյութիւն ունիմ) — հայոց «ազգը» այն ատեն միայն զգաստացաւ, ըմբռնեց ցաւով ու ցասումով, որ մոլորել է, որ սխալ ճամբով է

կուսահայ ինտելիգենտ՝ աշխարհում, մտքերի ու դուստնաբների մի անօրինակ շփոթի, մի կատարեալ մասային արեւրաստանի և տարբաւուման, որին թերևս կը վերագուանանք մի յօգւածով։ Մի կողմը թողնենք՝ որ անգամ այդպէս, կաթնով ընտրական պայքարի մէջ մերթ թափու՛մ, մերթ բացարձակ, հազիւ հազ վարդուրեւած ձևով առաջ էր տարուում կոխը... հրապարակեց բացակայող «Գաշնակցութեան» գեմ, Բայց առանց վերջինի գործակցութեան էլ՝ հայ ժողովրդական բնագլը շխտարեց ուղիղ ճանապարհից, նա կարողացաւ գէթ զանազանել մարտը անմաքուրից, շիտակ զարնեց և յողթանակեց։ Երկրորդ ուշադրաւ իրողութիւնը այդ ահագին imbroglion-ի մէջ հայ կուսակցական բարտեզի փոփոխութիւնն էր — շատերի համար վաղուց սպասելի։ Լ. Յ. Գաշնակցութեան գոյութիւնը դեռ շատ այդպիսի բարտեզային յեղաշրջումներ և ուժերի փոխադրութիւններ պիտի յարուցաւ և մեր խոպան մտաւոր հրապարակում, իրողութիւնն այն է, որ հին պատասխան, առաջադիմական՝ կուսակցութիւնը ջնջելու իր պառն և անկեղծօրէն իր սահմանացոյց զծերը (lignes de demarcation) իր երբեմնի ախոյեան՝ կղերապահ-հայանդ սկան հատուածի հետ, ձուրեց նրա հետ, կուսեց նրա հետ իւր թեւի տւած և անպատիւ պարտութիւն կեցցի

Այսուհետև մնում է հայ օրինական գործունէութեան ստարտեգում՝ մի կղերական-պահպանողական բրզի, առանց ներքին գաղափարային տարբերութեան և նրա դիմաց մի երկնաութիւն պատիւ լինելով

առաջ տարել իր գոյութեան նաւակը, որ չէր արել ինչ որ պէտք էր, չէր պատրաստել «հարիսան» վայելելու համար իրիմեանի post factum ջատագոյժ «երկաթէ շերեփը», չէր յարմարել, մի խօսքով, տիեզերական գոյամարտի անագորոյն պատագամներին... և մեր «ազգի» յանցանքով, էֆէնտիների, բուրժուաների և բուրժուախիւ մտաւորականութեան յանցանքով՝ Բերլինեան պատերազմութիւնը վիժեց, հայոց արդար գանգատները վիժեցին և թիւրքահայ ժողովուրդը այնուհետև ամողջ 30 տարի շարունակ գամւած մնաց շարձարանի ու զօրխային նահատակութեան մահճի վրայ։ «Անցեալն է անց»... Այժմ անցեալը պէտք է միշտ որոճանք, պէտք է միշտ ունենանք աչքի առջև և քաղենք նրա ծոցից հրահանգն եր' ներկայի համար։ Պատմութիւնը կրկնու՛մ է միակերպ, համանման արարւածներով միայն անկիրթ և կիսակիրթ ցեղերի համար, որոնք ոչինչ չեն ուսանում անցեալից և դիւրութեամբ հողմերին ու ջրերին են յանձնու՛մ այդ պատմութեան ամենացնցող դուռները։ այդ անցեալի ամենատրածիկ դասերը...

35 տարի է անցել — և այն ժամանակայ սակաւթիւ զգաստ ու ըմբոստ ձայները զարմանալի թարմութիւն են պահպանում մեր օրերում։ Ահա թէ ինչ էր գրում Բերլինի կոնգրէսի նախօրեակին մի ըմբոստ եկեղեցական, Կ. Պոլսի «Փունջ»-ի մէջ (1878 թ. ապրիլի 29)։

... «Որքա՛ն անհուն տարբերութիւն մեր և պուլղարաց մէջ. զի մեր աւած զոհեցը սոփոսութեան զոհեր են, անտարբերութեան զոհեր, հայրենատեցութեան զոհեր...

... «Հայոց ազգ... սովորած է ստրկութեան... Իր անմիա երկնոտութիւն մինչև այն ատիճան հասած է, որ իր թշուա վիճակին վրայ խռովելու նշան անգամ չի յայտնէր... Երբեմն իր յոյսը Սահմանադրութեան վրայ դրած էր... Այսօր ալ իր բոլոր անկաւութեանց կեղծ ըրած է դպրոցները և կըսպասէ, որ դպրոցներէն գտնէ ազատութիւն։ Բայց մի՛թէ այսքան ժամանակներէ հետեւ ազգը դպրոց ունեցած չէր, որ չի կարաց ազատուիլ և մի՛թէ դպրոցի՛ն մէջ կը սորվի Հայն արխանուշտ Գիւրգին թուրը ջախջախել...

«Հայը կրնայ բաղաբակիրթ, ճարտար, գործունեայ, լուսաւորեալ և սահմանադրական ազգ մ'եղած ըլլալ, բայց... կրնայ առանց ամաչելու հաստատել թէ ազգին կեանքն ապահովեալ է...»

Երեսունուհինգ տարի է անցել գրեթէ ևւ մենք ակամայ համեմատում ենք անցեալն ու ներկան նրանք ոչ միայն համեմատելի են, այլ և խիստ նման, տարաբախտաբար... Պատմական միջավայրը դարձեալ յղի է «գէպերով», անակնկալներով։ Հայաստանը դարձեալ բացառիկ օրէնքի տակ Հայ ժողովրդի ընդհանուր վիճակը՝ լի դառնութեամբ ու յուսահատութեամբ։ Գրեթէ բոլոր յիթագրիրներն ու բողոքները — ձայն



բարբառոյ յանապատի յԱզգի՝ ընդհանուր մտայնութիւնը նոյնն է մնացել, գրեթէ նոյնը՝ համազգային ինքնապահպանութեան կարգի նախ հոգսի առջև: Բարբառոյ հրոսակների անպատժ թախքների հանդէպ շարունակում ենք հղովել «Երուսաղէմ՝ ու Աղլթամար»: Ազգի ճնշող ընդհանրութիւնը մի սրտառուչ հաւատարմութեամբ կապած է մեռում: «Փայտէ շերեփի» դաւանանքին:

Այդտեղ է մեր կացութեան յաւիտենական արագիզմը:

**ՍՕՅԻԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

**ՍՕՅԻԱԿԱՆ ՏԱՐՐԸ**

**ՌՈՒՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ**

Ն Ն Ր Ա Մ Ո Ղ Թ Ի Ն

Ժողովուրդների հասարակական կեանքի մէջ, բնաշրջումի երկար ու բարդ ճանապարհի վրայ՝ գրականութիւնը իր յատուկ պաշտօնն ունի, իր կարևոր և նշանակալից գերը:

Նա կեանքի, միջավայրի արդիւնք է անշուշտ, ժամանակից և տարածութիւնից դուրս չէ անկասկած: Բայց նա որոշ կեանքի և որոշ միջավայրի գոյութեան ազդակներից է միանգամայն: Եթէ առանց հասարակական օրգանիզմի՝ գրականութեան ծնունդն անմտածելի կը լինէր, այնպէս էլ առանց գրականութեան՝ հասարակական օրգանիզմի զարգացումը ծանր վտանգների կը զարնէր:

Կեանքի և գրականութեան յարաբերութիւնը միակողմանի ու տարամբժ չէ: Ըարժումը առաջինից հաղորդում է երկրորդին: Բայց այնտեղ չի մեռնում, այնտեղ չի ոչնչանում: Նա զուում է գրականութեան մէջ, կանոնաւորում, հասարում իր քառասական ախրները և ապա, մաքուր ու յստակ, դաւնում դէպի կեանքը: Գրականութիւնը մի անշարժ, անկենդան զանգած չէ, ուր կորչին, անէանան կեանքի բաղնուսները: Նա մի անյատակ խաւար չէ, ուր ոչնչանան շրջապատի լոյսերը, անարձագանք ու անվերագարձ: Այդ բաղնուսներն ու լոյսերը, կեանքի այդ յաւիտենական յորձանքները միշտ դառնում են դէպի յետ, դէպի միջավայրը: Եթէ կեանքը ազդում է գրականութեան վրայ, վերջինս էլ կեանքից լուսաւորած՝ կանոնաւորում է նրա ընթացքը, բնորոշում է նրա ուղղութիւնը: Քաղաքակրթութիւնը, յառաջագիտութիւնը այս կրկնակի շարժումների արդիւնքն է: Պատմութիւնը այս փոխադարձ ազդեցութեան հետեանքն է:

Առարկայական և ենթակայական, նիւթական և իդէական ներգործութիւնների մի մասն է կազմում կեանքի ու գրականութեան պարզեմը: Ինչպէս պատմութիւնը տարամբժօրէն առարկայական ուժերի ստեղծագործութիւն չէ, ինչպէս քաղաքակրթութիւնը միմիայն նիւթական պատճառների ծնունդ չէ, այնպէս էլ հասարակական բովանդակ բնաշրջումը միմիայն կեանքի անգի-

տակից թաւալումների պտուղը չէ: Այստեղ դեր ունին «ենթակայական» ուժերը ևս, դեր ունին իդէական պատճառներն ևս — գրականութիւնն ևս...

Պատմական որոշ դէպքեր բնեւելու ժամանակ՝ չպէտք է բաւականանանք մակերևոյթական ու միակողմանի դիտողութիւններով: մենք պարտաւոր ենք որոնել բոլոր այն պատճառները, որոնք համախմբելով՝ առաջ են բերել այս կամ այն եղելութիւնը: Եւ այս հետազոտութեան ժամին, ընկերարանական-իմաստասիրական այս որոնումների ընթացքում՝ մենք յաճախ հանդիպում ենք գրականութեան թիւնը, իր մէջ ամփոփ հաստատում ենք, որ գրականութիւնը, իր մէջ ամփոփելով ժամանակի ձգտումներն ու համադրութիւնները, դառնում է հասարակական իրողութիւնների կարևոր գործօններից մին: Աւելուծելով կեանքի երևոյթները, ուսումնասիրելով մարդկային բովանդակ յարաբերութիւնները, յստակօրէն ու կենդանի ներկայացնելով շքրջապատի արժեքները՝ գրականութիւնը հանդիսանում է մի գիտակցական ազդակ և իբրև այդպիսին մտնում է ժողովուրդների հոգեբանութեան ու տրամաբանութեան մէջ: Եւ այնուհետև, այսպէս կազմակերպւած ժողովուրդները, այսպէս զարգացած հասարակութիւնները կատարում են, իրագործում այս կամ այն պատմական ակտը: Փաղափարական գործօնները, իդէաուժերը (idée-force), որոնց գերը պատմական երևոյթների ծագման մէջ յաճախ չափազանց նշանակալից է՝ արտայայտում են գրականութեամբ: Անհատի և հասարակութեան գիտակցութիւնը ապրում է ու կազմակերպում գրականութեան ազդեցութեան ներքոյ: Եւ եթէ առարկայական հանգամանքներին չհաղորդի ժողովուրդների կամ անհատների գիտակցութիւնը՝ «պրօգրէտը», առաջագիտութիւնը ասպարէզ չեն գայ:

Որոշ ժամանակի և որոշ դէպքերի նկատմամբ գրականութիւնը ներկայանում է իբր անմիջական ազդակ, իբրև մերձաւոր պատճառ: Հասարակական կեանքի բնագաղտը, հասարակական երևոյթների մեկնաբանը բաւականանում է այդ անմիջական ազդակի վերլուծութեամբ: Անշուշտ նա կարող է և պատրաստ է մատնանշել նաև անուղղակի գործօնները — եթէ նրանք բաւարարաչափ հարկաւոր են — կարող է ցուցահանել նաև հետաւոր պատճառները, բայց նա չի կարող և ամենևին պարտաւոր չէ այդ ուղղութեամբ անվերջ առաջ գնալ: Եթէ պատմագրի, ընկերաբանի համար հարկադրական դարձնենք հետաւոր պատճառների հետախուզութիւնը, ապա անկարելի կը դառնայ որոշ ժամանակի և որոշ իրողութեան բացատրութիւնը: Բնական փաստերը միմեանց հետ շղթայած են անվտանգօրէն: Ամեն անգամ գտնւած պատճառի պատճառին հետամտելով, ամեն անգամ գտնւած բացատրութեան բացատրութիւնը որոնելով՝ մենք անխուսափելիօրէն պիտի դիմենք դէպի նախնական պատճառը...

Այսպիսով ընկերաբանական գիտութիւնները կը դառնան բնազանցութիւն և հասարակական երևոյթների մեկնաբանութիւնը կը դառնայ բնազանցական խաղ: «Պատճառների պատճառը» տեղ չունի գիտութեան ոլորտում: Ակզբնական, նախագոյ պատճառի հետազոտութիւնը ոչ բնագիտական և ոչ հասարակագիտական պարզէմ է: Ընկերական բնական կեանքի մէջ բնազան-



ական մեթոդի կիրառութիւնը ոչ մի գրական հե-  
տեանք չի տար Այդ ճանապարհով մենք երբեք չենք  
կարող պատմական որոշ ժամանակաշրջան և  
որոշ իրողութիւն լուսարանել ու հիմնաւորել  
Այսպիսով բոլոր ժամանակներն ու բոլոր եղելութիւն-  
ները մի հատիկ ծագումն կունենան, մի սկզբնական ու  
միասնակ պատճառ: Եւ այդ մի հատիկ ծագումը ուրիշ  
ոչինչ չի լինի, բայց եթէ բնագանցագէտների առա-  
ջին պատճառը, որ խաւարի ու յաւիտենական մշուշի  
մէջ է և որ թերևս երբեք էլ չի յայտնագործւի:

Հասարակական երևոյթները բննելիս մենք պիտի  
որոնեք առաւել կամ նւազ մերձակայ պատճառներ:  
Պիտի ցուցահաններ այն առաւել կամ նւազ անմիջա-  
կան ազդակները, որոնք աւել ժամանակում աւել  
իրողութիւնն են արդիւնաւորել: Այս միջավայրում և  
այս հողի վրայ՝ նախնական պատճառի հետազոտութիւնը  
ամուլ աշխատանք է:

Եթէ հասարակագէտը, եթէ պատմաբանը կարողա-  
նում են որոշ պատճառներ արձանագրել, որոնք աւել  
ժամանակաշրջանում և աւել տարածութեան վրայ  
որոշ հետեանքներ են առաջացրել—նրանք զբանով իսկ  
կատարում են իրենց կոչումը: Չենք կորոզ պահանջել,  
որ ընկերաբաններն ու պատմագէտները լուսաւորելով  
որոշ իրողութեան հիմքերը՝ լուսաւորեն նաև այդ  
հիմքերի հիմքերը, և այսպէս անվախճան... Բաւական է,  
որ յայտնի ուժ—լինի նա առարկայական թէ ենթա-  
կայական, նիւթական թէ իդէական — ներգործելով  
կեանքի բազմազանութեան վրայ՝ պայմանաւորել է որոշ  
փաստի ծնունդը կամ զարգացումը...

Այս ընդհանուր սկզբունքները շոշափելի դարձնելու  
համար, գրականութեան և կեանքի փոխադարձ ազդե-  
ցութիւնը յստակօրէն ներկայացնելու համար՝ կանգ  
առնենք մի օրինակի վրայ, որ այնքան բովանդակալից է  
և որ իրապէս շատ բան է ապացուցանում: Ֆրանսիա-  
կան Մեծ Յեղափոխութեան և տասնութերորդ դարի  
գրական շարժման ներքին, բարոյական կապը յիրաւի  
շատ է նշանակելի: Այս մի հատիկ պատմական օրինակի  
մէջ ակնյայտ երևում է գաղափարական գործօնների  
և մասնաւորապէս գրականութեան խորունկ ազդեցու-  
թիւնը հասարակական և քաղաքական անցուդարձերի  
վրայ: Մեծ Յեղափոխութեան պատմիչները, բրբրելով  
այդ հռչակաւոր եղելութեան հիմքերը, նիւթական-  
անտեսական դասակարգային պատճառների հետ վեր են  
հանել նաև գրականութեան կարևոր դերը:

Միապետութեան դժոխային յանցանքները, պալատա-  
կան անհաշիւ ու առասպելական ծախսերը, ազնւակա-  
նութեան և կղերականութեան բիրտ ու ալլանդակ  
արարքները, գիւղացիութեան սարսափելի թշուառու-  
թիւնը, միջին դասերի, քաղաքային բնակիչների ստրկա-  
կան, անագատ վիճակը, հարկերի և զանազան տուրքերի  
անխիղճ բաշխումը, պետական գանձարանի սնանկու-  
թիւնը... Այս բոլորը անշուշտ հզօրապէս պայմանաւո-  
րեցին յեղափոխութեան անհրաժեշտութիւնը: Բայց  
միաժամանակ այդ բոլոր պարագաները—անկախ հասա-  
րակական մտքից, հաւաքական գիտակցութիւն  
նից, բարոյական-կենսական ըմբռնումից— չէին  
կարող արտադրել այն մեծախորհուրդ ու բարդ իրո-  
ղութիւնը, որի անունն է Ֆրանսիական Յեղափոխու-

թիւն: Երկար տարիների հետեւողական ու սխալմամտիկ  
աշխատանքով տասնութերորդ դարի գրական-փիլիսո-  
փայական հանձարեղ գրիչները միջավայրի, առարկայա-  
կան կառուցածքի մէջ պայծառ միտք դրին, խորունկ  
գիտակցութիւն և յստակ ըմբռնում: Մի  
Մօնտեսքիօ իր խոհուն, լուրջ ու ծանր նկարագրով  
Ֆրանսիացիների առջև հանեց անգլիական սահմանա-  
դրութեան բարիքները, քաղաքական ազատութեան  
օգուտները, հրահանգեց պետական վերակազմութեան  
անհրաժեշտութիւնը: Մի Աօլտէր իր սրամիտ, կեն-  
դանի, խորաթափանց ոգով, իր շեշտակի ու իմացական  
խառնածոքով, իր դասական հեզունութեամբ խորիւնց  
միապետութեան, ազնւականութեան և կղերականու-  
թեան գահերը: Մի Գիդրօ իր բննադատական, վեր-  
լուծական ուղեղով, իր բազմակողմանի, հանրագիտական  
պաշարով հին աէժիմի խոցերը և բովանդակ փտու-  
թիւնը հարածեց: Մի Բիւֆֆօն իր համակարգած  
և բարձր տրամաբանութեամբ, կործանեց մարդու ծագ-  
ման աստածային թէօրիան՝ բնութեան առջ բոլոր  
մարդկանց ծնունդը հաւասար հռչակելով: Մի Ռուսսօ  
իր լայն ու մոլեգին թափով, իր խորունկ զգացմունքով, իր  
արմատական կենսահայեցողութեամբ միապետների գե-  
րիշխանութեան հինաւուրց սկզբունքը ջախջախեց և ժո-  
ղովորդների գերիշխանութեան գաղափարը ներբողեց...  
Եւ այսպէս շարունակի Լուսաւորեայ դարի գրական  
մեծանուն ղեմքերը այս հիմք անձով շեն սահմանա-  
փակում: Նրանք դարձեալ կան և ամենքը միասին մի  
հիմնական գաղափարի՝ մի կենտրոնական մտքի բարո-  
զողներն են: Գրականութիւնը հաստատուած այդ մասւոր  
հսկանքի հեղինակութեան վրայ՝ իր պատմական դերը  
կատարեց: Եւ Յեղափոխութեան շառաւիղից վայրկեան-  
ներին այս կամ այն հեղինակն էր տոն տալիս բուն  
ղեկերին, ուղղութիւն տալիս հասարակական հոսանք-  
ներին՝ իր գերեզմանից, իր յաւիտենական բնակարանից:  
Նրանց գրքերը նոր կեանքի և նոր հասարակութեան  
աւետարանները դարձան...

Վարելի է անշուշտ առաջ տանել պատմական հետա-  
խուզութիւնը և հարցնել թէ՛ հայտ իրենք, այդ գրա-  
կանութեան ներկայացուցիչները ի՞նչ պայմանների  
ծնունդ էին: Այս հետախուզութեան մէջ էլ, սակայն,  
անտեսական-նիւթական պարագաներից զատ՝ մենք կը  
հանդիպինք գաղափարական տարրերի, իդէական հիմ-  
քերի և անհատական գործօնների... Եթէ այս վերջին  
պայմանների պայմանները ևս բրբրելու լինենք՝ դար-  
ձեալ նոյնը միշտ դասակարգային անտեսականի կողքին  
գաղափարական իդէականը, միշտ առարկայականի հետ  
ենթակայականը, անհատականը նախնական պայ-  
մանն է միայն, առաջին պատճառը բոլոր երևոյթ-  
ների, որի մասին գիտութիւնները չունեն,  
որի նկատմամբ խօսք չունի նաև ընկերաբանութիւնը:

Եւ այսպէս, բացայայտ է գրականութեան ազդեցու-  
թիւնը հասարակական երևոյթների վրայ: Մեր կեանքի  
մէջ ևս կարելի է գտնել այս ճշմարտութիւնն ապա-  
ցուցանող օրինակներ: Տակաւին գրած չէ մեր յեղա-  
փոխական շարժումների պատմութիւնը, բայց և այն-  
պէս, հաստատ կերպով կարելի է պնդել, որ այդ շար-  
ժումների վրայ մեծ ներգործութիւն է ունեցել հայ  
գրականութիւնը:



Մի Արտփեան, մի Նալլամանդեան, մի Ստեփան Ոսկան, մի Բաֆֆի, մի Պատկանեան, մի Ծերենց և շատ ուրիշները տարիների ընթացքում մթնոլորտ պատրաստեցին, սերունդներին գիտակցութիւն հաղորդեցին և այս բարոյական մթնոլորտի մէջ գաստիարակած ժողովուրդն էր, որ յեղափոխութեան դիմեց իր գարաւոր և մարդկային իրաւունքները պաշտպանելու համար:

Այստեղ մենք չենք ծանրանում մեր կեանքի և մեր գրականութեան փոխադարձ յարաբերութեան վրայ յօգուածի շարունակութեան մէջ մենք բաւական մասնամասն պիտի շօշափենք այդ խնդիրը: Առայժմ հարցի յիշատակութեամբ միայն մենք կամեցանք ընկերացողի երևակայութիւնն ամբողջացնել և ցոյց տալ, որ Ֆրանսիական միջավայրից դուրս ուրիշ տեղ էլ նոյն երևոյթը նկատելի է...

Բնական աշխարհի մէջ ևս բացատրութեան նոյն մեթօդն է տիրապետում,— որոնել երևոյթների առաւել կամ նւազ մերձակայ պատճառները և շտաբել մետաֆիզիքական պատրանքներով: Ծովի ափին ապրում էր մի ողորմելի բուսական: Այլքները ուժգնութեամբ թափւեցին նրա վրայ և խորտակեցին նրա կեանքը: Բուսականի մահուան պատճառը ալիքները եղան, ուրե՛մ: Բայց նկատեցէք, որ ալիքների գոյութեան խնդիրը ևս կարելի է հետազոտութեան նիւթ դարձնել: Փոթորիկ, օգի հոսանք, բնութեան խաղեր, և եթէ կամենանք ալիքների վերջնական աղբիւրը գտնել, որքա՛ն պէտք է խորանանք դէպի տիեզերական շարժումները, դէպի հեռուոր ու անծանօթ բաղնուսները:

Այս ճանապարհով ոչինչ չի կարելի մեկնաբանել և երևոյթները—լինին նրանք բնական թէ հասարակած —միշտ էլ մշուշի մէջ կը մնան...

Սօցիալական կեանքի զանազան ձևերը, միջավայրի ոգին, ժամանակի տրամադրութիւնները հաղորդում են գրականութեան, որքան էլ այդ գրականութիւնը անհատական գունաւորում ունենայ, որքան էլ նրա մէջ ենթակայական տարրերը տիրապետող լինին: Հեղինակները գրական ստեղծագործութիւնների վրայ զննելով իրենց հօգու կնիքը՝ դնում են նաև շրջապատող կեանքի դրոշմը: Անգամ գրականութեան այն տեսակները, որոնք գերազանցապէս անհասական են—երգերը, բանաստեղծութիւնները, դրամաները, լիբրեական զեղուսները — ազատ չեն սօցիալական տարրից: Ամեն տեղ ուշադիր վերլուծողը կարող է գտնել հասարակական ձայնի արձագանքը և սօցիալական կառուցածքի արտացոլումը: Նախնական ժամանակների ուսուցիչութեան համար՝ յաճախ դիմում են գրական այն յիշատակարաններին, որոնք արտադրւած են անցեալում և որոնք որևէ կերպ մեզ են հասել: Շատ ոմգամ մի հատիկ պօշմա, մի բանաստեղծութիւն, մի երգ կարող է լոյս սփռել հինաւուրց հասարակական յարաբերութիւնների վրայ և ցուցահանել նախնական միջավայրի մէջ բնորոշ կողմը, մէկ առանձնայատուկ գիծը: Հեղինակներն ապրելով որոշ ժամանակում և որոշ միջավայրում չեն կարող նետել, դուրս գալ իրենց շրջապատից բացարձակապէս: Նրանց երկերը, նրանց խոհերը, նրանց յոյզերը սննդուում են այն մթնոլորտում, ուր ապրում է ստեղծագործողը: Եւ այս մթնոլորտի ընդհանուր կերպարանքը միշտ փոխանցում է գրականութեան:

Կարելի է մի հասարակական զարգացման ընթացքը որոնել գրականութեան մէջ: Կարելի է մի ժողովրդի սօցիալական բնաշրջումը, էւօլյուսիօնը նկատել գրականութեան մէջ: Կարելի է մի ազգի քաղաքակրթութեան ընդհանուր պատկերը նշմարել այնտեղ: Անշուշտ, բոլոր գրականութիւնները միևնոյն ծաւալով չեն արտայայտում հասարակական կեանքը: Անշուշտ, սօցիալական տարրը հաւասար քանակութեամբ չէ ցոլանում բոլոր ազգերի և բոլոր անհատների ստեղծագործութիւնների մէջ: Ազգային և անհատական տարբերութիւններ միշտ կան, ինչպէս ուրիշ ասպարիզում, այնպէս էլ այս խնդրում: Ֆրանսիական և ռուսական գրականութիւնները աւելի են արձագանքել հասարակական ձայնին, բան, օրինակ, անգլիական և գերմանական գրականութիւնները: Ազգերի պատմութեան ընթացքը, ներքին պայմանների համագումարը կարող են այս կամ այն ձևը, այս կամ այն առանձնայատուկութիւնը տալ իրենց գրականութեան: Բայց բոլորն էլ—մէկը բիշ, միւսը շատ, մէկը ուղղակի, միւսն անուղղակի—այսպէս թէ այնպէս անդրադարձնում են ժամանակի ոգին և սօցիալական վիճակը:

Հայոց գրականութիւնը — Ֆրանսիականին և ռուսականին նման—շատ է զբաղւել հասարակական խնդիրներով: Ցասնիններորդ դարի մեր սօցիալական բովանդակ կեանքը, կարելի է ասել, ցոլացել է գրականութեան մէջ: Հասարակական գաղափարներ, հասարակական սկզբունքներ, հասարակական իդէալներ տեղ են գտել այնտեղ բաւական ուղղակի կերպով: Կեր նորագոյն քաղաքակրթութեան պատմութիւնը, մեր դասակարգերի փոխադարձ յարաբերութիւնները, մեր բարոյական աշխարհահայեացքը, մեր քաղաքական ըմբռնումները—այս բոլորը հանդէս են եկել գրական երկասիրութիւնների մէջ: Ընկերաբանը այդ գրական յիշատակարանները բննելով, վէպերը, բանաստեղծութիւնները, դրամաները վերլուծելով՝ կարող է բաւականաչափ ճիշտ գաղափար կազմել հասարակական այն բնաշրջման մասին, որ իրագործւեց մեր ժողովրդի կեանքում, վերջին հարիւրամեակի ընթացքում: Նա այնտեղ կը տեսնէ, թէ ի՞նչպէս է կամաց-կամաց առաջանում հասարակական միտքը, թէ ի՞նչ ազգեցութիւններ է կրում և թէ ի՞նչ ճանապարհ է անցնում: Նա այնտեղ կը տեսնէ այս կամ այն սօցիալական իդէալի, այս կամ այն սօցիալական աշխարհահայեացքի ծագումն ու զարգացումը:

Մեր գրականութեան ուսուցիչութիւնը ցոյց կը տայ, թէ ժամանակակից մեր քաղաքական, անտեսական ըմբռնումները ինչ նախնական ձևից են սկզբնւարել, ինչ պարզ գաղափարից են մեկնել և ինչ սաղմից են ծագում առել: Այն, ինչ որ այսօր մեզ նոր միտք է երևում, այն, ինչ որ վերջին տասնամեակի արդիւնք ենք կարծում՝ աւելի հասակաւոր և աւելի հին դուրս կը գան: Սերունդները միմեանց յետևից — այս կամ այն ձևի տակ, այս կամ այն գունաւորումով—հասակացողութիւններ են արտադրել, միմեանց վրայ հաւաքել և իբրև բարոյական մթերք յետնորդ սերնդին կտակել: Եւ իւրաքանչիւր ժամանակ, իւրաքանչիւր պատմական շրջան իր առանձնայատուկ կնիքն է դրել գաղափարների վրայ, իր որոշ ձևը, իր անհատական կերպարանքը: Այսօր, ժամանակակից սկզբունքները պատմական վերլուծութեան ենթարկելով՝ շատ յաճախ նրանց հիմքերը



գտնում ենք մի քանի տասնամեակ առաջ մեր երախտաւոր հեղինակների երկասիրութեանց մէջ, արտայայտւած այս կամ այն ձևով...

Անցած սերունդները քաղաքակրթական և միաժամանակ հասարակական ահագին գործ են կատարել: Ըստ բան մեզ այժմ դիւրին է երևում: Ըստ միայն, շատ գաղափար մեզ այսօր տարրական է թւում: Բայց այդ տարրական ճանաչումները, նրանք, որոնք մեր բացարձակ գնահատութեան առջև փոքրիկ ու աննշան են կարծւում հիմա՝ պատմական զարգացման ճանապարհի վրայ մեծ կարևորութիւն են ներկայացրել: Այսօր մեզ համար բնաւ վէճի առարկայ չէ և հայ աշխարհի բոլոր քայրերում էլ ընդունւած է այն պարզ միտքը, որ նոր գրականութիւնը ժողովրդին հասկանալի լեզուով պիտի գրել, գրաբարի փոխարէն աշխարհաբար պէտք է գործածել: Ասկայն այս պարզ ճշմարտութիւնը մարդկանց հասկացնելու համար, սրանից ընդամենը յիսուն տարի առաջ, այնպիսի ճակատագրական պատերազմ է մղել ժամանակի մեր յառաջագէտ երիտասարդութիւնը: Մի Արտվեան խորապէս ցնցող և եղբրականորէն դառն հոգեբանութիւն ունեցաւ այդ գաղափարի համար: Մի համոզւած ու տաղանդաւոր վերանորոգիչ, որ հարկադրւած էր արցունքով պաշտպանել նոր լեզուի իրաւունքը: Մի նալլանդեան իր երկաթէ տրամաբանութիւնը, իր քաղժողովմանի զարգացումը, իր անսահման եռանդը և իր թանկագին տարիները ստիպեցաւ մեծ մասամբ այդ նպատակի համար գործադրել: Այսօրայս սերունդը վստիչում է այն բարոյական ժառանգութիւնը, այն նշանակելի յաղթանակը, որի վրայ Արտվեանների ու նալլանդեանների կեանքն է մաշուել: Գաղափարները դանդաղ են մտնում ժողովրդային ընդհանուր գիտակցութեան մէջ, սկզբունքները ծանր գնով են հասարակութեան սեփականութիւն դառնում: Իւր ամեն մի միտք, ամեն մի ճշմարտա գաղափար, որքան էլ նա ըստ երեւոյթին «փոքրիկ» լինի ու «երկրորդական»՝ այնուամենայնիւ բնաշրջման դժնդակ ճանապարհի վրայ իր պատուար տեղն ունի և իր պատմական նշանակութիւնը: Այսպիսի փոքրիկ ու երկրորդական գաղափարներով լիքն է աասնիններորդ դարի ռուսահայ գրականութիւնը: Այդ գաղափարներն են մեծացել, լայնացել և յետագայում մեր կեանքի անգոյն միակերպութիւնը փոխել...

Մեր հասարակական մտքի զարգացման գործում, մեր սօցիալական հոսանքների դոման խնդրում չափազանց ուշադրաւ մասնակցութիւն են ունեցել նախորդ սերունդները: Եթէ այսօր հայ կեանքի մէջ դուրս են եկել քաղաքական-անտեսական կուսակցութիւններ, արմատական հայեացքներով, յեղափոխական ոգով և ընկերվարական իդէալներով և եթէ նրանք կարողանում են ապրել, դեր խաղալ, կողմնակիցներ ունենալ՝ չպիտի կարծել, թէ այդ բոլորը երէկանից սկսւեց: Զպիտի կարծել, թէ այդ կուսակցութիւնները պարտական են միմիայն իրենց ուժերին և ժամանակակից կեանքի անմիջական ազդեցութեան: Երկար տարիների ընթացքում գրականութեան միջոցով հասարակական աշխատանք է կատարել: Ցաղանդաւոր ու պայծառատես հեղինակների արտագրած մի վէպը, մի բանաստեղծութիւնը, մի յոգւածը ի դուր չէ անցել: Նրանք որոշ արժէք են մտցրել

կեանքի մէջ, որոշ ազդեցութիւն են ունեցել մտքերի կազմակերպութեան վրայ: Այն ներքին, մտային գործունէութիւնը, այն հասարակական գիտակցութիւնը, որի մասին խօսեցինք գրականութեան և կեանքի յարաբերութիւնը քննելիս՝ պատրաստուել է և ձևաւորել երկար ժամանակի ընթացքում: Նա միայն այսօրայս ստեղծագործութիւն չէ, միայն ներկայ պայմանների ծնունդ չէ: Նրա վրայ մեծ երախտիք ունին մի Արտվեան, մի նալլանդեան, մի Բաֆթի... Մի բանի սերունդների հաւաքական գործունէութեան հետեւանք է նա:

Այստեղ է գտնւում գաղտնիքը այն բարոյական յաջողութեան, որ ունեցան վերջին տարիների արմատական կուսակցութիւնները: Այստեղ է գտնւում բանալին այն մեծ ժողովրդականութեան, որ բաժին ընկաւ մեր ժամանակի յեղափոխական-ընկերվարական հոսանքին: Զուտ նիւթական պայմանները և մեր կեանքի առարկայական հանգամանքները—առանց այդ նախնական, գաղափարական աշխատանքի—չէին կարող միմիայն իրենց ներգործութեամբ ծնունդ առն այնչափ ընդարձակ մարմինների և խարխալ դառնալ այնքան ժողովրդական շարժումների...

Մի շարք յոգւածներով մենք մտադիր ենք ներկայացնել մեր հասարակական մտքի զարգացման շրջանները այնպէս, ինչպէս նրանք երևան են եկել ռուսահայոց գրականութեան մէջ: Պիտի աշխատենք վեր հանել սօցիալական այն տարրերը, որոնք տեղաւորուել են այս կամ այն գրական երկասիրութեան մէջ: Պիտի փորձենք որոնել այն հիմքերը, որոնց վրայ կառուցւած է մեր ժամանակի սօցիալական աշխարհահայեացքը և վերլուծել այն հասարակական իդէալները, գաղափարները, սկզբունքները, որոնք ցոլացել են արևելեան հայոց գրականութեան մէջ: Միշտ լաւ է, որ ժամանակակից սերունդը իր նախորդ սերունդների աշխատանքը կարողանայ լաւ տեսնել և արդարութեամբ գնահատել: Եթէ չլինի սերունդների այս ներքին բարոյական կապը, եթէ չլինի սերունդների հոգեկան-գաղափարական հաղորդակցութիւնը՝ քաղաքակրթութիւնը անխմտաւ տառ կը մնայ և յառաջդիմութիւնը անբովանդակ հնչելու:

Իւրաքանչիւր մի ժամանակ, իւրաքանչիւր մի սերունդ բնաշրջման երկար ճանապարհի վրայ իր գործունէութեան պտուղն է դնում: Որքան էլ համեստ լինի այդ պտուղը ինքնըստինքեան, առանձին վերցրած՝ այնուամենայնիւ նրանց համագումարն է, որ կոչւում է պրօգրէս...

Մենք կանգ չենք առնի ռուսահայ գրականութեան բոլոր ներկայացուցիչների վրայ: Այդպիսով մեր աշխատանքը չափազանց կ'ընդարձակւեր և թերևս ծանրաբեռնւէր երկրորդական մանրամասնութիւններով: Մենք կը ներկայացնենք միայն այն հեղինակների գործերը, որոնք հասարակական մտքի զարգացման ընթացքում հիմնական, կենտրոնական դեր են խաղացել: Նրանք, որոնք իբրև զուտ գեղարուեստագէտներ առաջնակարգ նշանակութիւն ունին, բայց և որոնք սօցիալական գաղափարների կազմաւորման չեն մասնակցել՝ մեր յոգւածների նիւթ չեն դառնալ: Բացի այդ՝ չենք կարող խօսել նաև բոլոր այն մատենագիրների մասին առանձին-առանձին, որոնք հասարակական իդէալներ են յղացել և քաղաքացիական երկեր արտագրել:



Մենք կանգ պիտի առնենք ժամանակաշրջանների վրայ և պիտի ձգտենք իւրաքանչիւր ժամանակաշրջանի ընդհանուր վաստակը վերլուծելու և եթէ մի հեղինակ կարողացել է իր ժամանակի հիմնական մտքերի ամբողջական արտայայտիչը լինել, իր մէջ խառնել դարի սօցիալական գաղափարներն ու հասարակական իդէալները՝ մենք, կրկնութիւններից խուսափելու համար, կանգ կառնենք միայն նրա երկասիրութիւնների վրայ և այդպէս կը գծենք ընդհանուր էությունը...

Այս բնաշրջան մէջ թերևս կարելի լինի ընդնշմարել այն հիմքերը և աղբիւրները, որտեղից սկզբնաւորում է մեր ժամանակի այս կամ այն գաղափարը։ Անշուշտ այս պարագան չի կարող նւագեցնել ներկայ սերնդի խոշոր գործը և ոչ էլ սուեր նետել այն հիմնական նւաճումների վրայ, որ իրականացրել են ժամանակակից քաղաքական-տնտեսական կուսակցութիւնները։ Ընդհակառակը, մեր խորին համոզմունքով, որքան մի աշխարհահայեցք, որքան մի գաղափար պատմական հիմնաւորում ստանայ և օրգանապէս կապի նախորդ գաղափարների հետ՝ այնքան ամուր կը լինի նա և նրա դերը, այնքան աւելի խորունկ ու նշանակալից։

Մեր ժամանակի կուսակցութիւնները այնքան աւելի կենսունակ, այնքան աւելի ժողովրդական և այնքան աւելի առողջ կը մնան, որքան աւելի պատմական հող ունենան իրենց ոտքերի տակ...

ՊԵՊԱՐԱՑԻՋՍԸ  
ԱՅԻԱՅԱԻՈՐԱԿԱՆ ԾԱՐԺՍԱՆ ՍԷՅ  
(ԱՄՄԱԿ ՎԻԷՆԱՅԻՑ)

I

Մի նոր երևոյթ է ծայր տալիս Աւստրիայի աշխատաւորական շարժման մէջ, որ արժանի է խորունկ ուշադրութեան։

«Սեպարատիզմի», ազգային անջատականութեան երևոյթը։

Նրան, ըստ երևոյթին, վերապահած է որոշ գերխաղալ այսուհետև ամբողջ միջազգային ընկերվարական շարժման մէջ։ Նա այժմից իսկ անդրադառնում է սօցիալիստական մտածողութեան վրայ նաև Աւստրիայից դուրս, այժմից իսկ բուն յուզումներ է յարուցանում ընկերվարական միջազգային գրականութեան մէջ։ Նրանով զբաղւեց փոթորկալի նիստերում՝ Կոպենհագի միջազգային Համագումարը։ Նրանով զբաղւեց, կարելի է ասել, ամբողջապէս նրան նւիրւեց և յօտ անցելում անդի ունեցած Ինսբրուկի աւստրիական (գերման-սօցիալիստ) կուսակցութիւնը։ Վիեննայի աշխատաւորական պաշտօնաթերթը և թէօրիական «der Kampf» ամսագիրը ամիսներից ի վեր ծծում են խնդիրը, այժմ էլ ահա հանդէս եկաւ «die Neue Zeit»-ը, Կարլ Կաւոցկու մի մեծ յօդուածով, նոյն հրատապ խնդրի առթիւ, որ քանի գնում աւելի և աւելի մտատանջում է սօցիալիստական պարագլուխներին։

Ինչու՞նք է խնդիրը։ Յայտնի է, որ Աւստրիան արևմտեան Եւրոպայի մէջ «դասական երկրի» հռչակ է

վայելում ազգայնական հակամարտութեան և ազգային պայքարների տեսակէտից։ Յայտնի է և այն — յայտնի էր գոնէ մինչև այս «նոր երևոյթի» աշխարհ գալը — որ Աւստրիական Սօցիալ-դեմոկրատիան (ընկերվարական կուսակցութիւնը) գտել էր միակ ու լաւագոյն բանալին ազգային յախտենական կնճռի լուծման համար, նա հռչակել էր ապակենտրոնացում և ազգերի ինքնօրինութիւն, նա իրականացրել էր նոյն սկզբունքը իր ներքին կազմակերպութեան մէջ։

Եւ նա դրանով մի հրահանգիչ օրինակ էր տալիս ուրիշ, բազմացեղ և բազմալեզու երկրների ընկերվարական կուսակցութիւններին։

Մինչ, օրինակ, Ռուսաստանի Սօցիալ-դեմոկրատիան (ուսւ մարքսիստների կուսակցութիւնը) ծրագրում էր յեղափոխական ազատ օրերում, ստեղծելու համառոտական կարգերի և մասնաւորապէս աշխատաւորական շարժման համար ամենասերտ կենտրոնացում, մինչև նա ձգտում էր ամենազօր մի կենտրոնի ղեկավարութեանը մատնել ամբողջ հսկայ կայսրութեան այլուցեղ ու այլաբառառ ժողովուրդների ընկերվարական գործունէութիւնը, — Աւստրիայի սօցիալիստները, աւելի զգաստ, աւելի զարգացած և փորձառու՝ կիրառում էին իրենց այլատարր, խայտարեղ միջավայրում ազգային ինքնօրինութեան ու ֆէդերատիւ (դաշնակցութեան) սկզբունքը, որի համեմատ՝ չեխ, լեհ, ուստի իտալացի, գերմանացի և այլ սօցիալիստ մարմիններ կազմակերպում ու գործում են՝ իւրաքանչիւրը իր ազգային շեղւական միջավայրում, իւրաքանչիւրը անկախ ինքնազուխ վարում է իր ներքին պրոպագանդն ու ամբողջ այլազան աշխատանքը, բայց և բոլորն էլ շարժակաւած են մեռում փէդերատիվ, դաշնակցական կապերով, ներկայանում են թէ ներքին թշնամու — կապիտալ լիզմի — և թէ արտաքին աշխարհի առջև՝ իբրև մեկ մարմին, միաբան, համերաշխ, նոյն փրկարար վարդապետութեան դրօշը բռնած, նոյն վերջնական նպատակին ձգտող։

Երբ ազատ օրերի մէջ Լ. Յ. Դաշնակցութեան զբաղմունքը, հրահանգւած կուսակցութեան երկարամեայ ապակենտրոնական դաւանանքից ու փորձերից, մի կողմէն էին նետում ուս սօցիալ-դեմոկրատների այդ վնասակար կենտրոնացման զառանցանքը, մեզ պատասխանում էին — միշտ նոյն սիմպլիստ, պարզունակ պատճառաբանութեամբ — թէ այդ կենտրոնացումը միակ փրկութեան խարխիւն է, թէ նա միայն կարող է ձուլել բոլոր ազգերի պրօլետարիատներին ու սօցիալիստ հասուածներին մեկ միաձոյլ, ամենազօր մարմնի մէջ, թէ նա միայն կարող է ստեղծել բովանդակ Ռուսաստանի մէջ հզօր ամբողջական ընկերվարական շարժում՝ ընդդէմ քաղաքական և սօցիալական տիրող կարգերի։

Շատ ցած էին գնահատում ուս մարքսիստները ազգայնական պրօբլեմը, նրանք կանգնած էին դեռ 1848-ի «Վոմմուխտակոն մանիֆէստի» տեսակէտի վրայ։ Դաշխատաւորը հայրենիք չունի... Շատ երեսանց էին շօշափում նրանք ազգերի միջև կատարող դարաւոր հակամարտութիւններն ու վեճերը — հակամարտութիւններ՝ մասնաւոր ի շխոզ և հպատակ մեծ ու մանր ազգերի միջև... որոնք անխուսափելիօրէն անդրադառնում են նաև աշխատաւոր դասաւոր



կարգերի հոգեբանութեան վրայ, որոշադրում են յայտնի տակտիկ, գործելակերպ:

Թ ամ անակը գալիս է միշտ նորանոր ապացոյցներով ն իրագործելու ապակենտրոնացում և ֆէդէրալիս բարոզող կուսակցութիւնների գործելակերպը:

Եւ ահա դարձեալ մի նոր փաստ:

Չեխերի սեպարատիզմը:

Ապակենտրոնական սկզբունքի վրայ կառուցած աւստրիական Սօցիալ-դեմոկրատիան մէկ կէտում միայն պահպանել էր մինչև օրս կենտրոնացում, այն է՝ արհեստակցական կամ սինդիկատային շարժման մէջ: Թէկ կենտրոնական գանձարան ու բիրօ և մէկ կենտրոնական վարիչ մարմին՝ ամբողջ Աւստրիոյ համար: Կենտրոնացումը արհեստակցական գործունէութեան մէջ պատճառաբանում է նրանով, որ այդպէս շատ աւելի դիրքին կերպով և ազդու կերպով կարելի է մղել ամբողջ Աւստրիոյ աշխատաւոր ընդհանրութեան պայքարը — գործադուլներով, բոյկոտներով և այլն — ամբողջ Աւստրիոյ կապիտալիստ ընդհանրութեան դէմ:

Եւ ահա այստեղ ևս ցցւեց ազգային մշտագալար կնճիւղը: Չեխ սօցիալիստների և աշխատաւորութեան մի մասը անջատեց համապետական կենտրոնից և իր սօցիալիստական հաւատամքն ամուր շեշտելով հանդերձ յայտարարեց, որ չեխ աշխատաւորների համար ձեռնտու և ցանկալի է՝ կազմակերպել նաև արհեստակցական գործունէութիւնը իրենց ազգային շրջանակներում: Թէ նրանք այդտեղ ևս ուզում են լինել ապակենտրոնական: Եւ նրանք ձեռակերպեցին մի շարք գանգատներ: Նրանք հասկացրին ի միջի այլոց, թէ չեխ պրօլետարիատի գրամական առատ տուրքերը համաւստրիական սինդիկատային կենտրոնի գանձարանը թափուելով՝ չեն գործադրում ցանկալի չափով ու ձևով յօգուտ նոյն չեխ պրօլետարիատի:

Այդ անջատումն էր, որ բաց արեց աւստրիական սօցիալիստների առջև տեղային բանակաւորների, վեճերի ու ընդհարումների մի նոր շրջան:

Չեխ պրօլետարիատի դերը և կշիռը ահագին է աւստրիական սօցիալիզմի կեանքում: Բօհեմիան — չեխերի հայրենիքը — ամենահարուստ արդիւնաբերական վայրերից մէկն է, տակաւին միջին դարերից: Եւ չեխ աշխատաւորութիւնը իր կրթած առաջնորդներով, իր ընդարձակ կազմակերպութեամբ և իր կուռ դիսցիպլինով՝ միջազգային սօցիալիզմի լուսագոյն վաշտերից մինն է: Այդ պատճառով և չեխական անջատականութիւնը, սեպարատիզմը այնքան յուզմունք պատճառեց դրսի սօցիալիստ շարքերին: Ն է մ է ց, չեխ սօցիալիստների պարագուիսը, որ անգամ է Միջազգային Սօցիալիստական Բիրօի, գլուխ է կանգնած այդ անջատական շարժման: Վերջինը սկսում է արդէն վարակել, տարածել: Աս վարակում է Գալիցիայի ուսիներին:

Ամենից ուժգին դարկում է ահակունակը՝ Աւստրիոյ գերմանացեղ սօցիալ-դեմոկրատիան: Նորածին «սեպարատիզմը» նա համարում է մի զարհուրելի, աւերիչ վտանգ: Նոյն ձևով է որակում և կարլ Կաուցկի: Ինչպէս որ — ասում է նա — բակունիզմը կործանեց հին ինտերնացիօնալը, այնպէս և այս սեպարատիզմը կարող է կործանել նոր ինտերնացիօնալը:

Ամենից առաջ ընկճած են անակնկալ երևոյթի հան-

դէպ՝ ծերունի Ա դ լ եր և Պ եր ն եր ս օ ր ֆ եր, որոնք երկար տարիներից ի վեր, իրրև գլխաւոր հիմնադիրներ (մանաւանդ առաջինը) աւստրիական Սօցիալ-դեմոկրատիայի, փայտայել էին այն երջանիկ պատրանքը, թէ իրենք աշողել են, վերջապէս, ստեղծել Աւստրիոյ նման Բարեկրնում ի դ է ա լ - սօցիալիստական կազմակերպութիւնը՝ ազգային և միանգամայն միջազգային հողի վրայ, թէ իրենք աշողել են, վերջապէս, դուրս վտարել սօցիալիստական շարժումների աւազանից ազգայնական բաղխումների ուրականը և օրինակ տալ աշխարհին ազգայնական կնճիւղների ամենագլուխ լուծուժով:..

Ի՞նչ է աստառը այս նոր հերձածի և ինչպէ՞ս են պատճառաբանում հակամարտ կողմերը — մենք այդ մասին հանգամանօրէն կը խօսենք: «Դրօշակ» ի առաջիկայ համարի մէջ, աշխատելով — ինչպէս ամեն ուրիշ պարագայում — կանգնած մնալ օրեկտիվ դիտողի դիրքում: Երբ խնդիրը եկու Կօպենհագի Համաժողովի առջև՝ մենք ձեռնպահ մնացինք ֆիլիստեցի սօցիալիստների հետ, մինչ գրեթէ ամբողջ ինտերնացիօնալը դատապարտեց չեխ սօցիալիստների ու աշխատաւորութեան անջատումը և նրանց ազգային ինքնօրինութեան պահանջը սինդիկատային գործունէութեան մէջ: Եւ դրան ի պատասխան՝ չեխերը յայտնեցին մի ծանր մեղադրանք — թէ ինտերնացիօնալի վճիռների մէջ՝ տոն են տալիս և ճնշող դեր են կատարում մեծ ազգերը:..

Բացարեւ իր դեօք նոր երևոյթը՝ չեխ սօցիալիստների հերձածածով ոգով ու նեղմիտ ազգայնամոլութեամբ, շօվիեզմով: Այդպէս են մտածում շատ շատերը: Դժուար թէ, սակայն, հնարաւոր լինի լիովին ու արդարամիտ բացատրութիւն տալ լոկ միայն այդ պատճառաբանութեամբ: Հարկ է փոքր ինչ ծանօթանալ իրողութեան հետ:

Յամենայն դէպս այդ վշտառիթ փաստը, որ այսօր ուժգնօրէն ալէկոծում է սօցիալիստական կեանքը աւստրիական կայսրութեան մէջ, որ վաղը թերևս կ'ալէկոծէ բովանդակ ինտերնացիօնալը — դա մի նոր ապացոյց է՝ թէ որքան կենսունակ, յամառ ու տոկուն է ազգայնական համայնակեցութեան բնազդը, թէ որքան նա ուժեղ է դասակարգային զգացումներից և թէ որքան, հետևապէս մոլորած էին, ուսուցիտ էին մարքսիզմի հիմնադիրները և նրանց մոլեռանդ յաջորդները, երբ տասնեակ տարիներ առաջ ֆիլիստեպայական անդորր ու վարդազոյն ներշնչումով գուշակում էին ազգային խտրութիւնների մօտալուստ անհետացումը տիեզերական թատերաբեմից և հոշակում էին բանւոր-պրօլետարներին իրր միանգամայն «ազատագրած» ազգայնական կուռքերի պաշտամունքից, միանգամայն համաշխարհայնացած, ապազգայնացած... «Ինտերները հայրենիք չունին»։ Ubi bene, ibi patria...

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա Յ Ո Ւ Մ

«Անակնկալները» պէտք է միշտ հաշի առնել պատմական էւոլյուսիօնի մէջ: Երկար, անդուլ, ստորերկրեայ աշխատանքից ու բնաշրջումից յետոյ, իրրև հետևանք







անձնական ուժերով... և երբեմն խիզախում է նոյնիսկ դուրս գալ իր պատշաճ սահմաններից. այդպես եղաւ 1909-ի նոյեմբերին, երբ Վ.Ի.Նեմլով II-ի մի շարք բացբերան, վասնգաւոր յայտարարութիւնները — անգլիական մի նշանաւոր օրագրողի հետ տեսակցութեան միջոցին — փոթորիկ յարուցեց ամբողջ Գերմանիայում, պարլամենտը և հանրային կարծիքը ցատուով ծռուացան սանձարձակ միապետի դէմ և ստիպեցին նրան խոնարհուել երկրի կամքի առջև...

Ահա մի շարք պատճառներ, որ առատօրէն սնունդ աւին գերմանական ժողովրդի առանց այն էլ խոր դժգոհութեան և մղեցին նրան զանգաժօրէն դէպի ձախ, դէպի սօցիալիզմ...

Այսօր, կարելի է ասել, ճանապարհը հարթած է, վերջապէս, գերմանական պարլամենտարիզմի անկաշկանդ առաջագիմութեան համար: «Պարլամենտարիզմ», բառի իսկական նշանակութեամբ դեռ ևս չկայ Բիսմարկի հայրենիքում, թէև կայ այնտեղ ընդհանուր ընտրողական իրաւունքը, Նախարարապետը, կանցլերը, որ ղեկավարում է ամբողջ ներքին և արտաքին քաղաքականութիւնը՝ ընտրուում է թագաւորի ձեռքով և ոչ պարլամենտի: Աւրիշ արևմտեան երկիրների մէջ, այսպիսի ընտրութիւններից յետոյ, այսքան ուժեղ մի ապտակ ստանալուց յետոյ՝ նախարարապետը անմիջապէս կը հրաժարւէր իր պաշտօնից և տեղ կը տար ժամանակի ոգուն աւելի համապատասխան մէկին: Սակայն... Գերմանիան գեռ այդ աստիճան չի հասունացել...

Այնուամենայնիւ հարևածը, որ հասցրին ընտրութիւնները պետական հին կառուցածքին՝ ահագին է, անբուժելի գերմանիան, յիբաւի, գարձաւ «կարմիր պետութիւն», մի շարք խոշոր կենարձներ անցան սօցիալիստների ձեռքը. Կեօլնը, գերմանական կղերականութեան Հոօմը, որ 40 տարուց ի վեր ընտրել էր միշտ կղերական պատգամաւորներ, այսօր գտնուում է սօցիալիզմի տիրապետութեան տակ: Մայրաքաղաք Բերլինը գրեթէ ամբողջապէս — գարձաւ սօցիալիստներին է... Իսկ Վ.Ի.Նեմլով Լիբկնեխտի որդին, սօցիալիստ կարլ Լիբկնեխտ ամուր հաստատուեց արքայանիստ Պոստգամուսի վերընտրուած են հսկայական մեծամասնութեամբ ընկերավարական հոչակաւոր պարագլուխները՝ Բեքէլ, Փօլլմար, Մօլկենբուր, Բերնշտայն և ուրիշներ:

Մի եզակի յաղթանակ, որ կունենայ լայն, համաբերոպական անդրադարձումները՝ Ռուսաստանից յետոյ՝ Գերմանիան պահպանողականութեան ու ֆէօդալիզմի ամենամուր բերդն է Եւրոպայում: Չը նայեա՞ծ մի շարք ազատութիւններին ու հիմնական ուժօրձներին, չը նայեա՞ծ անտեսական վիթխարի առաջխաղացութեան և բուրժուազիայի անասելի հարստացման՝ այդ երկրի ծակատագիրը մինչև օրս վարում են միջնադարեան խոշոր հողատէր աւատականները, այսպէս կոչուած իւնկերները: Նրանց ձեռքն է քաղաքական իշխանութիւնը, նրանցից է ձուլուում ամբողջ բարձր պաշտօնէութիւնը, բիւրօկրատիան, նրանք են աալիս և մինիստրները, դեսպանները, ամեն տեսակ արտօնաւոր պաշտօնների հազարաւոր թեկնածուներին: Բանակը ևս իր բացձրագոյն հրամանատարներով, իր ամբողջ սպայակոյտով կազմուում է իւնկերներից:

Դա մի հրէշաւոր տարկանոնութիւն է և վերջին

ընտրութիւնները, սօցիալիզմի և ամբողջ ձախակողմի յաղթանակը եկաւ վերացնելու այն Այդ ձախակողմը — սօցիալիստ, արմատական (fortschrittlich) և ազգայինազատական (national-liberal) — թէպէտ և ներքուստ ոչ համատարր ու միաբան՝ պիտի կարողանայ այնուհետև իր կնիքը դնել երկրի քաղաքականութեան վրայ, իրրև պարլամենտական մեծամասնութիւն (205 ընդդէմ 192-ի): Եթէ նա առժամապէս չկարողանայ դրական, խոշոր բարենորոգումներ մտցնել, յամենայն դէպս ընդունակ կը լինի արգելելու, չէզոքացնելու յետախաղաց հասանքները, սանձահարելու միապետական իւնկերների և կղերի միջնադարեան տիրաժակները:

Գերմանիայի ռամկավարացումը ուժգնապէս կ'անդրադառնայ միջազգային յարաբերութիւնների վրայ. կը նազեցնէ պատերազմի վտանգները, որոնց առատ սնունդ է տալիս Վ.Ի.Նեմլով II-ի կամարիլլան, կ'ազդէ մասնաւորապէս Ֆրանս-գերմանական յարաբերութիւնների վրայ. կը նպաստէ թերևս աւելի մարդասէր քաղաքականութեան՝ օսմանեան Արևելքում, կ'անդրադառնայ, վերջապէս — անուղղակի — նաև հիւսիսային բունպետութեան ծակատագրի վրայ... Որքա՞ն յաճախ, մահացու սազնապանների միջոցին, նիկօլայ II-ը գիմել էլիւր հզօր եղբայրակցի, Վ.Ի.Նեմլով II-ի խորհուրդներին ու աջակցութեան...

Աշխարհը գնում է — հպարտ, անսասան — դէպի բաղձալի ժողովրդապետութիւն... Էլբայի Եզերքներից մինչև հեռաւոր Ձիւնաստանը՝ քաղաքական երկնակամարը միշտ աւելի շառագունում է, պայծառանում և նրա վրայ նկարում է հսկայական, եռագոյն ծիածանը՝ Ֆրանսիական Մեծ Եղափոխութեան հոչակած երեք խոշոր նշանաբաններով՝ Ազատութիւն, Հաւասարութիւն և Եղբայրութիւն...

**ՄՍՄՈՒԼ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ**

«ԻՍՅԱՆՈՂ»-ը, արգան Եւրոպայի Հ. Յ. Դ. Աւստրոպակսի Միութեան N° 6.

Ասանողութիւնը, ի դէմս իր լաւագոյն տարրերի, շարունակում է ամենուրեք իր աւանդական կոչումը՝ լինել բոլոր գաղափարական շարժումների առաջապահ շարքերի մէջ, Թէ գործնական թոռիքների և թէ տեսական մտքի մշակութեան մէջ՝ համալսարանական տարրը իր պատկառելի տեղն ունի, — մասնաւորապէս սահմանադրութեան ու ազատութեան համար պայքարող երկիրներում՝ Ռուսաստանում, Ահաստանում, Վոլկաստում, Պարսկաստանում, անգամ հեռաւոր Ձիւնաստանում: Ռուսաստանի մէջ զինադադար է և հրապարակը նորէն գրաւոր ու բանաւոր պրօպագանդիստ է: Ահց տարի առաջ շղթայազերծուած հսկայ փոթորիկը սահմանագրութեան, ազատութեան և հողերի համայնացման նշանարաններով՝ վիժեց, սակայն վերջնականապէս չխորտակեց: Գեանայարկերում, խուլ, հեռաւոր գաւառներում, անգամ բացարձակ հրապարակօրէն, օրինական հաստատութիւնների մէջ, երբեմն նոյնիսկ Պետական Գումայում՝ նոյն նշանաբանները, նոյն ազատարար փոթորիկը որոտում է պարբերաբար խելակոյոյս բունա-



կալուածեան ականջներին և անտարակոյս, հեռու չէ ժամանակը, երբ երէկեան յաղթածը պիտի տօնէ իր յաղթանակը:

Շարժումը կտրատում է — ճակատագրական մի երևոյթ, տարաբախտաբար Ղուսակցութիւնները մեկուսանում են, իրարանչիւրը իր տաճարի մէջ մի տեսակ աղանդական նախանձախնդրութեամբ և երբեմն թւում է ձեզ — նրանց բայբայուն, անփառունակ վիճակի հանդէպ — թէ տակաւին շատ երկար պիտի սպասենք մինչև նոր գարունն Սակայն, կուսակցութիւնները ամբողջ կեանքը չեն: Նրանք յաճախ հանդիսանում են իրրև մի տեսակ շրջանակներ, որ սահմանաւած են ընդունելու, պարփակելու, ձեւաորելու գաղտը բնական, տարերային ժայթքումները, որ պիտի արտագրէ ինքը կեանքը: Լ. Յ. Դաշնակցութիւնը համեստ ուժ էր Ռուսաստանում, նախ քան 1903—905—906-ի փոթորկալի անցքերը: Բայց այդ համեստ ուժը իր համեմատաբար անձուկ շրջանակներով դարձաւ շուտով Ռուսաստանի ազատագրական հոսանքի պտտակաւելի ճիւղերից մինը: Նա աղդեց իր հայրենի կեանքի վրայ, բայց աւելի ևս աղղւեց նրանից: Նա զարկ տւեց բողոքի ու ըմբոստացման շարժումներին և շուտով ինքը կեանքը իր հզօր ու անդիմադրելի ժայթքումներով, այսպէս ասած, գերազանցեց կազմակերպութիւնը, նրա անձուկ շրջանակները ձգւեցին, լայնացան, ընդունելով իրենց մէջ — յանուն մեծ, ժողովրդական, ազատարար գաղափարի — նորանոր զանգուածներ, երիտասարդութիւնն ու մտաւորականութիւնը, ամբողջ տանջող ու պայքարող ժողովուրդը:

Տխրալի է, անտարակոյս, կուսակցական ուժերի պառակտումն ու մշտական հակամարտութիւնը, բայց նա բնաւ յուսահատեցուցիչ չէ: Թամը կը հասնի, երբ արթնացող կեանքի տարերային թափերի տակ՝ այդ վտիտ, բայբայուն կազմակերպութիւնները, — ս. ռ. ականքը, ս. դ. ականքը և ուրիշները — նորէն կը դառնան մի մի ահարկու իրաւարարներ և կացութեան հրամանատարներ: Առայժմ նրանք վերակազմուում են, մաքրագործուում և ոյժ են տալիս պրօպագանդին: Գաղտնի անլէզալ գրականութիւնը նորէն ահագին ծաւալ է առնում: Ակզբունքների, ծրագիրների վերաբնութիւն, երկրի անցեալի ու ներկայի ուսումնասիրութիւն, վիճաբանութիւններ տեսակետների, աշխարհահայեացքների և պայքարի մեթոդների շուրջը — այդ բոլորը վերստին տիրում է հրապտրակին:

Լ. Յ. Դաշնակցութիւնը սկզբից ի վեր եղել է այն միակ կազմակերպութիւնը, որ անձնատուած կենդանի գործի, մշտնջենական տենդային կուրի մտահոգութիւններին՝ ամենից քիչ է զբաղւել գրաւոր և մանաւանդ տեսական պրօպագանդի խնդիրներով: Դա եղել է նրա ուժը և թուլութիւնը: Վերջին տարիներս, կուսակցութիւնը աշխատում է որոշ գոհացում տալ և այդ զգալի կարիքին: Գարձեալ, անշուշտ, կազմակերպութեան մտաւոր ուժերի ահագին մեծամասնութիւնը հարկադրւած է ներքելու գործնական կեանքի ցաւոտ անհրաժեշտութիւններին, բայց այլ ևս չկայ նախկին թեթեւ, փոքր ինչ արհամարհոտ վերաբերմունքը դէպի տեսական խնդիրները, — ևս առաւել, որ այդ կարգի խնդիրներով սկսում է հետաքրքրուիլ և տարանալ անգամ թիւրքահայ մտաւորական երիտասարդութիւնը: Վերջին

ընդհանուր ժողովն ևս չեշտեց այդ կարգի խնդիրների արծարծման անհրաժեշտութիւնը:

Եւրոպայի յղաշնակցական ուսանողութիւնը մի երկու տարուց ի վեր ստանձնել է նախանձելի պաշտօն՝ իր ուժերի չափ նպաստելու կուսակցութեան որդեգրած գաղափարների մշակութեան: Եւ նա տանում է իր գործը գոհացուցիչ ձեռնհասութեամբ:

Ուսանողական նախկին մարմինը, որի սկզբնական կորիզը կազմակերպւել էր 1897-ին Հայդեղերգում, չէր կարող ապրել աւելի երկար և լուծւեց: Նա կատարել էր մի յայտնի գործ, դուստելի և անհրաժեշտ գործ: Հայոց պատմութեան ամենամալը շրջանում — խիւրքահայաստանի տագնապի միջոցին — նա ներքել էր հայկական դատի պրօպագանդին: Եւրոպայի մէջ, առանց կուսակցական խտրութիւնների, առանց ներքին հակամարտութեան:

Այդ խտրութիւններն ու հակամարտութիւնը Եւրոպայի Հայ Ուսանողութեան ծոցում ուժով շեշտւեցին Ռուսաստանի յեղափոխական շարժումներից յետոյ: Հայոց կեանքի հրապարակում խիստ որոշ գունաւորութեամբ երևան էին եկել կուսակցութիւնները և այդ իրողութիւնը, բնականաբար, պէտք է անդրադառնար ամենազգայուն տարրի՝ ուսանողութեան վրայ: Հերթական Համագումար-ժողովի մէջ կատարւեց անխուսափելի պառակտումը, ուսանողութեան ալլաղաւան տարրերը մնացին ցիր ու ցան, անկազմակերպ, միջդեռ «Դաշնակցութեան» ը յարող տարրերը շարունակեցին իրենց ուրոյն կազմակերպւած գոյութիւնն ու գործունէութիւնը: «Եւրոպայի Լ. Յ. Դ. Ուսանողութիւն» անւան ասկ և ունեցան այնուհետև մի շարք տարեկան համագումարներ:

Այդ միութեան օրգանն է ահա՝ «Ուսանող»-ը: Մեր առջև դրւած է նրա № 6ը, 263 էջից բաղկացած, աւելի ճոխ և բազմակողմանի, հետաքրքրական, քան նախորդ համարները: Լեզուն ևս բաւականաչափ յղկւած է, գերծ օտար ու դժւարամարս բառերի ու դարձւածների կուտակումներից կարդացւում է ընդհանրապէս դիւրութեամբ ու հաճութեամբ. տպաւորութիւնը միանգամայն գոհացուցիչ է:

Ի՞նչ է «Ուսանող»-ի նպատակը: Նա պարզւած է փոքրիկ նախաբանում:

«Յենւած դաշնակ. գաղափարական ուսանողների գիտակցութեան վրայ, նա սրանից յետոյ ևս — և աւելի ընդարձակօրէն — պիտի ջանայ պարզաբանել Լ. Յ. Դաշնակցութեան հիմնական սկզբունքները, ուսումնասիրել հայկական միջավայրի կարիքները և ընթերցողներին տեղեակ պահել միջազգային աշխատաւորութեանն առաջնորդող սկզբունքների ու գործելակերպի յաղթանակներին:

«Ուսանող»-ը կունենայ նաև գրական բաժին, որտեղ ց'արդ հրատարակւած մատենախօսութիւններից բացի, կը հրատարակին ընկերավարական գրական երկեր — լինի ինքնուրոյն թէ թարգմանական — աշխատելով հնարաւոր չափով զարկ տալ այդ նոր հոսանքին, հակադրել ընկերավարականը՝ բուրժուականին և գրական գեղարւեստական տարրեր հոսանքների բնագաւառական տեսութիւններով ջանալ



ամրապնդել իր տեսակետները, մասնանշելով տիրող գրական հոսանքների վնասակար կամ օգտակար ազդեցութիւնը:

Գիտակ մեր պարտականութեան, մեր համեստ ուժերի շարժումը պիտի աշխատինք օգտակար լինել թէ մեր փայտաշատ կուսակցութեան և նրա հետ միասին բովանդակ աշխատաւորութեան և թէ գիտական հետաքրքրութիւն ունեցող հայ մտաւորականութեան:

Խիստ շահեկան նիւթ է ընտրել ընկեր Արտուրը. ինտելիգենցիան և կուսակցութիւնը:

Ճիշտ մտքեր շատ կան այդ յօդուածի մէջ և իրարմար հեղինակը խարանուժ է անկուսակցական ուժեղացումը, անհեթեթ երևոյթը ինտելիգենցիայի հանդէսում, շեշտելով կուսակցական ուժի և իրրե գրական, անխուսափելի և արգասաւոր անհրաժեշտութիւնը: Լաւ է անուժ մեր ընկերը, զատելով ինտելիգենցիայի (մտաւորականութիւն, կրթուած տարր) ընդհանուր հասկացողութիւնից՝ «գաղափարային ինտելիգենցիայի»՝ իմաստը ըստ ուսական սովորութեան: Ճշմարիտ մտաւորականութիւնը «ժողովրդական գործին ծառայող մասն է»: Ռուսները Լավրովից ի վեր ընդունել են իրրե ոյոչումն այդ ճշմարիտ ինտելիգենցիայի՝ «ըննադատօրէն մասնող տարրը»: Գա, թերևս՝ աւելի իրապատշաճ որոշումն է՝ «Գաղափարական» ստորագրելին, սակայն չպէտք է նոյնացնել «Գաղափարական»-ին և «Կուսակցական»-ին: Ռուսաստանի, ինչպէս նաև բոլոր երկրների պահպանողական մտաւորականութիւնը նոյնպէս ունի քաղաքական և կուսակցական բնոյթ, սակայն չի կարելի նրանց ևս ընդունել, իրրե գաղափարական և մտնաւանդ «ժողովրդական գործին ծառայող» մտաւորականութիւն:

Ձեռք կարող նաև համաձայնել մեր ընկերոջ հետ, երբ նա հակադրում է մասսան (զանգաժը) և ինտելիգենցիան, շեշտելով, որ իրր թէ մասսան երիւր գրգռող քաղաքական պայքարների մէջ գրեթէ միայն «կոնկրետ շահ» է, մինչդեռ գաղափարական ինտելիգենցիային «մղում է գաղափարը»: Իրաւ է անշուշտ, որ ժողովրդային զանգաժները առհասարակ չեն ցոյց տալիս մեծ գիտակցութիւն — այդպէս է եղել մանաւանդ անցեալում — սակայն ճիշտ է և այն, որ այդ զանգաժները յաճախ վառելի, ըմբոստացել են՝ ոչ սոսկ նիւթական շահից զրդուած՝ այլ յանուն մի բռնաբարւող գաղափարի, հայրենիքի ու հայրենասիրութեան, կրօնի, լեզուի, եկեղեցու... Պատմութեան մէջ անուրանալի են այդ վայրկեանները: Նոյնիսկ մեր մօտիկ անցեալի փոթորիկների մէջ — եկեղեցական գոյրերի յափշտակութեան միջոցին — մեր ժողովրդի հոգեբանութեան ու մտայնութեան մէջ որոշ գեր ունէր այդ գաղափարային, իրէօլօգիական մօմենտը:

Միւս կողմից՝ գաղափարական ինտելիգենցիայի մի մասը — այդպէս կոչուած ինտելիգենցիայի պրօլետարիատը (ուսուցիչներ, գրողներ, մանր-մուկ պաշտօնեաներ, հասարակական այլ և այլ գործիչներ) նետուում են սովորաբար քաղաքական կուսակցութիւնների ու շարժումների մէջ՝ դրդուած ոչ միայն գաղափարից, այլ և նիւթական թշուառութիւնից, «սասմարային» շահերից, Ըահն ու գաղափարը դժար է այդպէս բա-

ցարձակ ձևով իրար հակադրել — նրանք խճողում են, հիւսում անբաժանելի և անշարժելի կերպով պատմութեան խորունկ պրօցեսի մէջ: Մի տեղ մէկն է գերակշռում, մի այլ տեղ միւսը: Եթէ կարելի է գաղափարը ձանաչել իրրե միակ շարժիչ ուժ որևէ հասարակական կատեգորիայի, եթէ կան մարդիկ, որոնք գլխակորոյս, à corps perdu, նետում են սօցիալական ու քաղաքական մրկածուփ յորձանքները, այրում են թուր նաւերը իրենց ետևից, հրաժարում են իրենց դիրքի ու դասակարգի արտօնած վայելքներից, իրենց գրկած գաղափարի հրամայական թելադրութեամբ, եթէ կան անհատներ, որոնց մէջ ոչ միայն նիւթական ակնկալութեան, այլ և փառքի ու եսի ամեն տեսակ մտահոգութիւններ նսմանում, հալում են գաղափարի բոցավառու հրգեհոյ ձառահայթներում — նրանց մէջ են, անտարակոյս, համեմատաբար փոքրամիւ այն երջանիկները — Բակունյներ, Լավրովներ, Պրեսսանսէներ — որոնք ինչելով բարեկեցիկ դասակարգերից, գրկում են խանդավառութեամբ աշխատաւոր ու չարբաշ ժողովուրդների դատը և պատրաստ են ամեն վայրկեան զոհարելու արգարութեան ու հաւասարութեան յաւիտենական գաղափարի համար:

Եւ նրանք չեն, ի հարկէ, միակ երջանիկները: Բոլոր դասակարգերի մէջ, բոլոր երկրներում, պատմութեան բոլոր դրուագներում դուր կը հանդիպէք այդ գործիչներին, որոնց գերագոյն շարժիչ-լծակը Գաղափարի շահն է, նոյնպէս «կոնկրետ շահ»... Կը հանդիպէք այդ մարուր գաղափարականութեանը՝ թէ ընտիր, նրբաբարոյ, ապագասակարգային ինտելիգենցիայի և թէ կոպիտ մասսայի մէջ:

Կարելի է ընդհանուր առմամբ ճիշտ համարել ընկեր Արտուրի այն մտքը՝ թէ յետամնաց երկրներում ինտելիգենցիան շատ աւելի բարձր է մասսայից, թէ երկուսի հակադրութիւնը շատ աւելի խորն է, բան առաջաւոր, քաղաքակիրթ ազգերի մէջ... Թէև, օրինակ, ժամանակակից թիրբական ինտելիգենցիան իր մասնութեամբ շատ էլ տարբեր չէ մահմեդական զանգաժներից (մի կողմն ենք թողնում անհասական բացառութիւնները):

Բայց չենք կարող ընդունել մեր ընկերոջ այն թեգիսը, որով նա յայտարարում է, թէ «գաղափարական կամ քաղաքական ինտելիգենցիան» աւելի զօրաւոր է յետամնաց երկրներում, բան էւրօպայում, թէ արևմտեան ազգերի մէջ նրա թափը թուլանում է, թէ նա ընկնում է մասսայի վիճակի մէջ... Affirmation trop absolue! Ըեշտը շատ է բացարձակ և վճռական: Եթէ նոյնիսկ ճիշտ լինէր, թէ այժմեան Ռուսաստանի գաղափարային ինտելիգենցիան իր թափով ու պայքարի անդով բարձր էր դիցուք Ֆրանսիայի գաղափարական ինտելիգենցիայից, դարձեալ անկարելի էր այդպիսի ընդհանրացումն անել և տարածել իրողութիւնը բոլոր յետամնաց երկրների վրայ: Բայց նոյնիսկ ուսական ինտելիգենցիան չի կարող այդպիսի յաւակնութիւններ ունենալ: Մի երկու տարի սրանից առաջ ուս գրող Մերեժկովսկի Պարիզում մի պտոյտ անելուց, ժօռէսներին ու Անատոլ Ֆրանսներին այցելելուց յետոյ, գրում էր «Բէ»՝ թերթի մէջ իր տպաւորութիւնները և արհա-



մարհոտ շեշտերով էր խօսում Ֆրանսիական սօցիալիստ ինտելիգենցիայի «մեջանութեան» \*) մասին, հակա-ինտելիգենցիայի «մեջանութեան»... Դա դրելով այն իր հայրենի մասնորականութեան... Դա մի տարածած մտորութիւն է՝ և ուսանելի մի ոչ-տեղին մի տարածած մտորութիւն է՝ և երևան հանել իդէալիզմի ու անձնագոհութեան բովանդակ պաշարը, որ թելադրում է կուլ մղել, անգույ յուսահատ, թէկուզ և անհասար մի կուլ խեղդող բունակալութեան դէմ, որի հանդէպ իր ժամանակին արեւմտեան ինտելիգենցիան ծառայել է որպէս առիւծ—նոյնիսկ, ասում ենք, այժմեան ծանր, տագնապալի, յեղափոխական վիճակում, դժւար է ասել, թէ կուլ տենդի, թափի, աւիւնի տեսակէտից՝ ուսական պայքարող ինտելիգենցիան բարձր է, «զօրաւոր է» Ֆրանսիականից, իտալականից, անգլիականից... Ուս սօցիալիստ ինտելիգենցիայի գաղափարական թափքները ուրացող չենք, բայց և չենք կարող մոռանալ նրա թանձր, սուերային կողմերը, որոնք սակաւ շնչաստեցին Յեղափոխութեան վիժումին:

Դժւար է, վերջապէս, համաձայնել, թէ «Ռուսաստանն այսօր սօցիալիզմի ամենաուժեղ երկիրն է»: Ցարերի երկրում, ճիշտ է, վերջին մի շարք տարիներում անօրինակ սրացք է առել ընկերվարական շարժումը— թէ տեսականի, թէ գործնականի մէջ—բայց մենք գիտենք ընկերվարականօրէն աւելի ուժեղ երկիրներ՝ Գերմանիան, Ֆրանսիան, Բելգիան:

\*

Հետևում են մի շարք ուրիշ տեսութիւններ, որոնց նիւթն են՝ նոյնքան լուրջ ու այժմէական խնդիրներ: Ընկեր Վ. Տ. մի ընդարձակ յօդուածի մէջ քննում է հայ գրականութեան անշուտիւնը՝ հայ յեղափոխական շարժման հետ: Քիչ անգամ են շօշափել նման հարցեր մեր տեսական գրականութեան մէջ և իբրև փորձ՝ Վ. Տ.-ի վերլուծումը արժանի է ուշադրութեան: Հայկական վերածնունդը պատրաստող գրողների համաստեղութեան մէջ՝ Միքայէլ Նալբանդեանը, հարկաւ, արժանի է աւելի խոշոր տեղ բռնելու, մասնաւոր Ստեփաննոս Նազարեանի հանդէպ: Վերջինս, կատարելով հանդերձ իր որոշ դերը, յարգելի դերը նոյն վերածնութեան պատմութեան մէջ, իր «Հիւսիսափայլ» ով— ունեցել է բաւական դժգոյն ու անհրապոյր հրապարակաստեղութիւն և եղել է խիստ շեշտած հակայեղափոխական մտայնութեան ու խառնածքի տէր: Չափազանց նահապետական են նրա հասկացողութիւնները համաշխարհային յեղափոխութիւնների, մասնաւորապէս 1789—93-ի Ֆրանսիական մեծագոյն վերիվայրումի մասին: Նա գիտում է այդ աշխարհադրող անցքերը ուս ու գերման պաշտօնական պատմագիրների ակնոցներով և միանգամայն բացասական դիրք է բռնում, խորանելով Պանտոնների և ներքողելով Լուրդօփիկոս XVI-ին:

Դժւար է ասել, թէ ո՞վ է ում ստեղծագործութիւնը՝ Նալբանդեանը «Հիւսիսափայլ» ի, թէ «Հիւսիսափայլ» ը Նալբանդեանի: Մի բան, սակայն, անտարակուսելի է. «Կոմս Էմանուէլը» հոգին էր Մօսկուայի հայ անդրանիկ հանդէսի և որքան աւելի ենք գիտում մեր

հայկական հրապարակագիրներին նրանից առաջ և նրանից յետոյ՝ այնքան աւելի է բարձրանում մեր աչքերում Միքայէլ Նալբանդեանի համակրելի, սիրելի պատկերը: Միայն... չենտենք նրան անարխիզմի, անիշխանականութեան ծոցը: Բակունինի, Հերցենի, Օգարեօփի և այլ ուսու եւրոպացի դէմքերի հետ շփուելով ու նրանց ստեղծած գրականութեանը ծանօթանալով, Նալբանդեան իւրացրեց— թէև փոքր ինչ խոպան ձևով— սօցիալիզմի և ոչ անարխիզմի տարբերները: Ընկեր Վ. Տ. գրականապէս չի շեշտում այդ, այլ միայն ընդունում է իբրև հիպօթէզ, ենթադրութիւն:

Մի փոքրիկ դիտողութիւն ևս. զգուշանալու է գրապաշտ փիլիսոփայութեան հիմնադիր Օգիւստ Կոմտի մտցնելու «գասակարգային պայքարի» ուսմիտանների շարքը:

«Անհատականութեան» և «ընկերվարութեան» յարաբերութիւնները քննում է Գրսեցիին: Իրաւամբ հաստատում է, որ երկու գաղափարները հակոտնեաներ չեն և որ ընկերվարութեան կամ համայնականութեան վարդապետութիւնն ևս իր ձգտման վերջնական նպատակակէտ ունի՝ մարդան հաստի բազմակողմանի զարգացումն ու բարգաւաճումը: Այլ բան է, ի հարկէ, Անհատականութիւնը կամ Ինդիվիդուալիզմը, մի բուրժուատիկ փիլիսոփայի, մի Սպենսերի կամ Նիչչէի ըմբռնումով: Այդտեղ նա վերածուում է խորունկ անհասարակութեան ճիշտ է նկատում նաև Գրսեցիին, որ ընկերվարութեան սիստեմը չի կարող երբէք հարթել, ջնջել մարդանհատների բնական անհասարակութիւնները— մտքի, մարմնի, հոգու և խառնուածքի— որ ուսմկավարացումն ու հասարակութիւնը չեն կարող յանդիլ լծացման, ամուլ միակերպութեան ու ստրկութեան, ինչպէս յայտարարում են բուրժուա թէօրետիկոսները, այլ որ ընկերվարութեան, համայնականութեան սիստեմի մէջ ևս կը փթթւին— և աւելի մեծ դիւրութեամբ ու առատութեամբ— անհատական ուժերը, ազանդներն ու հանճարները, մեծ մարդիկ, գերմարդիկ: Աւելի մեծ դիւրութեամբ ու առատութեամբ՝ բանի որ միանգամ ընդմիշտ վերացած կը լինին ժամանակակից հասարակութեան հիմքը կրծող շարիքները, անտեսական և ամեն ուրիշ տարկանոնութիւններ, որոնք խեղդում, կաշկանդում են հարիւր միլիոնաւոր զանգուածներին. աւելի մեծ դիւրութեամբ ու առատութեամբ՝ բանի որ մարդկութիւնը միանգամ ընդմիշտ ազատուած կը լինի նիւթական կարօտութեան պատահաններից, ներքին արեւնահեղ բաղխումներից, բիրտ ու դաժան գոյամարտի անհրաժեշտութիւններից և կուղղէ իր ներդաշնակ ճիգերը, իր գոյութեան պայքարը միակ թշնամու— բնութեան դէմ...:

Վուսակցութեան կեանքի կարևոր խնդիրներ է շօշափում և Հրազդանի յօդուածը՝ «Մեր գործը և նրա նախապայմանները», որ տակաւին շարունակելի է: Մի թեթև վրիպումն— և այդտեղ, Անարդար կը լինէր այն աստիճան սահմանափակել ժամանակակից սօցիալիզմի հիմնադիրներին ցանկը: Սօցիալիզմը երկու դէմք ունի. նա միանգամայն շարժումն է և վարդապետութիւն: Իբրև շարժում, իբրև որոշ գաղափարների գործնական կիրառութիւն, նա հիմնած է,

\*) Գուեսիկ բողոքնութիւն:



նախաձեռնած յեղափոխութիւնների կլասսիկ հայրենիքում—Փրանսիայի մէջ... Հիմնած է ընկերութեան դաւադրութիւններով, ապստամբութիւններով, գիտատեւեռով, ապա և մասսային գործադուլներով Այդ սօցիալիզմի հիմնադրութեան հետ Գերմանիան անջուրկ չունի XIX դարի սկզբում նա դեռ գրեթէ բոլորովին մի խոսքի միջոցով էր՝ ոչ միայն սօցիալական, այլ և բաղադրական-սահմանադրական գաղափարների տեսակետից: (Անտեսում ենք ազգային-ազատագրական շարժումները և կղզիացած անհատական ժեստերը յանուն բաղադրական յեղաշրջման):

Սօցիալիզմը, իբրև դօքտրին, վարդապետութիւն, ժամանակակից սօցիալիզմը, դասակարգային պայքարը շեշտող և դրատող սօցիալիզմը՝ չի հիմնած միայն Գերմանիայում Հիմնադիրների շարքումն են Փրանսիայի մեծագոյն յեղափոխական դասակարգից մի բանիսը.— Գրակիուս Բարբոֆ, Օգիստ Բլանկի, Վիկտոր Կոնսիդէրան, դեռ չիտեղով ուրիշների մասին: Ճիշտ է, նրանք Կարբոսի պէս որոշ կերպով չեն ձևակերպել դասակարգային շերտաւորումների արժէքը և դասակարգային պայքարը, սակայն այդ դեռ չի նշանակում հիմնադիր չլինել սօցիալիզմի: Կեր ընկերը չի ասի, ի հարկէ, թէ ժամանակակից սօցիալիզմը միմիայն մարքսիզմի մէջ է, նա չի էլ յանդիմանր ու խոշոր «ուղղագրականներ» սիրած եզրակացութեան՝ թէ սօցիալիզմը գիտութիւն դարձաւ՝ միայն «անտեսական մատերիալիզմ» և «յաւելեալ արժէքի» գիւտով: Որ մարքսիզմը և մասնաւորապէս «տնտեսական մատերիալիզմը» դեռ հետո ևս չունի գիտութեան հետ նոյն անաւան (Identifizierung)—այդ մասին վիճում են այսօր միայն սօցիալ-դեմոկրատները ուղղափառ դոգմատիկների բանակում: Անգամ Էնգելսը դժուար թէ այդքան նեղցնէր Փորմուլը, երբ հարցը դարնրան՝ թէ ո՞վ է հիմնել ժամանակակից սօցիալիզմը և ի՞նչ տարրերների վրայ է նա հիմնած: Ապացոյց՝ թէկուզ նրա «Գիտական սօցիալիզմի» առաջին տողերը:

Կան ուրիշ տեսութիւններ ևս «Աւստրո»ի մէջ, բաւականաչափ մշակած: Յիշենք մեր թիւրքահայ ընկեր Տ. Խ.—ի յօդածը բնագիտական աշխարհից՝ «Պատկանութիւն և ինքնապաշտպանութիւն» խորագրով: Բնագիտական թէորիաներից և անասնական տեսակներից չեկելով նա յանգում է այն եզրակացութեան, որ «ինքնապաշտպանութիւնը տիեզերական օրէնք է. և այնտեղ, ուր նա կը դադրի... անէացման գիրկը կը նետէ թողլ, անպատրաստ կենդանական տեսակները, մարդկային հասարակութիւնները, պետութիւնները, մանր ազգութիւններն ու անհատները»:

Հետաքրքրական է «Աւստրո»ի ամբողջ յօդածաշարը: Ժամանակը և տեղը չեն թողլ տալիս աւելի երկար կանգ առնելու: Կուզէինք վերջացնել մի ընդհանուր և ընկերական դիտողութեամբ: Ցանկալի է՝ աւելի ևս ժողովրդականացրած, մաշեցիկ ձևով ներկայացնել հասարակագիտական և բնագիտական այնքան բարդ խնդիրները: Ցեղ-տեղ նոյնիսկ անհրաժեշտ է սկսել այբուբենից: Այդպէս օրինակ՝ սխալում է, ան-

տարակոյս, Գրոսեցին, երբ նա «աւելորդ է համարում կանգ առնելու նիշէի անհատական վարդապետութեան, գերմանացի տեսութեան վրայ, քանի որ նրա կարծիքով «դա համարեա ծանօթ մի վարդապետութիւն է...» Եթէ այդ տեսակ խնդիրները այդ աստիճան ծանօթ լինէին մեր միջավայրում, գուցէ «Աւստրո»ի և այլ նման հրատարակութիւնների պէտք էլ չունենայինք: Այդպէս չէ, տարաբախտաբար: Եւ քանի որ հանդէսը ուղղում է իր խօսքը մի անպատրաստ լսարանի (չնոտանանք և մեր թիւրքահայ դպրոցական երիտասարդութիւնը), քանի որ «Աւստրո»ը յայտնում է միանգամայն և «Աւստրո»ի դերի մէջ, ապա պէտք է որ նա առաջդրէ իր թեզիսները ըստ կարելոյն պարզ ու մատչելի:

\*\*\*

«ՆՈՒ ԽՅՄԻ» ԵՒ «ՆՈՒ ԿՆԱՆԻ»

Երկրի մէջ ևս մերթ ընդ մերթ լոյս են տեսնում հրատարակութիւններ—մեզ համակիր կամ հակառակորդ — որոնք գրեթէ բոլորը ձգտում են գիտականփիլիսոփայական գունաւորումն ընդունել՝ մասամբ ապրելու մասհոգութեամբ, մասամբ էլ օրինաւոր ու գովելի ցանկութեամբ՝ յազեցնել ըստ կարելոյն հարցասէր երիտասարդութեան ծարուր, գաղափարային հոսանքների մէջ տարուբերող երիտասարդութիւնը:

Բագուում նորերս լոյս տեսած երկու վերոյիշեալ հրատարակութիւնները մեզ հակառակորդ են. արծարծում են մի շարք յօդածների մեջ թէորիական մարքսիզմի գաղափարները և ձգտում են նրանցով լուսաբանել մեր հայկական իրականութեան կնճիւղները:

Համակրելի և խրախուսելի է մեր երիտասարդ մտաւորականութեան թէ «համախոհ» և թէ «հակառակորդ» հաստատման այդ եւանջը: Լաւ է՝ որ շարունակում են ոգևորել ու որոնել, արձագանք տալ ժամանակակից հոսանքներին և թողլ չտալ, որ գաղափարային կեանքը մեռնի, միտքը թմրի բոնակալութեան արձիճային ճընճման տակ:

Այդ երեւոյթը մեր ներկայ մուսլ իրականութեան մէջ ինքնին այնքան ուրախալի է, որ մենք շատ էլ չենք վշտանում այն տենդոտ յարձակումներից, որ տեղում են՝ երկու յիշեալ հրատարակութիւնների մէջ՝ դաշնակցական գրականութեան, մասնաւորապէս «Հոսանքներ»ի ու նրա հեղինակի գէմ, այն հիմնական խեղաթիւրումներից, որոնց ենթարկում է այդ գրածքը և որոնք իրենց սպեցիֆիկ բնոյթով չէզոքացնում են պատասխանելու ամեն մի հնարաւորութիւն: Ի՞նչ ասել կուզէ՝ մենք կը բաղձայինք—և մեր վաղեմի բաղձանքն է այդ—որ գրելու և պայքարելու տենդի հետ միասին՝ փոքր ինչ բարձրանար մեր երիտասարդութեան բաղադրական հասունութեան մակերեւոյթը, փոքր ինչ ազնւանային պօզեմիկական մեր բարբերը:

Ճիշտ է, «տնտեսական մատերիալիզմը» ժխտում է գաղափարների, բարոյական հասկացողութիւնների ուրոյն, անկախ գոյութիւնը և գնում է նրանց մշտնջենական կախման մէջ նիւթական, դասակարգային շահերից ու յարաբերութիւններից.—այնուամենայնիւ, որոշ սկզբ-



բունքներ էտիկայի հրապարակում— շիտակութիւն, ազնուութիւն — պէտք է լինին պարտադիր՝ նաև հայ մարքոսիտների համար: Թէ չէ, ճշմարիտ, գրականութիւնը կորցնում է ամեն համ ու հրապարկ և մեր աճող սերունդը, ի տեղի գերազանցելու նախորդին, մանրանում է նրա պէս \*):

\*\*

«ՓՐԿԻՉՆԵՐ, ԻՆՆ ԿՈՐՆԱՆՆԻՉՆԵՐ»  
I. Մարտովի

Հ ե բ ձ ւ ա ծ ր շարունակում է իր անմաքուր և աւերիչ աշխատանքը ուսական Սօցիալ-Դեմոկրատիայի մէջ: Գրա մի տխուր վկայութիւնն է Մարտովի այս գրքովը: Մի սարսափելի ամբաստանագիր կուսակցութեան այսպէս կոչած «մեծամասնական» հատուածի դէմ: Ինչպէս յայտնի է, Լօնդոնի համագումարից ի վեր (1906 թ.) կուսակցութեան կենտրոնական մարմինները գտնուում են մեծամասնականների, բոլշեփիկների ձեռքում: Եւ ահա մի քանի տարի շարունակ երկու հատուածները, որպէս երկու հակամարտ աղանդներ, մեծամարտում են ու թափում իրարու վրայ անլուր ամբաստանութիւններ:

«Փոքրամասնականները (մենչեփիկները) ուզում են իսպառ կազմալուծել կուսակցութիւնը, լիկվիդացիայի ենթարկել նրան և կոմպրոմիսի ու հաշտութեան քաղաքականութիւն սկսել ցարական կառավարութեան հետ» — այսպէս են ասում մեծամասնականները (բոլշեփիկները):

«Բոլշեփիկները ուզուրպատօրներ են, նրանք ապօրինի ձևով, կեղծ մանդատներով զաւթել են կուսակցութեան կենտրոնները, դաւանում են անարխիստական կիկլոսի, հանդիսանում են արկածախնդիր աղանդաւորներ, նպաստում են զրանով սեփականի, փճացնում են պրօլետարիատը, կործանում են սօցիալ-դեմոկրատիան»:

Այդպէս էլ ասում է Մարտով բոլշեփիկների աղանդը կործանեց աուսական սօցիալ-դեմոկրատիան: Եւ նա ողբում է, հեծկրում այդ անկումի աւերակների վրայ: Եւ որակում է կործանիչներին (Լենինի թւը) ամենավատ ածականներով՝ լակէյներ, խաբբեաներ, զրամաշորթներ...

«Անարխիստ-բլանկիզմ»... Ուշագրաւ է մանաւանդ այդ մեղադրանքը: Նրանի չէ՞ր, թէ փոքր ինչ, յիրաւի արծարծւէր անարխիստական, «պատամբական» մեթօդը ուս ս. գ. ների կրաւորական շարքերի մէջ... Ի՞նչ են անում բոլշեփիկները: Նրանք բոլջօտ են հրատարակում պետական Գումայի դէմ, համարում են այն աւելորդ ու վնասակար, և ուզում են յետ կոչել այդ Գումայի ս. գ. պատգամաւորներին: Նրանք բարոզում են նաև՝ մանկ «գետնի տակ», դիմել իլլէգալ, անօրինական գործունէութեան, երբեմն էլ խրախուսում են (խօսքով միայն) ռազմական տակտիկը — և ահա այդ համեստ պատգամները:

\*) Պէտք է նաև դիտել տալ մեր եռանդուն հայրենակիցներին, որ մենք տակաւին ապրում ենք բուրժուական իրաւակարգի մէջ, որ մասնաւոր սեփականութիւնը զեռ ևս գոյութիւն ունի՝ ոչ միայն իրերի, այլ և գրական անունների վրայ: Այդ տեսակետով մենք բնաւ պատես չենք տեսնում, երբ նորածին հանդէսի խմբագիրներից մէկը ստորագրում է իր էջերի տակ՝ *Էջօ*, միւսը՝ *Ահուսի* (վերջինիս բովը մի «Գ», որ չի կանխի շատերի պատրանքը):

հանքների համար նրանք որակում են «անարխիստներ», «բլանկիստներ», «դաւադիրներ»... Մարտովների, Պլեխանովների ու Երեսկոզների կողմից, որոնք ստեղծում են դաւադրական, յեղափոխական մեթօդներից և սպաւիւնում են խաղաղ, օրինական տակտիկին... թէկուզ և պէտք լինի սպասել մինչև ուսական նոր գարունը՝ հարիւր տարի ևս:

Ողբալի է: Մենչեփիկները իրօք կոււում են ուրականների դէմ Սօցիալ-դեմոկրատիան, իր բոլոր թմերով ու հատուածներով, ուսական Սօցիալ-դեմոկրատիան՝ շարունակում է, շարունակելու է միշտ իր վազեմի դաւանանքն ու տակտիկը — էսպէս կրաւորական, խաղաղաւաղադրական — և դարձեալ նա չէ, հաւանականօրէն, որ պիտի սկսէ Ռուսաստանի գալոց վերիվայրումը:

Երկու թմերի անվերջ պայքարը թողնում է ճնշող սպաւորութիւն: Ամենածանր ամբաստանութիւններ ենք կարգում Մարտովի բրօշուրի մէջ և ամենից ճնշողը գրում ա շ ո թ ու թ ե ա ն մեղադրանքը: Մեծամասնականների զեկավար անհատներ, ասում է նա բարձրաձայն, իւր ա ցր ե լ են կուսակցական գործերի համար ներաբերած գումարներ...:

Եւ ինչպէս չեն խնայում այդ մարդիկ իրենց որդեգրած գաւթի միլիոնաւոր ներկայացուցիչներին, խեղճ ու ընկճած աշխատաւոր ընդհանրութիւնը, որ ներկայ մտայլ չըջանում միաբանութիւն և խրախոյս է սկնկալում իր մտաւոր առաջնորդներից...:

Վ.

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Ի Թ Ի Ի Ն

Պոլսոյ Կեդր. Կոմիտէի ասուցած է՝  
1908 յուլիսէն մինչ 1910 դեկտ. 30.—  
Բ Լ Ե Կ Յ Ի Ե Ն Բ Կ Ի Ս Ե Լ Ե Գ . — Հեկտեալ խումբեր՝ Կայծ 158 դրու, Նիմուէ 105, Աուհանգալ 90, Վիքիաւի 135, Սալնաւոր 125, Կերէվիլի 182. 20, Շամիքում 105, Շամէ 138, Սիփան 127. 20, Աւարակ 121, Արաւի 30, Միսցեալ 117. 20, Վարագ 30, Ոյթ 391, Սարափ 115, Աղբիւր-Սերոբ 75, Պէիլիթաւի խումբերէն 206, Գեր Աւարաւէ թիւ 12՝ 216, Գեղամի միջոցով 42, Պայլաւանէ (Աւստալիա) Գեր 240, Տիլիլիցիներու խմբ. 70, Խաւ գեղի Որոս թ. 47, Ժամեսարց թ. 85, Վիքիաւի թ. 59, Օվանքի թ. 20 դր.:  
Ս Կ Ի Ե Ս Կ Ի Ե Ն Բ Կ Ի Ս Ե Լ Ե Գ . — Հեկտեալ խումբեր՝ Վրէժ 27 դր., Անագանց 50, Երուսեղ Եղիէ 35, Արմէն Ջաւէն 127. 20, Արօր 136. 20, Սնիլի 130, Նոր-Սերուեղ 126, Գաղբ զիւղի խումբերէն 137, Ոսկեմայր 65, Վագգէն 201, Ջաւէն 444. 20, Արածանի 81, Վասոզ 327. 20, Ալէմ-Տաղի Արեւ թ. 37. 20, Արագ 53. 20, Պայլար 136, Հերոս 40, զանազաններ 20 դր.:  
Պ օ լ ս ո յ Ե ր զ ա ց ան Կ Ի մ Կ Ի Ս Ե Լ Ե Գ . — Հեկտեալ խումբեր՝ Ե. Թոփչեան 269 դր., Գնուցի 204, Հարագաւ 142. 50, Պարոյր Հայկազն 88, Թօփ-Գարուի խումբերէն 255, Վարիք 35, Կարմիր բերդի Շամէ թ. 32, Աւագուսի Անդրանիկ թ. 135, Բերդի քաղի զանազան խումբերէն 70, Օմանգալ Մրիկ 25, Աւարակ 213, Աւագուսի Փոքորիկ թ. 48, Մովսաւրի Մասար թ. 127. 20, Անարիկիչ 120, Քաչբերունի 388, Մովսաւրի Բարկէն թ. 158, Բերդի Ասանագեան թ. 116, Սասուն 10, Խիլի Հեկեսակ թ. 50, Աւագուսի Հայկազն թ. 20, Արաւիք 117, Վարդան 134, Սալմաբոմբուրգի 68, Հայկազն 35, Հրայր 42. 20, Կրակոս 148, Հեկեսակ 137, Վարդգէս 20, Մըներ 41, Լուսիկեան 35, Մովսաւրի Օմանգալ թ. 112. 20, Պէսօ 30, Արման 23, Պայլար 11, Կովկաս 42, Կայծակ 42, Արարոս 12, զանազան ընկերներու անդամավարներէ 15, Գերեր 89 դր.:  
Պ ա յ ի ա Մ ա ս Ե Լ Ե Գ ի կ ա զ մ Ե Գ՝ խմբական անդամավարներ 432 դր.:  
(Շարունակութիւնը միւս համարում)



Ս Պ Ա Ն Գ Ա Ր Ե Ա Ն Ն Ե Ր Ի Գ Ո Ր Ծ Ը

Եսանր, շշմեցուցիչ անակնկալներ բերեց համառուսական կեանքը վերջին մի շարք տարիներու մէջ միկոզմից բունապետական անորակելի ուժով յաղթողի բիրտ տիրութեան երով ճարակում է, յոշոտում Յեղափոխութեան ու ազատ մարտի միլիտանտը ներկայացուցիչներին, ամրացնում է հեռահեռ իր դիրքերը, կատարելագործում իր ձնշման մեքենան, գրաւելով հազարաւոր քաղաքացիներ իր անարգ ծառայութեան մէջ, սոււրացնելով լրտեսների, պրովոկատորների, գաղտնի ու յայտնի ոստիկանների շարքերը — ապա միւս կողմից երևան են գալիս նոյն այդ ցարական Բաստիլի մէջ, նոյն այդ «հաւատարիմ» ոստիկանական ու ժանդարմական շարքերում՝ անհատներ, որոնք այլ և այլ դերու մեքենայով — մինչև օրս անբացատրելի, առեղծածային — volte-face են անում իրենց բունաւոր տերերին, լքում են իրենց սև պաշտօնը և փոխադրելով ազատ էւրոպայ, բաց են անում իրենց գաղտնապահ բերանները, մերկացնում են լրտեսութեան ու պրովոկատորութեան հրէշաւոր սխտեմը, հրապարակի վրայ են դնում կենտրոնական ամենաքսամեկի հաստատութեան — Պետերբուրգի Ոստիկանական Դէպարտամենտի — տանեակ տարիներով պահած, գուրգուրած «դոկումենտները»:

Բակայներ, Մենչիկովներ, Լոպուխիններ արտադրեց այդ սև, զարհուրելի կեանքը վերջին մտայն թւականներում — թերևս նոյն տիեզերական հակազդեցութեան օրէնքով... Հակաթոյն՝ ընդդէմ թոյնի... Անհուն դառնութիւն և հիասթափութիւն պատճառեցին յեղափոխական կուսակցութիւններին՝ այդ անակնկալ մերկացումները: Բայց և անհուն ծառայութիւն, աջակցութիւն... Մարդիկ, գաղափարական գործիչները տեսան, թէ ինչ հերքուցեան չափերի կարող է հասնել մարդկային դաւաճանութիւնը, թէ ինչեր կարող է նիւթել եղբայրադաւ ու ազգադաւ բնազդը և թէ որքան դեռ հեռու են մի շարք խոշոր կուսակցութիւններ՝ յեղափոխական կազմակերպութեան իդէալից:

Տեսան, սոսկացին, արտասուեցին Բայց և — այդտեղ է մեղալի սփոփիչ կողմը — անց նրանց մէջ հաւատն ու վստահութիւնը՝ որ այսուհետև աւելի խիստ շրջահայեցութեամբ, ուժերի աւելի զգոյշ, նպատակայարմար ընտրողութեամբ, պիտի կարողանան բազմապատկել կորովն ու ազդեցութիւնը այն յեղափոխական բանակների, որոնք մինչև օրս մնացել են միշտ յաղթանակի կես-ձանապարհին, սպառել են վաղաժամ իրենց վառօդը, խորտակել են բունապետութեան գրոհի սակ, խորտակել են գուցէ հէնց զլիսուորապէս այն պատճառով, որ ներքուստ «մշակւած» են եղել լրտեսու-

թեան, մասնիչութեան ու պրովոկատորութեան թոյնով...

Բոլոր ազգերը կան այն սև ցանկի մէջ, որ բերին իրենց հետ ցարիղմի նախկին սպասաւորները և այժմեան դատախազները: Բոլոր ազգերը... և գրեթէ բոլոր յեղափոխական, սօցիալիստական, սօցիալ-դեմոկրատական հասուածները: Պրովոկատորներ, խոշոր լրտեսներ — անգամ վարիչ մարմինների մէջ, կենտրոններում: Ասում ենք — գրեթէ բոլորը... Կան բացառութիւններ (Մեր խօսքը մեծ, համառուսական հռչակ ունեցող հասուածների մասին է):

Հայ Յեղափոխական կուսակցութիւնը ազատ եղաւ պրովոկատորութեան \*) փտախտից, բայց հայ ազգը ազատ չեղաւ լրտեսութեան ու մատնութեան որովից: Պետերբուրգից ժամանող նորատիպ ծիծեռնակները բերին պօլիցիական արխիւներէից և մի տասնեակ հայ անուններ — անյայտ ու աննշան, որոնց մէջ կայ շատ թէ քիչ յայտնի անուն հայկական հրապարակի վրայ — Ս պ ան դ ա ր Ս պ ան դ ա ր Ե ա ն ի անունը:

Այդ իրողութիւնն էր, որ ծանուցեց «Դրօշակ»ը 1910-ի օգոստոսին և այդ առթիւ էր, որ Պարիզի մէջ տեղի ունեցաւ երկարատև դատավարութիւն: Ամենամիտն, առեղծածային դատելից մէկը, որի էութիւնը կը մանրամասնի ներկայ տեսութեամբ:

Միջկուսակցային Ատեանի որոշումը հրատարակելուց յետոյ ևս՝ կովկասեան մամուլի մի մասը, հիմնելով միակողմանի և աշուտ տեղեկութիւնների վրայ, շարունակեց մեր վերաբերմամբ իր անվայել ընթացքը, հօլովելով զրպարտութիւններ ու ինսինուացիաներ: Միւս կողմից Սպ. Սպանդարեանի թերթը մի շարք հրատարակութիւնների մէջ, ուր գէպերն ու իրողութիւնները խեղաթիւրւած են, հասկացնում է — գուցէ իրաւամբ — որ դատը չի վերջացած, որ գործի առաջին էտապն է միայն կատարել: Մենք չենք պատասխանի այդ վատ մամուլի հրատարակութիւններին, որոնց արժէքը լաւ գիտէ ինքը ընթերցող հասարակութիւնը: Խօսքը տանք իրենց՝ դատաւորներին:

Հրատարակում ենք ամբողջապէս և բառացի թարգմանութեամբ Յեղափոխական Ատեանի դատավարութեան Ա ր ձ ա ն ա գ ր ու թ ի լ ն ը (պրօտօկոլ): Հասարակութիւնը կը տեսնէ, թէ ինչ է պարզած այդ աղմկայօղ գործից և թէ ինչ է տակաւին մնում՝ մուծ ու անլուծելի՝ նոյն իրենց դատաւորների համար:

\*) Պրովոկատոր, agent-provocatour, սգրգոհիչ-գործակալ կոչւում են այն երկղիմի թշուառականները, որոնք ամուր հաստատուելով յեղափոխական մարմինների մէջ, ձևանալով համոզւած, գաղափարական մարնչող՝ տակից պահպանում են սերտ կապեր ոստիկանութեան հետ և սգրգոհելով, յարուցանելով յեղափոխական որոշ գործողութիւններ, հրատարակում են ոստիկանական միջամտութիւնն ու հարուածները:

272 - 2000



Գ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ \*

«Գրանկցութեան» նախանձուութեամբ Պարիզում գուժարւած Յեղափոխական Ատենայ, որ պիտի բնէր Հայկական «Նոր-Գար» լրագրի խմբագիր Սպանդար Ամիրջանեան Սպանդարեանի գործը, ծագած այն հրատարակութեան առիթի, որ աշէր էր «Գրանկցութեան» կենտրոնական օրգան «Գրօշակ» թերթը, մեղադրելով Սպանդարեանին Ռուսիական բաժանմունքի հետ ունեցած յարաբերութիւններէ մէջ,

Վազմեցին՝ (Ատենայ) Ա. Իււ. Ֆէյա, ընտրւած իրեն զատուօր Սոցիալիստ-յեղափոխականների կուսակցութեան կողմից, Բ. Խ. Ի զ օ ր ե, ընտրւած իրեն զատուօր Ռուսաստանի Սոց-դեմօկրատական բանուարան կուսակցութեան կողմից և Ա. Ֆ. Ս օ ա ա լ ընտրւած իր զատուօր և միանգամայն նախագահ Ատենայի՝ վերոյիշեալ երկու զատուօրների կողմից:

Քննելով Ատենայի ներկայացւած փաստադրերը, լսելով իրազեկների (էքսպլիսիտների) եզրակացութիւնը և վկաների ցուցմունքները, նմանապէս և Սպանդարեանի ու «Գրանկցութեան» ներկայացուցչի բացատրութիւնները, զուրաբերց հետեւեալ գտնաւ՝ ճիշտ:

Գործի ծագման պատմութիւնը հետեւեալն է.

1909 թւի նոյեմբերի սկզբներին «Գրօշակ» օրգանի խմբագիր՝ ընկեր Վարանդեանը ստանում է իր աշքուժ կատարելապէս վտասհելի մի պարիզեան ծանօթից նամակ, որ թելագրում էր Վարանդեանին անյայտ Պարիզ գնալ, ուր նրան պետք է հաղորդէր շահագրգիռ կարևոր և բարոյական զարգանի, կոնսպիրատիվ մի լուր, վերաբերեալ «Գրանկցութեան» գործերին: Վարանդեան անմիջապէս եկաւ Պարիզ և այդտեղ նամակի հեղինակը հաղորդեց նրան, որ Ֆրանսիա է եկել Մենշիկովը, որ մերկայցրել է արդէն ուսու յեղափոխական կուսակցութիւնների մէջ գտնուող շատ պրօվօկատորներ և որ պատրաստ է ցուցմունքներ տալ նաև այն լրտեսներին ու պրօվօկատորներին մասին, որոնք գործել են կոպկասում, նաև հայերի մէջ: Վարանդեանը վերջապէս Միխայլովիչ Զերնօվի հետ նոյն օրն իսկ ուղևորեցին Բարզօ, Մենշիկովի հետ տեսակցելու: Այնտեղ Մենշիկով ցոյց տուց Վարանդեանին իր նօտերի գիրքը և նրանից հաղորդեց կոպկասեան լրտեսների ու պրօվօկատորների մի ամբողջ ցանկ, որոնց թւում անւանեց «Նոր-Գար» ի խմբագիր Սպանդար Սպանդարեանին: Ընդամենը մի 40 անուն տւեց, որոնցից 6—7 հայերի: Այդ բոլոր հայերը կատարելապէս անյայտ էին Վարանդեանին: Ուրիշ բան էր Սպանդար Սպանդարեանը: Լրագրի խմբագիր, ամբողջ հզօանքի ներկայացուցիչ: Նրա լրտեսական գերը, շնորհիւ հատարակութեան մէջ ունեցած կապերի, կարող էր լինել Վարանդեանի կարծիքով շատ էական:

Այդ տեղեկութեան հանդէպ Վարանդեան չթաղարեց իր գործանքը, մի բան, որ չվերցնէր և Մենշիկովի ուղարկութիւնից, և վերջինը իսկայն, վկայութեան կանչելով խօսակցութեան ներկայ գտնուող Զերնօվին, սկսեց պնդել, որ իր տւեալներն անվիճելի են և որ այդ նօտերը ճշգրիտ բազաւեքներ են պաշտօնական զօկուսներին: Մենշիկով աւելացրեց նաև, որ 1904-ի յունւար 20-ին թէ 21-ին, այսինքն հէնց այն ժամանակ, երբ Ռուսիական բաժանմունքի մէջ ներկայացւել է զեկուցում՝ աղնտ Սպանդար Սպանդարեանի համար նշանակւած դրամական նպաստի ու սոճիկի մասին, նա տեսել է այդ անձը բաժանմունքի մէջ (դէպարտամենտ): Ունեւալով փայլուն յիշողութիւն դէմքերի վերաբերմամբ, Մենշիկովը այժմ ևս անոխալ կը ծանաշէր նրան: Մենշիկով չէր կասկածոււմ, որ Ռուսիկ. Բաժանմունքի մէջ իր տեսած Սպանդարեան կոչւող անձը և այն անձը, որի մասին խաուում էր զեկուցման մէջ, — միևնոյն անձն էր: Մենշիկովը չէր կասկածոււմ նաև, որ այդ անձը «Նոր Գար» ի խմբագիրն է, որովհետև նա շատ լաւ

\*) Ըահագրգոււած կողմերը ստացել են մի մի օրինակ՝ ներկայ արձանագրութիւնից: Ծ. Խ.

յիշում է Գուրօվիչի և Մէզնիկովի հրձւանքը այդպիսի «աջող գրիտի» առիթի (հարաւոր է, որ այդ համոզում այսօր ևս կայ) Ռուսիկ. Բաժանմունքի նախկին բարձր շրջաններում):

Լրտեսների և պրօվօկատորների ցանկը վերջանալուց յետոյ, Մենշիկով միևնոյն ժամանակ հաղորդեց այն անձանց ցանկը, որոնք 1904-ին մասնւել են այդ պրօվօկատորների կողմից Ռուսիկ. Բաժանմունքին:

Սպանդար Սպանդարեանին վերաբերեալ տւեալները Մենշիկովի գրքի մէջ նշանակւած են հետեւեալ ձևով.

«Սպանդարեանց Սպանդար «պրօֆէսօր», (ուսուցիչ) Վ. Պօլտից, խմբագրել է «Նոր Գար» լրագիրը. իր եղբայրը աշխատակցել է «Մշակ» հայ լրագրին: Ա. Վայսման, ձախորգութեան հանդիպելով Ռուսական յայտում և արգելք ստանալով Բուլղարիա մտնելու դէմ, ուղղեց զէպի Թիւրքիա և գործակալ ընդունեց Սպանդարեանին, որին 1904-ի յունւարի 18-ին բերեց Պետերբուրգ՝ ներկայացնելու Ռուսիկ. Բաժանմունքին, որովհետև վերջինը շատ էր ուզում ունեւալ կոպկասում լաւջ. ինտելիգենտ աշխատակից: Երբ վերջացան «պրօֆէսօրի» հետ բանակցութիւնները, որ վարում էր Գուրօվիչ, Սպանդարեանին տւին կանխիկ գրամ 1000 ռուբլի, կըբեցին նրան «Ամիրով» կեղծանւամբ և ուղղեցին Թիֆլիս: Սակայն, նոր լրտեսը յայտնեց թիչ պիտանի և նոյն տարւայ ապրիլին Ռուսիկ. Բաժանմունքը Սպանդարեանի ծառայութիւնից հրաժարեց:

1908-ին «Գուրիական Էնտրպետութեան» մասին եղած դատի միջոցին հայոց լեզուի թորգմանի դերը կատարում էր Սպանդարեանը, «տար բաժնի գրաքննիչ» («Բէշ» № 242). շատ հաւանական է, որ այդ գրաքննիչը և «պրօֆէսօրը» միևնոյն անձն է:

«Սպանդարեանց ձօտ 55 տարեկան, միջահասակ, թխագէմ և սօլիդ մարդ է, ձորուքով, բիչ ճերմկած, արևեկան տիպ»: Այս տեղեկութիւնները Մենշիկով հաղորդել է գրքի մէջ կարդալով, լրացնելով իր յիշողութիւններով, ընդհատելով պատմութիւնը Զերնօվի հետ ունեցած խօսակցութեամբ այլ նիւթերի մասին: Վարանդեան արձանագրել է այն, ինչ որ համարել է էական և այժմ չի յիշում: արձանագրել է արդեօր «ուսուցիչ» (պրօֆէսօր) Վ. Պօլտից՝ բաւեր. չի յիշում նոյնիսկ, թէ արդեօր կարդացւել են այդ բաւերը այն ժամանակ: Ինչ յիշում էր Սպանդարեանը և այն գրել է արդեօր այն ժամանակ Սպանդարեանի դէմքի ու ձարմնի առանձնայատկութիւնները, թէ և լաւ յիշում է, որ Մենշիկովը նկարագրել է նրան Սպանդարեանին \*): Առհասարակ՝ Մենշիկովեան նօտի մանրամասները Վարանդեան համարել է անէական, քանի որ «Նոր-Գար» ի խմբագիր Սպանդար Սպանդարեանը — կոնկրետ, որոշ անձնատուութիւն է, անկերին յայտնի և պարզել նրան դէմքի առանձնայատկութիւնների և որևէ լրացուցիչ տեղեկութիւնների հիման վրայ՝ նա համարել է աւելորդ:

Սոյն տեղեկութիւնների աղբիւրի ձեռնհասութիւնը պարզելու համար, Վարանդեան զիմեց Սոցիալիստ-Յեղափոխական կուսակցութեան մի բանի ակնուսոր անդամների, խնդրելով բացատրութիւններ: Այդ անձները, ինչպէս որ հոտատուեց զատարանում, ոչ միայն իրենց անձնական կարծիքի հիման վրայ, այլ և այն կարծիքի, որ տիրում էր Սոցիալիստ-Յեղափոխական և Սոցիալ-Դեմօկրատ կուսակցութիւնների մէջ, վճահական կերպով յայտարարել են, որ Մենշիկովի մինչև այն հաղորդած բոլոր բաղձաթիւ տւեալները ստուգման ժամանակ յայտնւել են ճշգրիտ և ուղիղ մինչև ամենայնայնս մանրամասնութիւնները \*\*): (всё многочис-

\*) Վարանդեան երբէք չէր տեսած մեղադրեալին, բնաւ ծանօթ չէր նրա ընտանեկան հանգամանքներին, նրա եղբոր աշխատակցութեանը «Մշակ» ի մէջ, քիչ էր ծանօթ և նրա, Սպ. Սպանդարեանի, գրական-հասարակական գործունէութեանը: Ծ. Խ.

\*\*\*) Մենշիկով աւել է ուսուական կուսակցութիւններին 600-ի չափ լրտեսների ու պրօվօկատորների անուններ: Ծ. Խ.



денные данные, сообщенные до тех поръ Меньшиковъ, при проѣздѣ оказались вѣрными и точными до мельчайшихъ подробностей) և հիմք չկար կապակած լույս այդ դեպքում արևե ինտրիգ Գեղեցիկոյի կողմից:

Իր կենսագրության գրությունների պատճառով՝ Գեղեցիկոյ պատճառակիր է, որ այդ տեղեկությունները առժամայեւ չհրատարակին մամուլի մէջ և թողնարել է, որ նրանք հարգելին կօվկասեան դաշնակցականների միմիայն մի նեղ շրջանի:

Այդ յանձնառութիւնը կատարել է Ի նկատի ունենալով Սպանդար Սպանդարեանի յարարներարար աչքի ընկնող հասարակական դիրքը, «Գաշնակցութիւն» կուսակցութեան Արևմտեան (ժընեվեան) Բիւրօն որոշեց, Գեղեցիկոյի տեսակները ստուգելու համար, փորձել՝ բանեւր Սպանդար Սպանդարեանին այնպիսի գործողութիւնների մէջ, որոնք չթողնէին կապակածի սուեր անգամ հասարակութեան լայն շրջաններում՝ Սպանդարեանի լրատեսական գերի մասին: Իրենց, «Գաշնակցութեան» անդամների մօտ այն ժամանակ կապակած չկար այդ մասին: Այդ նպատակով մի ակնաւոր դաշնակցականի յանձնարարեց, կօվկաս ուղևորելու միջոցին, հետեւ Սպանդարեանի գործունէութեան: Տարտախտարար, կուսակցութեան այդ գործակալը ձերբակալեց գրեթէ անմիջապէս կօվկաս դալուց յետոյ և ոչ մի փաստ Սպանդարեանի մասին, հարգելի, ի հարկէ չկարողացաւ:

Գրանով շահամանափակեց «Գաշնակցութեան» աշխատանքը Սպանդարեանի մասին արւած տեղեկութիւնները ստուգելու համար:

«Գաշնակցութեան» Արևմտեան Բիւրօն շուտով, Գեղեցիկոյի տեղեկութիւններն ստանալուց յետոյ, գիմումն արեց զբաւօր կերպով—Սպանդարեանի առթիւ—կուսակցութեան կենտրոնական կօմիտէի երկու անդամներին, որոնք աշխատել էին կօվկասում և այն ժամանակ փախած էին Էդդրում: Այդ դաշնակցականների պատասխանների մէջ մասնացոյց էր արւում, որ ճիշտ հէնց 1904 թ. յունւար ամսում Սպանդար Սպանդարեանը ուղևորել է Մօսկա և Պետերբուրգ, որ այդ ուղևորութիւնը նրանց թուում է տարօրինակ, որ նա «հաստատում է Սպանդար Սպանդարեանի մեղաւորութիւնը», քանի որ այն ժամանակներում նոյնիսկ քիչ վարկաբեկած հայերին չէին թոյլ տալիս դէպի մայրաքաղաքները: Մինչդեռ Սպանդարեանը ուս. կառավարութեան աչքում, նրանց կարծիքով, փաստաւոր մարդ էր և որ նրան իրր թէ մեղադրում էին մի ամբողջ շարք ծանր յանցանքների մէջ — մասնակցութիւն իշխան Գօլցիցիի դէմ եղած մահափորձում, հակահասարակական ցոյցի կազմակերպումն, հրապարակօրէն արմատական ճառ արտասանելը այդ ցոյցի մէջ և այդ բոլորի համար Սպանդար Սպանդարեանը մի ամիս միայն բանա նստեց \*) իսկոյն, ազատելուց յետոյ թողնեց դէպի մայրաքաղաքները:

Ուս. կառավարութեան այդ մեղմութիւնը դէպի Սպանդարեանը կասկածելի երևաց դաշնակցականներին և այդ հանգամանքը նրանք հեշտութեամբ բացատրում էին Գեղեցիկոյից ստացւած տեղեկութիւններով: Այդ բացատրութիւնը ևս առաւել ընդունելի էր դառնում այն փաստի

\*) Էրզրումի դաշնակցականներին զարմացնում էր ոչ թէ Սպ. Սպ. -ի կարծառւ բանտարկութիւնը, այլ նրա մայրաքաղաք երթալը, քանի որ նրանց ասելով (այդ ընկերներից մէկը նստել էր Սպ. -ի հետ միաժամանակ Գետեխի բանտում, եկեղեցական գոյրերի յափշտակման առթիւ թիֆլիսում կատարւած ցոյցից յետոյ) հայ քաղաքական բազմաթիւ յանցաւորներին՝ «կախկոպոսներից սկսած մինչև պարզ, անվնաս վաճառականները՝ Պէլէկեան կառավարութիւնը քշում էր դէպի հարաւային և արևելեան Ռուսաստանի գաւառները, դէպի Կուրսկ, Կիևի, Ռոստով, Սարատով, Սամարա և այլ տեղեր, բայց ոչ մայրաքաղաքները» Ծ. Խ.

չնորհել, որ դաշնակցականների զնահատութիւնը Սպանդար Սպանդարեանի նախկին բազարական գերի մասին՝ չէր հակասում զրան (այդ բացատրութեան)։— առեւութիւն դէպի յեղափոխականները, խուզարկութեան միջնորդը «Նոր-Գար» ի սմբազրատան, որ իրր ապաստանել էր, որպէս աշխատակից Մագդա Նէյմանին (Նիկողոսեան), որը հեղինակն էր յետադիմական (մինչև դօստ, մասնութիւն) Արմինե գրքի, և ընդհանուր, կղերական-յետադէմ ուղղութիւնը «Նոր-Գար» ի:

Գեղեցիկոյի տեղեկութիւնների հետևոր ստուգումը թուում էր Արևմտեան Բիւրօնն անհարկաւոր, մանաւանդ որ նա տեխնիկապէս էլ դժուար իրագործելի էր, հանդէպ այն հալածանքի, որին ենթարկւել էին կուսակցական կազմակերպութիւնները կօվկասում:

Կուսակցութեան և հայ ժողովրդի այդ ծանր ժամանակում լուր է գալիս, թէ պիտի տօնի Սպ. Սպանդարեանի յօրեւանք, մի մարդու՝ որ այն ժամանակ անտարակուսելի երևող փաստերի համեմատ՝ մասնիչ է եղել իր ժողովրդի:

Արևմտեան Բիւրօն մի անգամ ևս գիմում ու հարցնում է Գեղեցիկոյին. «Կարելի՞ է արդեք հրապարակ հանել Սպանդարեանին», և ստանում է պատասխան, թէ հրատարակել, ի հարկէ, պէտք է. նաև ճշտօրէն ցոյց է արւում, թէ ի՞նչ կարելի է հրատարակել \*) (и точное указание того, что можно опубликовать):

Եւ 1910 թ. օգոստոսին «Գաշնակցութեան» կենտրոնական օրգան «Գրօշակ»-ում գետեղեց հետեւալը.

Ա Չ Դ Ա Բ Ա Ը Ո Ւ Թ Ի Ի Ն

Տխուր պարտաւորութիւն ունինք ծանուցանելու հայ հասարակութեանը հետեւեալ փաստը.

Նոյն աղբիւրից, որի տւած փաստաթղթերի շնորհիվ վեջին ժամանակներս մերկացրւած են Ռուսաստանում մի շարք կարեւոր լրատւներ, մատնիչներ ու աժան-պրօֆակտօրներ—Ժ. Ուլչևնկօ, Բ. ա. ա. Ուլչանսկի, Կ. ա. Լիւնսկի, Ռ. Օ. Գեւորբերգ և ուրիշներ—նոյն այդ աղբիւրից Հ. Յ. Գ. պատշաճ մարմինը տեղեկացել է, որ նախկին «Նոր-Գար» լրագրի խմբագրապետ, հ. ա. յ. հ. ր. ա. պ. ր. ա. կ. ա. գ. ի. ր.

Սպանդար Սպանդարեանը

1904 թ. յունւար ամսից ի վեր ստանձնած է ուս. տարիկանական գէպարտամենտի գաղտնի գործակալի պաշտօն՝ մատակարարելու համար ցարական ոստիկանութեանը տեղեկութիւններ հայ յեղափոխական շարժման մասին:

Գրւած է Սպանդար Սպանդարեանը ոստիկանական անւանացուցակում «Ամիրով» կեղծանունով. ստացել է սկրիպտում միանւագ հազար թուրլու նպաստ և ապա նրան նշանակել են երկու հարիւր թուրլու ամսաթոշակ:

Ահա մի ծանր դօկումենտ, որ չենք հրատարակում թեթեւ սրտով:

Իրողութիւնը, տարաբախտաբար, անթիտելի է և ժխտելու բոլոր փորձերը կը ջանախախտ անողոր փաստագրերով:

Կան ուրիշ անուններ ևս՝ ժամանակին մատնելու հանրային ուշադրութեանը: Զգուշացնում ենք բոլոր նրանց, որոնք ներկայ սև օրերում վատաբար գործիք են լինում մի հզօր ու բառմեղի բռնակալութեան և ձգտում են այս կամ այն եղանակով—անմար գաղտնի, ուրիշները հաղի հայ փարագուրւած — վնասելու հայ ժողովրդական կազմակերպութեանը: Թօճի լուր իմանան հայկական բոլոր դիմակաւորւած մտնր ու խոշոր ԅօւզանները, որ ոչինչ չի վրիպում այդ կազմակերպութեան աչքերից և որ գաւառական շահատակութիւնների հանդէպ վաղ թէ ուշ պիտի ծառանայ յեղափոխական անողոր Նեմէկիզան:

ՊՐՕՇԱԿ

\*) Ատեանի առջև բերեց այն նամակը, որով Գեղեցիկոյ թեղադրում էր «Գրօշակ» ի մէջ անելիք առաջին յայտարարութեան բովանդակութիւնը (Սպանդարեանի գործի վերաբերմամբ): Ծ. Խ.



Հէնց որ «Գրօշակ»ի համարները թիֆլիս հասան, Սպանդար Սպանդարեանին անմիջապէս լուր տւին իր բարեկամները՝ իրեն դէմ ուղղուած մեղադրանքի մասին: Առաջինը հարգուեց նրան այդ լուրը՝ իր նախկին քարտուղար Էսհապարոնեանցը: Սպանդար Սպանդարեանի ազգականները և ամենամտիկ բարեկամները կիրառում էին կռահումներ մէջ՝ այդ անսպասելի մեղադրանքի ծագման նկատմամբ: Նրանցից սմանք և ինքը Սպ. Սպանդարեանը բացատրում էին «Գրօշակ»ի քայլը դաշնակցականների կուսակցական ատելութեամբ դէպի Սպանդարեանը, նոր-գարականների պարագլուխը, ուրիշները, նրանց թւում Էսհապարոնեանցը և Սպանդարի եղբայր Ալէքսանդր Սպանդարեանը, յայտնում էին ենթադրութիւն՝ չի՞ ընկած արդեօք մտրութեան մէջ «Գաշնակցութիւնը» Սպանդարի եղբայր Կոնստանդինի Սպանդարեանի որևէ գործողութիւններով, այն Կոնստանդինի, որ երկար տարիներ ապրել է Կ. Պոլսում, մի քանի անգամ ի շարն է գործ դրել Սպանդարի անունը իր Կովկաս եղած ժամանակ, 80-ական թւականներում, որ անսպասելի կերպով ու բոտ երևոյթիւն առանց պատճառի երևած էր եկել թիֆլիսում հէնց 1904-ի սկզբում, որ ունէր շատ կտակածելի հոշակ և որ ծառայում էր վերջին ժամանակները Օդեսայում, ցնեղօրոկան վարչութեան մէջ:

Նոյն 1910 թւի սեպտեմբերի սկզբին Սպ. Սպանդարեանը ստանում է Կոնստանդին Սպանդարեանից նամակ, 26 օգոստոս թւակիր, որ մեծ շափով հաստատում էր Էսհապարոնեանցի և Ալէքսանդր Սպանդարեանի ենթադրութիւնները: Կոնստանդին Սպանդարեան գրում է \*):

Օդեսայ, 26 օգոստ. 1910 թ.

Սիրելի եղբայր Սպանդար,

Խոսե՞մ արդեօք իմ լուսնական մասին այսքան տարիների ընթացքում: Ինքս չգիտեմ, թէ ինչ տեսն... Այժմ կը գրեմ քեզ... բայց ձեռքերս կը զողան, որովհետև պէտք է հազորդեմ քեզ մի շատ սխուր լուր... Եւ կրպատեմ, որ դուն գրես ինձ, թէ ի՞նչ կը մտածես, ի՞նչ պէտք է անել... Միայն լու գիտցիր, որ ես ի բր և եղբարս և ի բր և մարդ կը կատարեմ իմ պարտքս... Եւ դու անհանգիստ մի լինիր, ինչպէս արդէն ասացի, միայն իսկոյն գրիր, ի՞նչ պէտք է անել: Այսինքն ի՞նչ խորհուրդ կը տաս այդպիսի սուտ և զրբպարտիչ տեղեկութեան առթիւ... որի մէջ քո անմեղութիւնը անկասկած է... Այսօր ժընէվ հրատարակող դաշնակցական, պաշտօնական օրգան «Գրօշակ»ի մէջ տպուած է հետեւեայր, որ ես բոտ առ բոտ արտագրում եմ (Տես «Գրօշակ»ի յայտարարութիւնը):

Ի՞նչ կ'անես դրան: Միայն կ'աղաչեմ, որ խիստ լեզու չգործածես նրանց վերաբերմամբ... Ես միջոցներ եմ ձեռք առել... Միայն դու գրիր, ի՞նչ կը մտածես, ի՞նչ են նրանք մտղիր անել, այդպէս յայտարարելով... այսինքն, նշանակում է, թէ տերթորի պիտի տան թէ՞ մի ուրիշ բան: Սպասելով քո նամակին և խորհուրդներին... ես և ս ի կարևոր բան ունիմ քեզ ասելու \*\*): Միամիտ կաց: Պէտք է երևան հանել ճշմարտութիւնը և պէտք է լուրջ մտածել... թէ չէ, ինչպէս յայտնի է, գործը լուրջ է:

Առտի, եղբայր, իմացիր, որ գրում եմ քեզ հոգեպէս ծայրայեղօրէն այնպիսի և անհամբեր ամեն վայրկեան պիտի սպասեմ քո նամակին, որպէս զի գիտնամք, թէ ի՞նչ պէտք է անելք...

Կոնստանդին

Հասցէս՝ Օդեսայ, Մարիկովսկայա № 4, տուն 8:  
Նամակդ զրկէ ապահովագրած:

\*) Զ'ունենալով ձեռքի տակ նամակների բնագիրը, թարգմանում ենք ուսերեն թարգմանութիւնից:

Մ. Խ.

\*\* ) Ընդգծումները բնագրի մէջ են:

Մ. Խ.

Չուզազրելով պատող լուրերն ու կռահումները նամակի մուկ կրտակարկների հետ, Սպ. Սպանդարեանը եկաւ այն եզրակացութեան, որ իր եղբայր Կոնստանդինը ինչ որ սանջութիւն ունի «Գրօշակ»ի մեղացրած պրօփակտիւնի հետ և գուցէ նոյնիսկ նա ինքը Հէնց այն գործակալն է Ոստիկ. Բաժանմունքի, որի մասին խօսում է լրագիրը: Բայց Սպ. Սպանդարեանը հասկանում էր նոյնպէս, որ կռահու համար մեղադրանքի դէմ, որ հիմնուած է անժխտելի ապացոյցների վրայ, բուական չեն լուկ ենթադրութիւններն ու կռահումները և որ Կոնստանդին Սպանդարեանի նամակը, որ մինչև մի յայտնի ատիժան հասկանալի էր Սպ. Սպանդարեանի—վերջինս ծանօթ լինելով եղբոր բնաւորութեանը, ո՞՞նչ ու ձեւերն—չի կարող լինել օր'եկարի, առարկայական ապացոյց Կոնստանդին Սպանդարեանի մասնակցութեան ստիականական խուզարկութեան մէջ:

Եղբոր նամակը՝ Սպանդարը տալիս է Էսհապարոնեանցին կարգալու: Որոշում է թղթակցութեան մէջ մտնել Կոնստանդինի հետ և ստանալ նրանից պարզ ու որոշ պատասխաններ:

Սպ. Սպանդարեան չէր ուզում անձամբ գրել եղբորը: Նրա համար զգուշ էր ցոյց տալ որևէ բարի զգացումներ և թագցնել իր կասկածները. ուստի յանձնում է Էսհապարոնեանցին՝ գրել պատասխան-նամակը:

Վերջինը ինքնուրոյն կերպով խմբագրում է Սպանդարեանի յանձնարարութիւնը, բայց նոյնպէս իր հերթին չի կամենում, ըստ երևոյթիւն ստորագրել, այլ զրկում է նամակը կեղծանուն տակ «Չեք բարեկամ», հասկացնելով միայն, որ նա գրած է Սպանդարի թելադրութեամբ:

Նոյն միջոցին, բարեկամների և իր ընտանիքի յորդորով Սպանդարեանը հարկւար սեպեց պատասխանել մամուլի մէջ «Գրօշակ»ի մեղադրանքին, որի մասին տեղեկութիւնները թափանցել էին արդէն և ուսական օրինական մամուլի մէջ: Հաւատացած՝ որ փաստագիրները և վկաները կարող էին ծայրայեղ պարագայում ապացոյց լինել միայն ինչ որ «Սպանդարեանի» մեղաւորութեան և որ «Սպանդար» անունը և «Նոր-Գար» խմբագրի կոչումը գիտութեամբ և շարամուտութեամբ աւելացրած են դաշնակցականների կողմից, որոնք օգուած լինին առիթից ոչնչացնելու իրենց քաղաքական թշնամուն, Սպանդար Սպանդարեանը զետեղում է «Նովայա Բէլոյի մէջ հետեւեայ նամակը, 6 սեպտ., 1910 թ.

Ո. Տ. Պ. Խմբագիր \*):

«Գաշնակցութեան» արտասահմանեան օրգանի մէջ տպագրուած է յայտարարութիւն այդ կուսակցութեան անունից, որ հաշակում է ինձ որպէս պրօփակտար և դադանի գործակալ Ոստիկ. Բաժանմունքի, 1904-ի յունւարից սկսած: Այդպիսով մի քանի սպաղական տողերով ոչնչացուած է իմ ամբողջ գրեթէ քառասնամեայ հասարակական գործունէութիւնը, սպանում է իմ մէջ մարդը, բաղաբացին, հայր և հայրը:

Եւ այդ պատիժը կատարելուց յետոյ՝ այդ յայտարարութեան մէջ ինձ սպանում են մահով, Հարցնում եմ՝ ի՞նչ է մնացել ինձնից: Մարմի՞նս Ա՛յդ են ուզում ոչնչացնել:

Ես չեմ թագնուում, այլ կանգնած եմ բաց ճակատով ամբողջ հասարակութեան առաջ, ամբողջ աշխարհի առաջ, ուստի և պէտք չկայ շտապելու ի գործ դնելու սպանալիքը և յայտարարում եմ, որ «Գաշնակցութեան» իմ գէմ՝ ուղղուած մատնիչ ու թնկած ան ու պրօփակտարութեան մեղաւորութեան մեղաւորութեան ըստմնելի, հրեշաւոր զրպարտութիւն է և սուտ, թելադրած կուսակցական շարութեամբ և դաշնակցական շեֆերի կոյր ատելութեամբ դէպի իմ երկարամեայ գործունէութիւնը:

Ես ամեն ինչ տուել եմ հարապատ ժողովրդիս. և նրկական բարեկեցութիւն և ապահովուած ծերութեան հնարաւորութիւնը և սեփական զուակների կրքանկու:

\*) Բառացի թարգմանում ենք ուսերենից: Մ. Խ.



Թիւնք և իմ առողջութիւնը իմ միակ ստացւածքն էր իմ բարի անունը, որ ես ուզում էի թողնել իբր ժառանգութիւն իմ սիրելի զաւակներին իմ միակ միջնորդութիւնը ձերութեան վիճակում այն դրոշակն էր, որ ես իմ համախոհների հետ տանեակ տարիներ, ուսանողական նստարանից կրել եմ բոլոր խոչընդոտների միջից, բանտի և արտոյի միջից, մարտի և անբիծ, որ ես պաշտպանում էի իմ հոգու և բանականութեան բոլոր ուժերով իմ ծայրագոյն հասկացողութեամբ ծառայելով հայ ժողովրդին,— և այդ ուզում են խլել ինձնից և ցիխի մէջ նետել ոտնակոխ անել...

Ինձ առաջարկւած էր վերջացնել այդ մեղադրանքի հետ բնասանական ձևով, դիմելով բացատրութիւնների ու ապացոյցների համար նոյնիսկ իմ գահիձներին Բայց ես զգանքով յետ մղեցի այդ առաջարկը, ես ուզում եմ բացարձակ, հրապարակային դատ ամբողջ հասարակութեան առջև. այդ դատին կը ներկայանան իմ մեղադրողները իրենց անտիտելի գրաւոր զօհու մենտներով՝ և ուր կը մերկանայ նրանց բոլոր բարոյական կերպարանքը և բոլոր կեղծութիւնը նրանց զօհու մենտներին նրանց առաջ, որոնք գիտեն գէթ մասամբ իմ հրապարակախօսական գործունէութիւնը, իմ անձնական կեանքը — ես ոչինչ չունեմ սակաւ. մեղադրանքի անհեթեթութիւնը նրանց համար ակներև է:

Մնացածների առաջ ես չեմ պաշտպանուում, այլ ինքս մեղադրում եմ «Գաշնակցութեան» արտասահմանեան զեկապարներին չարամիտ զրպարտութեան մէջ:

Իմ օրերի մնացորդը ես կը ներկեմ ճշմարտութեան պարզելուն և շնայեամ մեծ դժարութիւններին, ես խորապէս համոզւած եմ զրա մէջ, ճշմարտութիւնը կը յաղթանակէ:

Վերջացնելով ներկայ նամակը ես խորին խնդիրով դիմում եմ գրչի բոլոր աշխատաւորներին, բոլոր ազգերի հասարակական գործիչներին, թող նրանք կազմեն Լտեան, ինչ ձևով որ կուզեն, բնարւած իրենց հայեցողութեամբ, եւ պատրաստ եմ տալ այդպիսի Լտեանին բոլոր բացատրութիւնները, բայց անել իմ ամբողջ կեանքը: Հաստատապէս համոզւած եմ և յուսով եմ արձագանք գտնել իմ խնդիրին, որովհետեւ իմ գործը անձնական չէ, այլ հասարակական նշանակութիւն ունի և նրա հրապարակային քննութիւնը երևան կը հանէ ամբողջ աշխարհի առաջ, թէ մինչև ինչ հերքուչեան բարձունքների կարող է հասնել կրօնակցական ասելութիւնը հայոց մասուլի մէջ:

Միւս քողագրների լրագիրներին խնդրում եմ արտատպել իմ այս նամակը:

Խմբագիր-հրատարակիչ «Նոր-Գար» լրագրի, Սպանդար Սպանդարեան, 6 սեպտ. 1910 թ. Թիֆլիս:



Հասարակական փերոյիչեալ նամակին ի պատասխան՝ Կոնստանդին Սպանդարեանը զրկեց երկու նամակ, մէկը 8 սեպտ., միւսը 10 սեպտ. 1810 թ. Լաիկի:

8 սեպտ. թ. Լաիկի նամակի բովանդակութիւնը հետևեալն է.

Օդեսայ, 8 սեպտ. 1910 թ.

Սիրելի Սպանդար,

Այս վարկեանին ստացայ նամակ, որ չի գրւած քո ձեռքով, բայց քո անունից է: Այն է գրել այդ, չգիտեմ և դարմանում եմ, գրում է և չի ստորագրում իր անունը այժմ չգիտեմ, արդեօր դո՞ւ ես ստացել իմ նամակը, թէ մի ուրիշ անձ: Երբեք սրտով և հոգով գրեցի ես իմ առաջին նամակը և բույնները հաշւելով, սպասում էի քո պատասխանին: Բայց ստացայ մի պատասխան, որ աւելի կուզէ փորձել ինձ, քան թէ գտնել և պարզել ճշմարտութիւնը: Այդ անյայտ անձը խնդրում է ինձ, որ ես արտայայտեմ ուղղակի, առանց կեղծիքի... Բայց գարմանալի է, երբ եմ ես կեղծիք արելը եւ ինչ պատճառ ունիմ ես այստեղ կեղծիք կատարելու: Ես սովորութիւն ունիմ կէտեր դնելու ամեն մի նախադասութիւնից յետոյ: Ես ինձ այնպիսի հարցեր է տալիս, որ ես կարծես խա-

նւած եմ այդ գործի մէջ, կամ կարծես ես եմ սարքել և պետք է իմանամ: Մի՞թէ խիղճ չկայ: Մի՞թէ բաւական չեն իմ տանջանքները: Գուր կուզէր դեռ աւելացնել կարծես ես չպետք է վախենամ տերբորից, որովհետեւ դա ինձ չի վերաբարձում: Այդպէս ես դու ինձ ձանձուկ ես սակ եմ, որ իբրև եղբայր և իբրև մարդ, ես կը կատարեմ իմ պարտքս: Այո, ես կը զոհարեմք ինձ և կը պարզեմ գործը: Ինչպէս այդ կ'անեմ ես: Ես կ'ուզէի, որ դու հասկանայիր այդ իմ գրութեան ոգուց, այլ ոչ թէ խօսքերի ետևից ընկնէիր: Ես կուզէի իմանալ, ունեցե՞լ ես դու արդեօր որևէ յարաբերութիւն ուստիկանութեան հետ կ'ամ ինչ պէս եւն անւանում այդ ստանանքներին... Եթէ մինչև իսկ դու արդարեւ թէ այո, ունեցել ես, ես անձամբ պիտի ասեմ, որ դա սուտ է, իմանալով քո բնութիւնը: Բայց այնուամենայնիւ ես կուզէի հարցնել քեզ և մտնել քեզ հետ թող թակցութեան մէջ, որպէս զի խորհրդակցելու, միջոցներ ձեռք առնելու, որ պէս զի ինքը Գաշնակցութիւնը չ'մնայ սխալ ճանապարհի վրայ: Ես մահից չեմ վախենում... և կուզէի, որ դու էլ հանգիստ լինէիր (եւ սխալմամբ գրել էի քեզ «մի անհանգստացիր»...):

Լուրջ և պազարիւն մտած է, և թող մի տար, որ նրանք յաղթեն Բոթորովին հասկանալի է, որ տեսնելով քո անձի մէջ հայկական թշնամութեան մարմնացումը դու պի իրենց (գաշնակցականները)— նրանք կուզեն քեզ ոչնչացնել: Ես գրել եմ Կ. Պոլիս մի անձնաւորութեան, ծանօթանալու համար նրանց ունեցած անողորմ փաստագիրների հետ: Բայց այդ անձը գնացել է Էրզրում, ամուսնութեան համար և դեռ չի վերադարձել: Ելժմ լսիր, Սպանդար, թո՛ղ աւելորդ հարցերը մենք երկուստ միասին պետք է պարզելու գործը ամբողջ ազգի և մարդկութեան առաջ: Հոգ չէ, թէ պետք է մինչև իսկ կեանքը զոհել, սպացուցանելու համար, որ դա այդպէս չէ, որ դա սխալ է: Արիացիր և լսիր ինչ որ քեզ ասում եմ և լաւ գիտցիր, որ մինչև իսկ քո թշնամները վերջիվերջոյ կը տանն յօրելանդ, բայց զգո՛յ՛ կացիր, նրանք այնքան հեռու են գնացել, որ չգիտի ուղեանձ ճշմարտութիւնը խոստովանել, որպէս զի չկարողեն իրենց հմայքը և վարկը... Մի՛ յուզիր: Ելժմ ահա թէ ինչ պետք է անել: Դա՛ն ունի արդեօր համակիրներ նրանց (գաշնակցականների) մէջ, իսկ յետոյ պետք է իմանալ, ո՞ւմ հետ պետք է տեսնել, Թիֆլիսի՞ թէ Ժրնէվի կոմիտէի հետ... Քանի որ գործը հասել է արդէն այժմեան վիճակին (հրատարակութեան), բնականաբար Թիֆլիսի կոմիտէն հրապարակ չի գայ... Ինչպէս եւ Կարթուսի հետ: Այդտեղ կայ «Մշակ»ի աշխատակից թէ խմբագիր Գարեգին Խաժակեան, որ մի քանի տարի առաջ Կ. Պոլիս է եղել, իմացիր նրա հասցէն: Ազարկիր ինձ նմանապէս Կ. Փոփոպեանի հասցէն: Իսկ գլխաւորը՝ քանի որ դու անմեղ ես, կանգնիր արիաբար և դու դեռ աւելի կը բարձրանաս... Ասում մեզ հետ է, ես հաւատում եմ: Այս բոլորից յետոյ հոգացիր, որ շատերը գրեն նամակներ մեզ, քաղաքաբախի ձևով և հակացնել, որ այս գործի մէջ կայ մի մուկ բան և որ նրանք չչտայեցնեն իրենց վճիռը, շնեալին մը ու ձախ Բայց ամենից լաւ կը լինէր, որ դու այստեղ գայիր: ոչ որի այդ մասին չհարցողելով: Վաղ թէ ուշ այդ պետք է անել: Գուր կ'ուզես, որ ես նամակի մէջ ասեմ այն, որ ասել չի կարելի, և դարմանում եմ, ինչպէս ես դու մտածում, որ մենք, որ... ենք \*)... Ինչպէս որ ես քեզ համար փաստ՛ եմ, նոյնպէս և դու փաստ՛ եղիր, որ ես անմեղ եմ, ինչպէս Լսումս:

Սաշային, այդ անպիտանին, այդ վախկոտ տակառին մի հաւատար, թող յեղուն յետ քաշէ: Այնչ մի՛ ասա, գիտեմ նրա բնութարանը, ուստի և ստու՛մ եմ, որ ես սիրտ չունիմ...

Գիտեմ քո բնութիւնը, գիտեմ, թէ ինչպէս այժմ քո

\*) Էրպեքրանները և Ատեանը չկարողացան հակառակ թէ ինչ է ուզում ասել Կոնստ. Սպանդար, «Մենք որ... ենք»... անկատար գարձաւճով. Ծ. Խ.



սիրար տանջում էր Չկան բարեկամներ աշխարհի մէջ  
Ըմեն բան արայ ինչ որ հնարաւոր է այտեղ գալու հա-  
մար իմ պաշտօնս թող տալիս ինձ անձամբ գալու այդ-  
տեղ: Եւս աւուելլ որ շատ կարելի է ուրիշ տեղ պիտի  
երթանք, գործք ստուգելու... Հասկացիր իմ գրութեան  
սքին և մի նայիր նրա վրայ, իբրև ֆաստարան, ինձ այն-  
պէս է թւում, թէ դու պէտք եղած ուշադրութիւնը  
չես դարձնում գործի վրայ:

Անհամբեր նամակիդ սպասելով մնամ եղբայրդ Կոնս-  
տանդին:

Ինչպէ՞ս ես Սապո՛Տ-Գիւլիանի հետ: Ինչպէ՞ս ես Մա-  
լուճեանի հետ:

10 սեպտ. 1910 Թւակիր նամակը հետեւեալն է.

10 սեպտ. 1910 թ.

Երրորդ նամակ

Սիրելի Սպանդար,

Երբ ես օգոստոսի վերջերում «Գրոշակ» թերթի մէջ  
կարդացի ինձ համար մահացու յայտարարութիւնը, իսկոյն  
անհրաժեշտ տեսայ արտագրելու և քեզ գրկելու: Հա-  
պով իմ կողմից մի բանի խօսք աւելացնելով: Կարելի է  
երևակայել, ինչպիսի սրտով ես սպասում էի քո պատաս-  
խանքին: Բայց պատասխանը ստացայ ոչ թէ քեզինց, այլ  
գրւած ուրիշի ձեռքով: Այն օրը ես նորէն և շտապ-շտապ  
զրկեցի պատասխանը, քո անունով, մտածելով որ խօսում  
եմ եղբորս հետ, բանի որ նամակի մէջ ինձ խորհուրդ  
էր տրուում հանգիստ լինել. ես աշխատեցի, որքան կա-  
րելի է, հանգիստ մնալ, բայց յետոյ, երբ ես նորից ու  
նորից կարդացի նամակը, ինչ եմ տեսնում. այդ ինչ  
նամակ է... Սկիզբը պարն Կոնստանդին՝, իսկ վերջում  
ստորագրւած է՝ «Եր բարեկամը» Ինչ ստեմ քեզ Յայտ-  
նեմ արդեօք իմ զարմանքը, թէ ցաւը: Ո՞վ է այդ անձը,  
որ գրում է ինձ քո թելադրութեամբ: Եթէ այդպէս է,  
ուրեմն այդպէս եմ վարում, ինչ է իմ մեղքը: Մի՞թէ  
պէտք է միշտ տանջւիմ իմ սրտի քնքշութիւնից: Մինչև  
անգամ այսպիսի ծանր վայրկեանում, երբ մեզ պէտք է  
միանալ մեր պատերը պաշտպանելու համար... մի՞թէ մենք  
այդպէս պիտի վարուէինք իրարու հետ:

Սպանդար, Սպանդար, դու լաւ գիտես, թէ ես ինչ-  
պիսի եղբայր եմ եղել քեզ համար և ինչպիսին մնում  
եմ: Լաւ աշխատիր, ես ինքս ուզում եմ պաշտպանել քո  
պատերը, բայց ոչ զոհելով ուրիշները: Դու լաւ կը տես-  
նես, նաև ամբողջ աշխարհը, որքան շատ զոհարարութիւն  
եմ արել ես քեզ համար, եղբայրական սիրով համար:  
Ես ինքս նախանձանդիր եմ, որ ճշմարտութիւնը երևան  
հասնի, որպէս զի նախ եղբոր պատերը փրկելի, որ և իմ  
պատիւն է, նաև հրապարակախօսի պատերը, որին, ինչ-  
պէս երևում է, ուզում են ոչնչացնել:

Այդ չէ ուղիղ ճանապարհով այդ ճանապարհով ճշմար-  
տութիւնը երևան չի գայ և չի պարզի...

«Գրոշակ» յայտարարութեան մէջ սաւած է, որ իբր  
թէ 1904-ի յունւարից դու եղել ես Ռստիկ. Բաժան-  
մունքի գործակալ. սաւած է նոյնպէս, որ անողոր փաս-  
տագիրներով կ'օնչացնեն և որ իբր գործում ես Ըմիրով  
կեղծանունով:

Իսկ այն անյայտ անձը, որը գրում է ինձ քո կողմից,  
հարցնում է ուղղակի չգրա անունը գրւած է արդեօք  
Ռստիկ. Բաժանմունքի մէջ և աւելացնում է, չեմ գրւած  
արդեօք ես... որ ես անկեղծօրէն, առանց կեղծութեան  
գրեմ այդ մասին կային:

Դու զարմանալի մարդ ես, Սպանդար: Մի՞թէ կարելի է  
հարցնել այդպիսի ստորական բաներ: Ընտրելը, ես որ-  
տեղից կարող եմ իմանալ այդ Չեր կարծիքով մարդիկ  
սուտ տեղը չեն սպագրել: Լաւ, կը հաւատամ քեզ մի  
բոպէ: Բայց մտածիր. տէրութեան բարձր  
Ռստիկանական բաժանմունքը, երբ նա  
պահանջում է իր աշխատակիցներին իսկա-  
կան անուններին ցուցակը, մի՞թէ նա այն-  
պէս սյիմար է և սուտ տեղը կարող է գրել

քո անունը (ստորագծողը մենք ենք, խմբ.): Մաս-  
ծիր: Կամ դու յիշուի եղել ես այնտեղ ազնետ, կամ թէ  
գիտութեամբ կատարել են կեղծիք, կամ հնարել են որոշ  
նպատակով ժրնէվի մէջ, համաձայն իրենց 3—4 յօդ-  
ւածի: Ինչո՞ւ է քեզ պէտք այն ձախ նետել, մի՞թէ դու  
այդ ժամանակ եղել ես Պետերբուրգում: Զէ՞ որ դու  
բանաւուն էիր, Թիֆլիս, ապա Մոսկուայի ճանապարհի  
վրայ: Եւ դու այն մարդն էիր, որով գրաււած էր ան-  
բողջ Բաժանմունքը (Ռստիկ...) և Կովկասը և անհնար  
բին է, որ որ ուրից է ուրիշ մարդ կա-  
րող անար մտանել այն տեղ (Ռստիկ. Բա-  
ժանմունք):

Մտածիր այդ ուղղութեամբ: Մի՞ աշխատիր գտնել  
ուրիշ յանցաւոր, նա ինքն իրեն երևան կը գայ: այլ  
աշխատիր, որ նրանք (գաշնակցականները) սպառնացանն,  
ներկայացնեն քո ձեռքով գրւած որևէ բան:

Քանի որ նրանք մեղադրում են, պէտք է որ իրենք  
սպառնացանն իրենց սաւածը, և յետոյ դուն կը պատաս-  
խանես: Եւ ոչ թէ նրանք գրեն, ինչ որ զլիկց դուրս  
է գալիս (անհեթեթութիւն) և վերջիվերջոյ ծաղրի  
ստարկայ գտնան:

Ո՞վ է քո Բուրցեկը: Այդ յետոյ երևան կը գայ... Այդ  
նոր տեսակի... Ահա այդտեղ նշանակութիւն ունին իմ  
կէտերը:

Սպանդար, Սպանդար, ես ինձ զօհել եմ զէպի քեզ  
ունեցածս սիրուց զրդւած և նորէն դատարան եմ կհանքս  
զօհել, բայց դու կանգնած ես սխալ ճամբու վրայ: Ես  
զգում եմ, որ դու անմեղ ես, ինչպէս և ես... Բայց այս  
աշխարհում մենք չենք կարողանալու այդպիսի ձևով  
սպառնացանել: Քանի որ դու, իմ եղբայրս, ինձ չես հա-  
ւատու, ես ես փաստութիւն չունիմ զէպի քեզ: Եթէ  
այդ այդպէս է, էլ ինչ կարող ենք սպասել ուրիշներց:  
Եթէ կարելի լինէր այդտեղ Թիֆլիսում, ես կ'առաջարկէի,  
որ մի բանի անձեր...:

(Հարունակութիւնը չկայ)

Վերջին նամակի շարունակութիւնը չկայ: Սպ. Սպանդար-  
եանը պնդում է, որ կորցրել է և որ նրա մէջ էական ոչինչ  
չի եղել: Ատեանը, որին Սպ. Սպանդարեանը ներկայացրեց  
դատաւճախ մէջ բերւած բոլոր նամակների բնագիրները,  
հաւատարմութեամբ է, որ այդ նամակը ընդհատուած է թերթի  
շորրոգ երեսի վերջին տողի վրայ: Այնպէս որ նամակի  
կորած շարունակութիւնը սկսել է նոր թերթի վրայ \*):

Կոնստանդինի վերջին երկու նամակներին ի պատասխան,  
Սպանդար Սպանդարեանը զրկեց նրան սեփական ձեռքով  
գրւած նամակ, որի մէջ, հակառակ եղբոր ձեռն, որ դիմում  
էր նրան սովորական բանաձևով «սիրելի եղբայր Սպանդար-  
կա՛մ» սիրելի Սպանդար, ոչ մի դիմում չ'արեց իր նամակի  
ճակատին և նման ձևով շտորագրեց: Դա հաստատուած է  
Կոնստանդին Սպանդարեանի պատասխան-նամակով, գրւած  
21 սեպտ., հետեւեալ պարունակութեամբ.

Այս բոպէիս ստացայ քո նամակը առանց ստորագրու-  
թեան: Հատ զժւարանում եմ կարգար: Որքան ես կարո-  
զացայ հասկանալ, դու շարունակում ես նոյն առաջնու-  
տակիկը: Մէկ բան հաստատ իմացիր, այն՝ որ ես ոչ մի  
տեղ չեմ օգտուել քո անունն ից և եղիք  
քից: Թէ ինչպէս ես քեզ ներւում եմ, ես այդ  
կ'ապացուցանեմ ամբողջ աշխարհի  
սոս և օջ, մինչև իմ արեան վերջին կամիքը:

Ի դուր ես աշխատում իմանալ, ով է գործել քո անու-  
նով և ինչպէս է քո անունն ընկել այն ցանկի մէջ (Ռ-  
ստիկանական Բաժանմունքի):

Այն զուցակի մէջ (Ռստիկ. Բաժանմունքի) անհնարին է:

\*) Այդ «նոր թերթը» Սպ. Սպանդարեան յայտա-  
բարեց կորսւած: Երբ Ատեանը և «Գաշնակցու-  
թեան» ներկայացուցիչը խնդրեցին, յարգութեցին նրան՝  
ամեն բան հրապարակ բերել խոստացաւ փնտրել իր  
պարիզեան բնակարանում, բայց չգտաւ: Ծ. Խ.



որ գրեած լինի սխալ անուն. եթէ այդպիսի բան կայ, դու աղաւած ես, ինչպէս և ես էլ ոչինչ մեղք չունիմ Կի խաբէր արտաքին երևոյթներով: Ես քո առաջ և միջիտար ժողովուրդների ու թագաւորների առաջ հռչակելու եմ, որ ես անմեղ եմ:

Ես գարմանում եմ, երբ դու պնդում ես, թէ իմ նամակները հրատարակելու են: Հարցնում եմ քեզ այդ ի՞նչ նամակներ են: Եթէ ես ունիմ իմ ձեռքով գրեած նամակ \*), թող հրատարակեն: Եւ դու կը տեսնես, թէ ինչ եմ ես ձեռնարկել քո սիրոյն համար:

Գուցէ որեւէ մէկը մեղաւոր է այդ գործի մէջ, բայց դա՛ ոչ դու ես, ոչ ես:

Ուտի պահանջիր, որ քեզ ներկայացնեն ապացոյց, որ դու արձանագրած ես, և քո ձեռագիրները Բայց ասելու որ ես գրել եմ քո անունով, ծիծաղելի է, որովհետեւ եթէ Տէրութեան մի այդպիսի բարձր հաստատութեան մէջ որեւէ մէկին ասարելոց են նետում կեղծանուն սակ, պէտք է նրանք իմանան, թէ ո՞վ է նա կարծեմ, բուխարի-բարխտա \*\*) չի տանում գործը Գու՛ն լաւ գիտես և կը հասկանաս: Քո ի՞նչ պէտքն է իմանալ ով է այդ միւսը Գու՛ն քո մասին հոգ տար... Եթէ մասնացոյց կը լինին ինձ վրայ, այն ժամանակ ես ինքս պէտք է գործեմ և ապացուցանեմ, մեղաւոր եմ, թէ ոչ: Իսկ այն մասին, թէ ի՞նչ են խոսում Թիֆլիսի մէջ իմ վրաս... լաւ իմացիր, որ երևոյթը խաբուսիկ է: Աւրախ կը լինեմ, եթէ գրէ ինձ Հասարակականը և ես նրան նոյնպէս կը պատասխանեմ:

Ինչ վերաբերում է քո միւս խօսքերին, կ'ստեմ միայն, որ ես պէտք է քեզինչ պատելի այդ: Գու՛ն միշտ միայն քո մասին ես մտածելու եմ եղել եմ միամիտ էշ: Աւրիշ ոչինչ չեմ կարող ասել... Չուր ես դու միայնակ այնտեղ գնում \*\*\*): Լաւ կը լինէր, որ ես էլ լինէի քեզ հետ...:

Յոյս ունիմ, որ դու որոշ և յաճախ պիտի գրես ինձ գործի ընթացքի մասին:

Չեմ հասկանում, ինչու իմ պաշտօնը ցած է: Գրեթէ 11 տարի բանտում սոված և մերկ անցնելուց յետոյ, Օդեսա արտուրած կնոջս և աղջկաս հետ և այստեղ 2 տարի անտանելի զրկանքներ կրելով... Այս բոլորից յետոյ այս ողորմելի պաշտօնը միթէ ստոր է: Սա հօ աւազակութիւն չէ...:

Կոնստանդին

Աւր որ էլ լինիս, զրկիր հասցէդ: Քո գործը պարզ է: Իսկ դու աշխատում ես անպատճառ ինձ սեւացնել, ի՞նչ վրաս ձգելով մարբել \*\*\*\*): Յաւաւ է: ա յ գ պ է ս ե մ ե ս վ ա ր ձ ա տ ր լ ու լ մ \*\*\*\*\*):

Չգարմանա այս խօսքերին վրայ ժամանակը ամեն բան կը պարզէ քեզ... բայց վախենում եմ, որ ուշ լինի...:

Չմտնելով այս նամակի բոլոր մասերի գնահատութեան մէջ, Գատարանը իր դատաւճի այս կետում նշանակում է երկու տեսակ խնդիրներ, որոնց հետապնդել է Կոնստանդին Սպանդարեանը այդ նամակի մէջ: Առաջինը՝ ցանկութիւն՝ համոզելու Սպ. Սպանդարեանին չփնտրել մեղաւոր անձը և սահմանափակել բացառապէս անձնական պաշտպանութեամբ և երկրորդ՝ փորձել անձնական մասնակցութիւն ընդունելու Սպ. Սպանդարեանի արտասահմանեան հոգների մէջ պատիւը վերականգնելու համար:

«Քեզ ի՞նչ պէտք է իմանալ, ով է այդ միւսը», գրում է Կոնստ. Սպանդարեան, «դու քո մասին հոգ տար... Եթէ

\*) Ուզում է ասել՝ Ոստիկ. բաժանմունքի մէջ թողած իր ձեռագիր որեւէ ղօկուսման: Ծ. Խ.  
\*\*) Կոնստ. Սպանդարեանը գործ է ածում ռուսական сѣ дѣхты-баракты ոճը, որ նշանակում է վ ա յ Ր ի վ ե ր ո յ յ  
\*\*\*) Ժընեֆի կամ Պարիզի վրայ է ակնարկուում: Ծ. Խ.  
\*\*\*\*) Ստորագծոււր մերն է: Ծ. Խ.  
\*\*\*\*\*) Ստորագծոււր մերն է: Ծ. Խ.

մասնացոյց կը լինին իմ վրաս, այն ժամանակ ինքս պէտք է գործեմ և ապացուցանեմ, մեղաւոր եմ ես, թէ ոչ: Եւ յետոյ, թղթակցութեան միջոցին, վերադառնալով նայն հարցին՝ «քո գործը պարզ է. իսկ դու աշխատում ես ինձ սեւացնել, ինձ վրայ ձգելով մարբել: Տխրայի է: Այդպէս եմ ես վարձատրուում: Չգարմանա այս բառերի վրայ, ժամանակը քեզ կը պարզէ այդ... Բայց վախենում եմ, որ ուշ լինի»:

Գատարանը պէտք է համարում նկատել, որ այդ կտորը, որի ակնբեր նպատակը միշտ նայն է՝ համոզել Սպանդարին, որպէս զի նա հրատարակի պարզաբանելու Կոնստանդինի մեղաւորութեան հարցը — լի է Կոնստ. Սպանդարեանի նամակներում սովորական դարձած միութիւններով, և որ խորհրդաւոր ակնարկները ինչ որ ծառայութիւններ մասին, որոնք իրը թէ արւած են Սպանդարին և որոնց համար Կոնստանդինը այդպէս է վարձատրուում, դատարանի տեսակետից ոչ մի սուտ չի ձգում Սպ. Սպանդարեանի վրայ, քանի որ այդտեղ իսկ՝ Կոնստ. Սպանդարեանը յաւելում է, որ այդ ծառայութիւնները Սպանդարին յայտնի չեն և միայն ժամանակը կը պարզէ նրան այդ: Այդ անպատճառ կտորի միակ նպատակն է՝ աւելացնել արտաբանական փաստերին բարոյական փաստ, արանդրել եղբորը ի նպատակին, յղելով ինչ որ ծառայութիւնների վրայ, ստիպել նրան մտածել հնարաւոր անարդարութեան մասին:

Չ'իմանալով, համաձայնե՞լ է արդեօք Սպ. Սպանդարեանը հրատարակելու մեղաւորին փնտրելուց և սահմանափակելու ձեւակն ինքնապաշտպանութեամբ, Կոնստ. Սպանդարեանը առաջարկում է նրան իր ծառայութիւնները, աշխատում է ձեռք բերել մասնակցութիւն որոնումների մէջ: «Չուր ես դու միայնակ գնում այնտեղ, լաւ կը լինէր, որ ես էլ քեզ հետ լինէի... Յոյս ունիմ, որ դու որոշ և յաճախ պիտի գրես գործի ընթացքի մասին... Աւր որ էլ լինիս, գրիր հասցէդ»:

Հուսով Սպ. Սպանդարեանը մեկնում է արտասահման, առանց գնալու եղբոր մօտ և չփերցնելով նրան իրեն հետ:

Քաղաքական խնդրակութիւնների մէջ Կոնստանդինի ունեցած մասնակցութեան առիթը լուրերը այն միջոցներին արդէն թափանցել էին մամուլի մէջ: «Այս» հայ լրագրի № 40-ի մէջ բերւած է քաղաքը Ամերիկայում հրատարակուող մի հայ լրագրից, որի կողմանեան թղթակցիցը հաղորդում է հետևեալ, «Այս»ի կարծիքով ճշմարտանման տեղեկութիւնները: «Առաջմ մերը ձեռնպահ իր մեանը այդ գործի մասին դատելու և կրօնականը նրա հետևանքներին: Բայց ահա թէ ինչ է յայտնի մեզ, ինչպէս նաև շատ դաշնակցականների. Սպ. Սպանդարեանի եղբայրը, Կոնստ. Սպանդարեանը արդէն 1894 թւից գործակալ էր Արդիւլ Համբրի մօտ \*): Այս սահմանադրութիւնը Թիբրբիոյ մէջ հրատարակելուց յետոյ, նա գնաց Ռուսաստան և սկսեց իր ծառայութիւնը Օդեսայում: Կ. Պոլսում, թագցնելու համար այր իսկական ծառայութիւնը, նա դասեր էր տալիս, Օդեսայում կատարում էր կրտսեր ցեղգորի պաշտան արտասահմանեան հայ մամուլի համար, ստանալով 50 ռուբլի ռ.օճիկ:

Նա սովորութիւն է դարձրել ամեն տեղ ստորագրելիս ներկայացնել իրեն, որպէս «Նոր-Գար» լրագրի նախկին խմբագիր: Նա միշտ ստորագրում էր միայն իր ազգանունը Սպանդարեան:

Երկրից երկրով «Գաշնակցութեան» վրիժառուութիւնից, որը Կոնստ. Սպանդարեանի կարծիքով որոշել էր սպանել մերկացւած պրոֆօկատորին, իմանալով Սպ. Սպանդարեանի նամակից՝ նրա արտասահման մեկնելը, հնարաւոր ենթադրելով Սպ. Սպանդարեանի դիմումը Թրնէվ, կուսակցութեան Ռիբոին, մի բան, որ ինքը Կոնստանդինը խորհուրդ էր տւել եղբորն անել իր նամակներից մէկում, նախատեսելով, որ Սպ. Սպանդարեանի կակամունքները այնուհետև կը դառնան ապացուցած իրողութիւններ, Կոնստ. Սպանդարեանը որոշեց կանխել դէպքերը և անձամբ գնալ

\*) Այս քաղաքըն ևս թարգմանում ենք ռուսերէն թարգմանութիւնից: Ծ. Խ.



գաշնակցականների ձում՝ զղջալու Ղրկելով կնոջը Կ. Պոլիս և ստանալով «Գաշնակցութեան» Կ. Պոլսեան Կոմիտէից խոստում, որ կր խնայեն իր կեանքը, Կոնստ. Սպանդարեան մեկնեց Կ. Պոլիս և այնտեղ սեղանի վրայի վրայի առաջ խոստովանեց, որ 1904-ի յունեարին Պետերբուրգ գնալով Ռոսիկ. Բաժանմունքի պաշտօնեայ Ալէքսանդր Վալսմանի հետ, նա մտաւ, վերջինի առաջարկութեամբ, Ռոսիկ. Բաժանմունքի ծառայութեան մէջ «Ամիրով» մականունով, ընդունելուց յետոյ անմիջապէս զրկեց Կովկաս և այնտեղ ծառայեց մինչև 1904-ի գարունը, երբ իրեն համար անսպասելի կերպով արձակեց պաշտօնից:

Կոնստ. Սպանդարեանին հարցարնելուց յետոյ՝ Կ. Պոլսի Կոմիտէն զրկեց նրան Պարիզ, Մենչիկովին ներկայացելու համար:

Նայն միջոցին Սպ. Սպանդարեանը, որ նոյնպէս Պարիզ էր եկած, ինկատի առնելով Բուրցեվի յեղափոխական կապերը և նրա բայառիկ իրազեկութիւնը պրոֆոկուստիսի վերաբերեալ գործերի մէջ, դիմեց նրան իր մի ծանօթի միջոցով, խնդրելով պարզել իր, Սպանդարի գործը: Բուրցեվ մտածեց Բայց երբ Պարիզ կտու «Գաշնակցութեան» արևմտեան Բիւրօի պատերակ վարանդեանը և իր կողմից դիմեց Բուրցեվին, հաղորդելով նրան Կոնստ. Սպանդարեանի խոստովանութիւնը և նրա Պարիզ գալը Բուրցեվ որոշեց զրաւել Սպ. Սպանդարեանի գործով, կանչեց նրան իր ձում և խոստացաւ պարզել նրա դէմ ուղղած մեղադրանքը: Կոնստ. Սպանդարեանի գալու մասին Սպ. Սպանդարեանին նախօրէր չէր տեղեկացրած: Վարանդեանի համաձայնութեամբ Բուրցեվ իր բնակարանում սարքեց տեսուցութիւն Սպանդարեան եղբայրների և նրանց զէմառդէմը (confrontation) Մենչիկովի հետ, Բուրցեվի և Վարանդեանի համաձայնութեամբ որոշեց հրախրել Մ. Ա. Նատանանին՝ ներկայ գտնելու գործի բնույթեան:

Այդ բնույթեանը պէտք է պարզեր այն նշւթը, որի հիման վրայ կարելի լինէր գումարել միջկուսակցային յեղափոխական տեսանք՝ գործի առթիւ վերջնական վճիռ ընդունելու: Բնույթեան խնդիրները, սակայն, ցոյց չեն տուել Սպ. Սպանդարեանին, ուստի և երբ Սպանդարեանը հրախրւած Բուրցեվի կողմից նրա հետ տեսակցելու, հանդիպեց նրա մտ իր եղբոր և Մենչիկովին, նոյնպէս և Նատանանին ու Վարանդեանին, նա (Սպ. Սպանդարեանը) չունէր ամենափոքրիկ ֆորմալ հիւժ՝ տեսնելու ինքզինքը որեւէ հասարակական, գաղափարական կամ բնական հաստատութեան մէջ, ևս առաւել իրեն մեղադրելու:

Երբ Ս. Սպանդարեանը ներկայացեց Մենչիկովին, վերջինը յանձնեալ նրա շնամաշեց այն անձնաւորութիւնը, որին տեսել էր Ռոսիկ. Բաժանմունքի մէջ իսկ երբ ներկայացրին նրան Կոնստ. Սպանդարեանին, Մենչիկով վճռականապէս յայտարարեց, որ դա հէնց այն անձն է, որ սպասուած էր Ռոսիկ. Բաժանմունքի մէջ Ն. Ա. Մակարովի ընդունելութեան (Ռոսիկ. Բաժանմունքի փոխ-տնօրէնի):

Դեմքերի լաւ յիշողութեամբ՝ դժար էր սխալելու Կոնստ. Սպանդարեանը բացարձակապէս նման չէ իր եղբորը, յայտնեց Ատեանին Նատանանը, նա նիհար, ճարպիկ, արագաշարժ, ձորուբաւոր, — հարուստին մակերի տիպ:

Հարցարնութեան ժամանակ Կոնստ. Սպանդարեանը առաջ ամեն բան հերքում էր, սպա սկսեց շփոթելու, հակասել իրեն, տալ և սպա յետ վերցնել ցուցմունքները: Նատանանի մէջ այդ բոլոր ցուցմունքներից մնացել է այսպիսի սպաւորութիւն. Կոնստ. Սպանդարեանը եղել է Ռոսիկ. Բաժանմունքի գործակալ, — այդ համակալ է. Կոնստ. Սպանդարեանը վերցնում էր զրա համար փող — այդ էլ անհասկած է: Ինչ վերաբերում է մնացածին՝ համարան անհնարին է զանազանել ճշմարտը ստից:

Նայն կարծիքի է Կոնստ. Սպանդարեանի ցուցմունքների նկատմամբ՝ և Բուրցեվի:

Ռուսի գաղափարներ սպացուցելի է ընդունում Կոնստ. Սպանդարեանի բացատրութիւնների այն մասերը միայն, որոնք

կասկած չեն յարուցանում Կոնստ. Սպանդարեանին հարցարնող անձերից ոչ մէկի մէջ:

Կոնստ. Սպանդարեանը յայտնեց, որ Կ. Պոլսում ծանօթանալով Ալէքսանդր Վալսմանի հետ (Ռոսիկ. Բաժանմունքի գործակալ), զնայց նրա հետ միասին Պետերբուրգ, ուր շուտով մտաւ ծառայութեան մէջ, որպէս Ռոսիկ. Բաժանմունքի գործակալ: Մտնելիս նա տացաւ ոչ թէ 1000 ռուբլի, այլ ընդամենը 500, որից 200-ը պիտի տար Վալսմանին: Թիֆլիսում էլի ստանալիս է եղել զրամ, բայց չ'որոշեց թէ որքան: Նայն 1904 թ.ի ապրիլին պաշտօնից արձակեց:

Այդ տեսանքներից զուրս՝ բոլորը կասկածելի է յայտնուած կամ թէ պարզապէս սուտ և առաջ է բերում գաղափարների կողմից, որպէս յատկանշուած Կոնստ. Սպանդարեանի ցուցմունքների:

Այն հարցին՝ թէ ինչու է զնայցել Պետերբուրգ՝ Կոնստ. Սպանդարեանը յայտնեց, որ Վալսմանը հրախրել էր նրան՝ բաց անելու ինչ որ առևտրական տուն, որի համար անհրաժեշտ է ունենալ տեսուցութիւն մինիստրի հետ:

Պետերբուրգում նրան յանկարծ բերին Ռոսիկ. Բաժանմունք, յետոյ 13 օր վախեցնում էին նրան և նա վերջին վերջոյ համաձայնեց մտնել Ռոսիկ. Բաժանմունքի ծառայութեան մէջ, հաստատա որոշուածով ոչինչ տեղեկութիւն չտալ Բաժանմունքին: Բայց երբ Կոնստ. Սպանդարեանին առաջարկեց հաղորդել, Կովկասի ո՞ր քաղաքներն է նա այցելել, նա անունեց այն քաղաքները, որոնց մասին խոսում է Վալսմանի տեղեկագրի մէջ, որ զրկւած է Գուբովիչի միջոցով Ռոսիկ. Բաժանմունք և որ գտնուած է Մենչիկովի մոտ: Այդ քաղաքները, ինչպէս Բուրցեվի հաւատարացրեց, թելադրւած չեն եղել Կոնստ. Սպանդարեանին:

Ռոսիկանական Բաժանմունքի մէջ Կոնստ. Սպանդարեանը խոսել է հայկական շարժման մասին, խոսել է ընդ և ընդհանուր դժբերով: Վալսմանը իբր թէ թելադրել է նրան և խնդրել է բոտ կարելույն լաւա մնալ Տեսնել է Կոնստ. Սպանդարեանը Ռոսիկ. Բաժանմունքի մէջ շատ բարձրաստիճան անձերի հետ:

Եղբոր անունից չի զգուցել, և չէր էլ կարող այդ անել, քանի որ եղբոր գոյութեան մասին իբր թէ մինչև իսկ դիտէին Ռոսիկ. Բաժանմունքի մէջ և նրա (Սպանդարի) մասին խոսում էին նրա (Կոնստանդինի) հետ: Ստացողները ստորագրում էր առաջին անգամ լիակատար անուն-ազգանունով, իսկ յետոյ «Ամիրով» մականունով, որ տեղ են նրան Բաժանմունքի մէջ և որ նա ունեցել է նոյնպէս Կ. Պոլսում: Իր եղբոր հետ Կոնստ. Սպանդարեանը, իր սակելով, չի տեսնել 80-ական թվականներից ի վեր, երբ վերջին անգամը մինչև իր ծառայութեան ուղի որութիւնը եղել է Կովկասում և նրա հետ չի ունեցել ոչ մի յարաբերութիւն: Սակայն Կոնստ. Սպանդարեանի այդ յայտարարութիւնը հէնց այն ժամանակ, հարցարնութեան միջոցին, հերքեց Սպ. Սպանդարեանի կողմից, որ հաղորդեց երկու եղբայրների միջև եղած թղթակցութեան մասին, որ նա համաձայն է ներկայացնելու Կոնստ. Սպանդարեանը հրաժարեց ներկայացնելու Սպանդարի նամակները:

Եղբայրները հանդիպեցին Բուրցեվի մոտ, որպէս թշնամիներ: Երբ Սպ. Սպանդարեանն իմացաւ խոստովանութեան մտնումները, այդտեղ իսկ հեկեկաց: Եղբայրների հարցաքննութիւնից՝ և Բուրցեվի և Նատանանի եկան այն եզրակացութեան, որ Կոնստ. Սպանդարեանը երիտասարդ օրերում, այսինքն Կովկաս եղած ժամանակ, մինչև 80-ական թվականները ի շարն է եղել գործադրելիս իր եղբոր անունը և թեթեւամիտ կենցաղ է վարել:

Այն հարցին՝ թէ ինչու առևտրական գործերով Պետերբուրգ գնալով՝ նա համաձայնեց է գործակալ դառնալ, Կոնստ. Սպանդարեանը նախ յղեց բնույթեան վրայ, սպա իր ցանկութեան՝ համազելու կառավարութիւնը վերադարձնելու հայերին իրենց եկեղեցական գոյքերը և վերջապէս, շփոթելով, յայտնեց, որ յոյս է ունեցել ազատել տալու բանախց իր եղբոր, Սպ. Սպանդարեանին: Ար այդ ժամանակ



նրա եղբայրն պատ էր — Կոնստ. Ապանդարեանն իմացու  
այդ, իր ասելով, միայն թիֆլիսում:

Մոսկուայով, ակնբերութեն, որ Սպ. Ապանդարեանի Մոսկու  
արտուրելը նա, Կոնստ. Ապանդարեանը, իմացել էր միայն  
կովկաս գալուց յետոյ, հարցաքննութեան ժամանակ նա  
ասաց, որ Մոսկուայից անցնելիս ուղեց տեսնել եղբոր հետ,  
բայց նրա որդուց, որ ապրում էր այն ժամանակ Մոսկուա-  
յում, իմացաւ, որ եղբայրը տակաւին չի եկել և հնարաւո-  
րութիւն չունենալով սպասելու, մեկնեց, առանց տեսակցելու,  
կովկաս: Երբ Նատանսոն հարցրեց նրան, թէ ի՞նչ գրգռու-  
մանով էր նա գնացել և Պօլիս գաշնակցականներէ ձուս  
և խոստովանել — Կոնստ. Ապանդարեանը բացատրեց, որ նա  
այդ արել է նախ՝ փրկելու համար անմեղ եղբոր կեանքը,  
եղբորդ՝ արել է, որովհետեւ քանի որ նա, Կոնստ. Ապան-  
դարեանը միեւնոյն է պետք է մերկացէր, ուստի աւելի  
ձեռնառու էր անձամբ խոստովանել, պայման դնելով, որ  
դրա համար չսպանն իրեն:

Մենչիկովին ցուցադրելուց ու հարցաքննելուց յետոյ  
Կոնստ. Ապանդարեանն արձակուց և մեկնեց Պարիզից:

Սպ. Ապանդարեան խնդրում էր խմբագրել լրագրական մի  
ծանօթութիւն, որի մէջ ամփոփուած լինէին բնութեան ար-  
դիւնքները:

Տարարխտար-սր, այդ ծանօթութեան խմբագրումը  
քննելու ժամանակ, առաջ եկան թիւրիմացութիւններ,  
չնորհիւ այդ բնութեանը մասնակցող անձանց յարաբերու-  
թիւնների բարդութեան, որի հետեւանք «Դրօշակ»-ի մէջ  
յայտնեց մի ծանօթութիւն, որ մի կողմից զուգահիւսուած  
էր ոչ կատարելապէս Նատանսոնի և Բուրցեվի տեսակէտի  
հետ, որոնք չէին գտել զործի մէջ տեսայններ՝ մեղադրելու  
համար Սպ. Ապանդարեանին պրօֆօկատօրական կամ լրտե-  
սական զործունէութեան մէջ, միւս կողմից՝ ոչ բոլորովին  
ճիշտ բնորոշում էր տալիս բնութեան, անւանելով այն  
նախնական բնութիւն յեղափոխական կուսակցութեանց  
ներկայացուցիչների մասնակցութեամբ \*):

\*) Յեղափոխական Ատեանը, որի երեք անգամներից  
մէկը ռուսական Սօցիալ-Դեմօկրատ կուսակցութեան  
ներկայացուցիչն էր, միւսը բոլորովին չէզոք մարդ և  
մէկը միայն «Դաշնակցութեան» համակիր Սօց-Յեղա-  
փոխական կուսակցութեան ներկայացուցիչ, աւելի  
քան անաչառ ու ճշմարտութեան հետամուտ, —  
Յեղափոխական Ատեանը, ասում ենք, որին ոչ ոք  
չի կարող մեղադրել որևէ զիջող, ներողամիտ ըն-  
թացքի մէջ դէպի «Դաշնակցութիւնը», այդ Ատեանը  
ներկայ դէպքում մեղադրանքի որևէ ակնարկ չի նե-  
սում «Դրօշակ»-ի խմբագրութեան հասցէին, չի ասում  
— և չի կարող ասել — թէ այդ ինքնին աննշան թիւ-  
րիմացութիւնը արդիւնք է «Դրօշակ»-ի ղեկավարների  
անշիտակութեան, այլ պարզապէս վերագրում է այն՝  
բնութեանը մասնակցող անձերի յարաբերու-  
թեանց բարդութեանը: Այս կէտը պիտի  
պարզաբանենք:

Սպ. Ապանդարեանի խնդրած լրագրական ծանօթու-  
թիւնը խմբագրեցին Բուրցեվ և Նատանսոն վարան-  
դեանի ներկայութեամբ: Բուրցեվ իր ձեռքով կազմեց  
փորձիկ սեւագրութիւն և յանձնեց վարանդեանին: Վեր-  
ջինս այդ սեւագրութեան համաձայն պէտք է խմբագրէր  
հայերէն բանաձևը, որ պէտք է հրատարակէր նախ  
«Դրօշակ»-ում:

Բայց նախ քան իր մեկնելը, «Դրօշակ»-ի ներկայ-  
ացուցիչը վերստին խորհրդակցեց Մ. Ա. Նատանսոնի հետ՝  
«Դրօշակ»-ի մէջ հրատարակելիք ծանուցման պարունա-  
կութեան ու ձևի մասին: Բուրցեվ խնդրեց վարան-  
դեանին՝ նախ քան ծանուցումը մամուլին յանձնելը,

Ծանօթութեան պարունակութիւնը հետեւեալն է.

Յեղափոխական այլ և այլ հատուածների պատկանող մի  
քանի անձեր, կազմակերպելով նախնական քննու-  
թիւն Սպանդար Ապանդարեանի դէմ ուղղուած յայտնի  
մեղադրանքի առթիւ, պարզեցին անտարակուսելի կեր-  
պով, որ ռուս ոստիկանական Գեպարտամենտի գործակալ-  
պկնաւ եղել է Սպ. Ապանդարեանի աւագ եղբայրը  
կօնստանդիւն Սպանդարեանի, որ ցենզորի  
պաշտօն է վարում Օդեսայում:

1904 թ. յունւարին նա ներկայացել է Պետերբուրգ,

զրկել իրեն ժընէվից վերջնական խմբագրութիւնը հա-  
յերէն և ռուսերէն լեզուներով, հայերէնը մեղադրեալին  
յանձնելու համար, իսկ ռուսերէնը իրեն համար  
«Դրօշակ»-ի խմբագրութիւնը կատարեց իր բոլոր յանձ-  
նառութիւնները: Խմբագրուած ծանօթութիւնը հայերէն  
լեզուով և ռուսերէն բառացի թարգմանութեամբ զրկեց  
ժընէվից Բուրցեվին, որպէս զի եթէ նա որևէ դիտո-  
ղութիւն ունէր անելու, անէր ժամանակին՝ Նատանսոնի  
հետ խորհրդակցելով: Ութ օր սպասեց «Դրօշակ»-ը և  
ոչինչ դիտողութիւն չստանալով Պարիզից՝ սպագրեց:  
«Նախնական բնութիւն յեղափոխական կուսակցու-  
թեանց պատկանող անձերի մասնակցութեամբ» բառերը  
առնուած են Բուրցեվի ու Նատանսոնի սկզբնական սեւ-  
ագիր-բանաձևից: Դատի ժամանակ, երբ Ատեանի նախա-  
գահը հարց տուց Մ. Ա. Նատանսոնին՝ արդեօք «Դրօ-  
շակ»-ի հրատարակած ծանուցումը՝ բնութեան տր-  
դիւնքի մասին համապատասխան է իր, Նատանսոնի  
գնահատութեան ու ձևակերպութեան՝ Նատանսոն պա-  
տասխանեց, որ ըստ էութեան — այո. ըստ ձևի փոքրիկ  
չեղում կայ՝. իսկ Բուրցեվ, բնականաբար, ոչինչ չէր  
կարող ասել «Դրօշակ»-ի հրատարակած բանաձևի դէմ,  
քանի որ նա ստացել էր այդ բանաձևը տպագրու-  
թիւնից ութ օր առաջ, գտել էր, անտարակոյս, համա-  
ձայն իր ստորագրած ֆորմուլին, հակառակ դէպքում  
կը նախազգուշացներ մի երկտողով «Դրօշակ»-ի խմբա-  
գրութեանը — որի հետ այդ միջոցին կենդանի նամա-  
կագրութեան մէջ էր — և ցոյց կը տար բանաձևը Նա-  
տանսոնին:

Քանի որ մեղադրեալ կողմը աշխատում էր — ինչ-  
պէս ամեն ուրիշ պարագայում — շարամուտութեան  
որևէ հետք գտնել «Դրօշակ»-ի խմբագրութեան ըն-  
թացքի մէջ, Ատեանը պարզ ու կտրուկ հարց դրեց Վ.  
Լ. Բուրցեվին՝ ստացել է նա արդեօք «Դրօշակ»-ի բա-  
նաձևը և արե՞լ է այդ առթիւ որևէ դիտողութիւն  
«Դրօշակ»-ին Վ. Լ. Բուրցեվ պատասխանեց, որ այո  
ստացել է և հայերէնն էլ յանձնել է մեղադրեալին,  
որ «Դրօշակ»-ին որևէ դիտողութիւն չի արել, որ ըստ  
էութեան «Դրօշակ»-ը ճիշտ է ձևակերպել նաև իր,  
Բուրցեվի մտքերը:

Դատարանի համար պարզ էր այնուհետև, որ թիւ-  
րիմացութեան պատճառը յամենայն դէպս «Դրօշակ»-ի  
ընթացքի մէջ չպէտք է փնտրել: Եւ ահա այդ շփոթ-  
կէտն է, որ դատական արձանագրութեան մէջ պատ-  
ճառաբանուած է այս տարամբ բանաձևով. «չնորհիւ  
յարաբերութիւնների բարդութեան»:

Մեղադրեալ կողմը պնդում էր մեծ եռանդով Ատեանի  
առաջ, թէ այդ «Նախնական բնութիւն» արդէն պար-  
զել, սպառել էր խնդիրը, թէ նա Սպ. Ապ. -ին կատա-  
րելապէս անմեղ ճանաչելով, արձակել է նրան, մինչդեռ



մի գլխաւոր լրտես-գործակալի ուղեկցութեամբ, գրեւէ է իբրև ագենտ, ստացել է գրամ, ուղարկել է յատուկ քանձնարարութեամբ Ասփրաս, պատել է Թիֆլիս, Բագու, Ալեքսանդրոպոլ և այլա կողմել ու ուղարկել է Պետերբուրգ մի ընդարձակ ցանկ այն հայ գործիչներին, որոնք իր կործիրով վարում են «անշտատական» (սեպարատիստ) շարժումը Ռուսահայաստանում:

Այդ ցանկը ժամանակին կը հրատարակէի «Գրօշակ»-ի մէջ: Քննութիւնը ընդունեց գրա հետ միասին, որ խնդիրը վերջնականապէս չի լուսարձակուած: Կոնստ. Սպանդարեանը վճռականապէս ժխտում է, որ ինքն իբր թէ ներկայացել է եղբոր անւան տակ: Մնում է պարզել թէ ինչո՞ւ Պօլիցիական Գեպարտամենտի փաստաթղթերում, ի ն ջ պ է ս ն ա և ի բ ա զ և կ ա ն ձ և բ ի կ ո ղ զ ի ջ վ և Բ ո ռ ւ ր ց և վ ի ի ն ա ռ ւ ա ծ յ ա յ ա տ ա ր ա ո ռ ո լ թ ի շ ը ն և բ ի ժ ժ մ ատնացոյց են լինում ի մ ք ա գ ի բ Սպանդար Սպանդարեանի վրայ, որպէս ագենտի:

Ուստի քննութիւնը որոշեց — գործի վերջնական պարզաբանութեան համար — կազմակերպել միջկուսակցային յեղափոխական ատենան, հէնց որ կըստացէին անկախաւ լրացուցիչ տեղեկութիւնները:

Այս նախնական քննութեան, ինչպէս և ամբողջ գործի, մանրամասնները կը հրատարակէին ժամանակին «Գրօշակ»-ի մէջ:

Տպագրելով ներկայ ազգարարութիւնը — որ ընդունւած է քննութեան բոլոր անդամների կողմից և հաղորդուած նաև պ. Սպանդար Սպանդարեանին — խմբագրութիւնս յոյս է տածում, որ յետագայ քննութիւնը կը կարողանայ պարզել խնդիրը իր բոլոր պարագաներով և փոփոգում է, որ ի վերջոյ կասկածի սուտեր անգամ չմնայ՝ գէթ հայ խմբագրի պատւի վրայ:

«ԳՐՕՇԱԿ»

Բուրցեվի զրկեց այս ծանօթութիւնը Պարիզ մնացած Սպ. Սպանդարեանին, հետեւեալ նամակով, 26 յունւար 1911 թ.

Պարոն

Աղարկում եմ ձեզ «Գրօշակ»-ի խմբագրութիւնից ըստացածս փաւտագիրը: Կարծում եմ, որ այդ փաստագիրը

«Գրօշակ»-ը իբր թէ գիտակցաբար խեղաթիւրում էր պատմութիւնը, ձգձգում էր գործը և յղանում էր նոր յեղափոխական Ատենանի գաղափարը: Ինչպէս որ Արձանագրութեան յետագայ էջերից էլ կը պարզւի՝ այդ գ ա տ ի ա ն հ բ ա թ Ե շ տ ո լ թ ի ւ ը ամենաորոշ և վճռական ձևով ընդունել էին թէ՛ նատանսոն և թէ՛ Բուրցեվի Երկու եղբայրների հանդիպման յուզիչ և զբամատիկ տեսարանից յետոյ՝ թէ նրանք երկուսը և թէ «Գրօշակ»-ի ներկայացուցիչը հակուած էին արդարացնելու Սպ. Սպանդարեանին (նոյնիսկ «Գրօշակ»-ի ներկայացուցիչն էր, որ առաջին շարժումն արեց, առաջարկելով արգարացնել մեղադրեալին): Սակայն գործի մէջ, այնուամենայնիւ, մութ կէտեր կային:

— Իննըուներին տոկոսը խօսում է ի նպատակ անմեղութեան, յայտարարում էր Մ. Ա. նատանսոն, այնուամենայնիւ, բացարձակապէս արգարացնելու առ այժմ իրաւունք չունինք, երկու եղբայրների յարաբերութեան մէջ մի մութ կէտ կայ, որ փոքրիկ կասկած է ներշնչուում: Պէտք է նաև պարզել, թէ ինչո՞ւ Ոստիկ. Բաժանմունքի թղթերի մէջ արձանագրուած է խմբագիր Սպանդար Սպանդարեան, ուստի անհրաժեշտ է կազմակերպել Միջկուսակցային Յեղափոխական Ատենան:

Խնդիրը վերջնականապէս պարզուած էր նաև Բուրցեվի համար: Ուստի երկուսով որոշեցին՝ որ գումարի Յեղափոխական Ատենանը

խոյն կը փորատի բոլոր վնասակար գրոյցները, որոնք կային մինչև այս:

Իսկ պարզել ամբողջ գործը (այսինքն, իմանալ թէ ով է Ոստիկ. Բաժանմունքի մէջ մեղաւոր, որ ցուցակի մէջ մտցրած է ձեր անունը) — այդ բանը կ'անէ յատուկ քանձնաժողով, իսկ ես զրանով կըզարուեմ անկասօրէն և իմ արդիւնքները կը հաղորդեմ նրան:

Գուք հասկանում էք, ինչպէս բացատրել եմ Ձեզ, որ եթէ այդ գործը ցանկանում ենք պարզել, պէտք է տանել շատ զգուշութեամբ — այլապէս Ոստիկ. Բաժանմունքը կը պատասխանէ, թէ բնաւ ոչինչ չգիտէ: Ի հարկէ, ինչպէտք է ձեր հասցէն Ռուսաստանում և ես ձեզ կ'ուղարկեմ աստիճանաբար իմ քննութիւնների արդիւնքները:

Բուրցեվի հայեացքները մինչև մի յայտնի աստիճան բաժանում էր և նատանսոն: Վերջինի մօտ, ինչպէս ինքը վկայեց, ծագել է համոզում (возникла уверенность), որ Սպ. Սպանդարեանը ճակատագրական թիրիմացութեան զոհ է: Այնուամենայնիւ, նատանսոն ևս անհրաժեշտ է համարել Ատենանի հաստատումը, քանի որ չպարզուած էր մնում այն՝ թէ ինչո՞ւ ամեն տեղ երևան է գալիս խմբագիր Սպ. Սպանդարեանի անունը:

«Գաշնակցութիւն» կուսակցութիւնը յանձին Վարանդեանի դիմումն արեց Սօցիալիստ-Յեղափոխականների կուսակցութեան և Ռուսաստանի Սօցիալ-Գեմոկրատ բանւորական կուսակցութեան, խնդրելով կազմակերպել Յեղափոխական Ատենան, Սպանդարեանի գործի վերջնական պարզաբանութեան համար:

1911 թ. մարտի 23-ին կայացաւ Յեղափոխական Ատենան առաջին նիստը, ուր հրաւիրուած էին Վարանդեան, իբրև ներկայացուցիչ «Գաշնակցութեան» և Սպ. Սպանդարեանը:

Այդ նիստի արձանագրութեան մէջ, որ ստորագրուած է Վարանդեանի և Սպ. Սպանդարեանի կողմից, մտցրեցին նրանցից իւրաքանչիւրի հետեւեալ յայտարարութիւնները:

Վարանդեանը հետեւալ յայտնեց Ատենանին.

«Երբ «Գրօշակ» թերթը հրատարակեց տեղեկութիւնները «Նոր-Գոր» լրագրի յարաբերութիւնների մասին Ոստիկ. Բաժանմունքի հետ — այնուհետեւ երևան եկան նոր հանդամանքներ — Սպանդարեանի եղբայր Կոստանդինի խօստովանութիւնը Ոստիկ. Բաժանմունքի հետ ունեցած յարաբերութիւնների մասին — որոնք հարկադրեցին «Գաշնակցութիւն»-ը նոր քննութիւն կատարելու Սպ. Սպանդարեանի գործի առթիւ, ամենամեծ անաշտանութեան զբաւակնութեամբ: Այդ քննութիւնը վերջնականապէս չլուծեց «Գաշնակցութեան» յարուցած խնդիրները, ուստի կուսակցութիւնը որոշեց յանձնել Սպ. Սպանդարեանի գործը յեղափոխական ատենանի քննութեան, որի համար յանուն նոյն անաշտանութեան, դիմումն արեց Սօցիալիստ-Յեղափոխական կուսակցութեան և Ռուսաստանի Սօցիալ-Գեմոկրատ բանւորական կուսակցութեան, խնդրելով ընտրել մի մի դատաւոր, որպէս զի երկու ընտրուած դատաւորներ իրենց հերթին ընտրէին երրորդ դատաւորին: «Գաշնակցութեան» ներկայացուցիչը յայտնում է, որ ընդունում է ներկայ Ատենանի ձեռնհասութիւնը, հպատակուած է նրա վճռին, այն բոլոր խնդիրների նկատմամբ, որ նա կ'առաջադրէ իր քննութեան, ինչպէս նաև բոլոր դատական պրօցեսուսայ կարգադրութիւններին»:

Սպ. Սպանդարեան յայտնեց Ատենանին, որ նա չգիտէր, թէ «Գաշնակցութիւն»-ը ատենան էր գումարում, որ «Գաշնակցութիւն»-ը նրան նախապէս չէր հաղորդել իր դիմումների մասին յեղափոխական կուսակցութիւններին, որ իր գործի համար նախնական քննութիւն չի եղել: Սպանդարեանը համաձայն է հպատակել դատարանի վճռին այն բոլոր հարցերի նկատմամբ, որ դատարանը կ'առաջադրէ իրեն գործի առթիւ, նմանապէս հպատակուած է Ատենանի բոլոր պրօցեսուսայ կարգադրութիւններին: Սպանդարեանը խնդրում է դատարանին՝ վճռել հետեւեալ խնդիրները. 1) «Մեղադրում է արգեօք նա, Սպանդարեանը — այն ապացոյցներով, որ ներկայացնում է «Գաշնակցութիւն»-ը — Ոստիկ



Բաժանմունքի հետ յարաբերութիւն ունենալու և բազմաթիւ անազնութեան մէջ 2) Շիտա՞յ է արդեօք վարել «Դաշնակցութիւն»ը, հրատարակելով «Դրօշակի մէջ իր սկզբնական մեղադրանքը և յետագայ պարզաբանումը: Սկզբում Սպ. Սպանդարեանը զբւղէ էր և մի երրորդ հարց պարտաւոր է արդեօք «Դաշնակցութիւն»ը հասուցանելու նրան զէ՛լ մասամբ այն վնասները, որ նա կրել է այդ հրատարակութեամբ, աւելցնելով, որ նա Սպանդարեանը, կը պահանջէ իր գործողութիւնների ազատութիւնը այն հարցերի մէջ, որոնց վերաբերմամբ դատարանը ինքզինքը ձեռնհաս չի համարի: Սակայն առաջին նիստի վերջում իսկ Սպ. Սպանդարեանը յետ վերջրեց այդ յայտարարութիւնը:

Դատարանի առաջարկութեամբ Վարանդեան և Սպան. Սպանդարեան տւին իրենց բացատրութիւնները գործի առթիւ: Վարանդեանը ներկայացրեց գրաւոր զեկուցում, որով մանրամասն կերպով պատմեց այն պայմանները, որոնց մէջ ստացւել ու հրատարակւել են տեղեկութիւնները՝ Սպ. Սպանդարեանի կարծեցեալ ազնուական գործունէութեան մասին: Ապա անդնելով այն շրջանին, երբ սկսեցին երևան գալ շուկներ անձերի շփոթութեան մասին, Վարանդեան յայտնեց, որ դեռ մինչև Կոստ. Սպանդարեանի Կ. Պոլիս գ.յը, դաշնակցականների մէջ սկսեցին պտտել շուկներ, ինք թէ Բաժանմունքի գործակալ էր Սպ. Սպանդարեանի եղբայրը. — սմանք ասում էին, թէ այդ եղբայրը փաստարան է Պետերբուրգում, ուրիշները ասում էին, թէ դա Կոստ. Սպանդարեանն է: Ստացւեց նամակ Թիֆլիսից, կատարելապէս փտասհելի մի անձից, որ հաղորդում էր թէ Սպ. Սպանդարեանի որչին ուղղակի ասել է իրեն, նամակագրին, որ ազնուոր իր հօրեղբայրն է, Կոստ. Սպանդարեանը, զբարձրիչ Օչեստայում: Այդ խօսակցութեան ներկայ գտնւող Սպ. Սպանդարեանը գլխով հաստատական նշան է արել ի պատասխան թղթակցի հարցումին՝ ճիշտ է արդեօք \*):

\*) Հարկ չկայ յիշատակելու, թէ որպիսի անհետնութեան անակնկալ էր այդ տարածւող շուկը անձերի շփոթութեան մասին, — մի բան, որի նմանը, Մենշիկովի ասելով, երբէք չի եղած Ռուսիկ. Բաժանմունքի պատմութեան մէջ, «Դրօշակի խմբագրութիւնը, այդ լուրն առնելուն պէս, դիմեց այլ և այլ կէտերում գտնւող ընկերներին, որոնք տասնեակ տարիներ ապրած լինելով Թիֆլիսում, շատ թէ քիչ ծանօթ կը լինէին «Նոր-Դար»ի խմբագրի և եղբայրների յարաբերութիւններին: Ահա նրանց պատասխանները, որ ներկայացւած են բնագրի մէջ Ատեանին: Մեկը գրում էր 25 սեպտ. 1910 թ. Փրանսիայից.

«Նամակը խորապէս զարմացրեց ինձ... Տարբարխտաբար շատ բան չունիմ հաղորդելու: Յիշում եմ միայն, իմ Թիֆլիս եղած ժամանակ պատմում էին, որ նա («Նոր-Դար»-ի խմբագիրը) մի երիտասարդ եղբայր ունի, տխուր հոգակ վայելող: Աւրիշ ոչինչ չեմ յիշում»:

Մի այլ ընկեր գրում էր Ամերիկայից.

«Զուում եմ, որ քո աւած հարցերին չեմ կարող պատասխանել: Յիշողութեանս մէջ մի բան միայն կայ. — այդ պարտը մի եղբայր ունէր, որը եղել է Պոլսում, — անպէտք և անփտասհելի մի արարած: Նա ունէր և մի երկրորդ եղբայրն է. ողբան լսել եմ, մի տիպիկ ամբէրիստ, որը փաստարանութեամբ գրադեւելու հովեր ունէր: Աւրիշ տեղեկութիւն չունիմ»:

Առաջին կօնկրետ և արժանահաստ տեղեկութիւնը Կոստ. Սպանդարեանի մասին ստացանք Թիֆլիսեան մի նամակից, որի վրայ ակնարկում է Ատեանը: Ահա այդ տեղեկութիւնը (նամակը թւակիր չէ. ստացւած է ժընէվում 6 հոկտ. 1910-ին).

«Հարցնում էր, թէ ո՞րտեղից ենք իմանում այդ լուրը եղբոր մասին: Կոստ. Սպանդարեանը գլխաւոր անձնաւորը

Սակայն, շուկները Պետերբուրգի փաստարանի մասին ինչ որ մտրեցին, իսկ Կոստ. Սպանդարեանի մասին եղած տեղեկութիւններին Վարանդեանի ընկերները չհաւատացին, որովհետեւ ոչ որ նրանցից 1904 թւին չէր տեսել Կոստ. Սպանդարեանին Թիֆլիսում և առհասարակ Կովկասում: Աւելացրէք և այն՝ որ երբ դաշնակցականները հարց ու փորձ են արել Մենշիկովին՝ անձերի շփոթութեան առթիւ՝ Մենշիկով յայտարարել է, որ իր ամբողջ ծառայութեան ընթացքում Բաժանմունքի և առհասարակ բաղադրական տարիկանութեան մէջ՝ նա ոչ մի անգամ չի լսել, որ այդպիսի սխալ տեղի ունեցած լինի անձերի մէջ: Եւ մինչև Սպանդարեան եղբայրների դէմ առ դէմ գալը Պարիզում՝ հասնուածը Սպանդարեանի մեղաւորութեան մէջ՝ ոչ մի բանով չի խախտւել: Այդ դէմ առ դէմը, ինչպէս արդէն ասւած է, եղաւ առաջին շրջակէտը Սպ. Սպանդարեանի գործունէութեան գնահատման մէջ: Եանձնագործի բոլոր անդամը ներք, նրանց թւում և «Դաշնակցութեան» ներկայացուցչեկան այն համոզման, որ Սպ. Սպանդարեան զոհ է ձակատագրական սխալի:

«Նրան պէտք է արդարացնել», ասում է Վարանդեանը: Բայց «գործի մէջ կան մութ տեղեր, որ տնհրածեշտ է պարզաբանել և նրանց մէջ առաւելապէս էականը, ի՞նչպէս եղաւ որ Ռուսիկ. Բաժանմունքի պաշտօնական իղթերի մէջ

թեանը, իբրև Vorwärts ի թղթակցի և տեղեկութիւններ խնկրեցի. այդտեղ բացւեց մի ընդարձակ խօսակցութիւն իմ և նրա մէջ: Ներկայ էին որդին և մի քանի ս.գ.ներ (սօցիալ-դեմոկրատներ): Նրանց յորձակումները... այնքան կիրառւ էին, որ ես չկարողացայ հմ թղթակցի դերում մնալ... Այդտեղ էր ահա, որ որդին, հօր և մնացածների ներկայութեամբ տեղեկութիւններ տւեց հօրեղբոր մասին: Ինքը գլխաւոր անձնաւորութիւնը գլխի նշաններով համաձայնութիւն էր տալիս որդու ասածներին: Եղբայրը չգիտեմ որն է և քանի տարեկան է: Նրա անունն է Կոստանդին և այժմ Օդեսայում՝ զինգորի պաշտօն է կատարում: Թէ որտեղ է եղել 1904 ին, չգիտեմ: Լուսանկարը ևս չեմ կարող ասայժմ հայտնայթել:

Իրզրումի մեր ընկերը նոյն հարցի առթիւ գրում էր (նամակը թւակիր չէ, ստացւած է ժընէվում հոկտ. 18-ին 1910 թ.).

«... Իմ կործիրս է, որ նա ինքն է (Սպ. Սպանդարեանը) ծառայութեան մէջ մտածը և ոչ իր եղբայրը... Մի՞թէ Թիֆլիսում չէին ծանուցում Սպ. Սպանդարեանին և ի՞նչպէս կարող էր եղբայրը նրա անունով ներկայանալ մանաւանդ որ իսկական Սպ. Սպ. ը բանտարկւած էր և կատարելապէս ծանօթ ուստիկանութեան: Եթէ իրօք Մենշիկովի թղթերի մէջ կան յուսուցիչ, «Պոլսում եղած» խօսքերը, պէտք է ենթադրել միայն մի բան, այն է՝ որ Սպ. Սպ. գրանով ուղեցել է իր հետերը կորցնել տալ:

Ոչ ոք — խելահաս և անաչառ դիտողներից — չէր կարող հաւատալ այդպիսի հրեշաւոր միտսիֆիկացիի ա յ ի Եւ ի՞նչպէս հաւատալ՝ որ ռուս բարձր ուստիկանութիւնը իրեն «ինտելիգենտ աշխատակից» է ընտրել — կ ո վ կ աս Ե ան գ ո թ Ե ր ի հ ամ ար — Կ. Պ օ լ ս ի մ ի օւ ս ու ը չ ի...:

Չէր կասկածում Սպ. Սպ. ի մեղաւորութեան մէջ՝ և Բ օւ ր ց Ե վ Ե հ ամ թ է ի ն չ էր գրում նա ի պատասխան մեր նամակին, ուր այդ խնդիրը որակւած էր «ին որ հ ր գ աւ օ ր», առեղծւածային ածականներով:

Սիրելի ընկեր,

«... Ես քիչ եմ ծանօթ նրա (Սպանդարեանի) գործին, բայց չեմ հասկանում, թէ ինչո՞ւ դուք այն համարում էք ինչ որ ի ս օ ր հ ր գ աւ օ ր բան. ի հարկէ, վերջնական կործիրս կը յայտնեմ գործի հետ ծանօթանալուց յետոյ, բայց աւ ա յ ժ մ իմ մէջ կտակածի սուեր անգամ չկայ, որ Ս. Ս. ը մեղաւոր է:»



արձանագրում է Սպ. Սպանդարեանի անունը: Միմիայն այդ Սպանդ. "Դաշնակցութեան" ոչ բոլոր շրջաններում է հաստատում այդպիսի նոր վերաբերմունք Սպ. Սպանդարեանի վերաբերութեանը և Վարանդեանը լսում է յանդիմանութիւն "Թուրքութեան" համար Դաշնակցականների այդ շարունակող թերահաւատութիւնը դեպի Սպ. Սպանդարեանը պատճառարանում էր զլիսաւորապէս հետեւեալ հանգամանքներով. 1) Վայսմանի մատուցութիւնների բնոյթը, որ անւանւած են Սպ. Սպանդարեանի շատ կուսակցական հակառակորդներ. 2) Սպ. Սպանդարեանի նիւթական ծանր կացութիւնը. 3) Նրա իր պարտի թելադրութեամբ կանգ առաւ այդ նկատումների վրայ, — աւելով կողմերին ամենալայն հնարաւորութիւն՝ հիմնաւորելու իրենց առաջադրութիւնները: Էւ ամբողջ բնական նիւթի խնամառ ուսումնասիրութիւնից յետոյ, եկաւ այս եզրակացութիւններին.

Վե տ 1. — Վայսմանի մատուցութեան բնոյթը ամենից բիշ է մերկացում Սպ. Սպանդարեանին. իսկ իբրև հեղինակի գործ, այդ մատուցութիւնը (գօծում) այնքան տարբարունակն անգրագէտ է, երևան է հանում արեղիսի կատարեալ անժանօթութիւն կողմիսի գործերի հետ (տերրօրիսանների շարքն են նետւած խաղող քաղաքացիներ, վրացական իշխանը, հայ նախօճայիսար և այլն), որ վերագրել այն Սպ. Սպանդարեանի գրքին, որը 30 տարի լրագիր է խմբագրել այդ երկրում, չկայ ոչ մի հիմք, իսկ ներկայութիւնը այդ ցանկի մէջ "Դաշնակցութեան" պատկանող մի բանի անձանց անունների, որոնց գործունէութիւնը եղել է շատ քիչ կոնպիրատիվ, նսխպէս դեռ մատնացոյց չի լինում Սպ. Սպանդարեանի մեղաւորութեան վրայ՝ այդ գործի մէջ \*):

Վե տ 2. — Դատարանի մէջ հաստատուեց, որ Սպ. Սպանդարեանը իրեն համար ծանր ժամանակում, դիտէր օգնութիւն ստանալ իր համախոհներից, հարուստ և ազգերկան մարդկանցից, և առ հասարակ, ի բացակայութեան ուրիշ փաստերի, այդ նկատուածը չէ կարող իբրև փաստ ծառայել ի նպատակ անազնի վարուածի:

Վե տ 3. — Դատարանի մէջ հաստատուեց, որ այն շրջանում համարեա նոյնքան ժամանակ բանա են նստել Թիֆլիսում "Դաշնակցութեան" երկու աչքի բնկնող անդամները Վտեանին յայտնի են շատ դէպքեր, երբ կատարելապէս ազնիւ յեղափոխականներ, շատ այլազան պատճառներով, նստել են բանտում ոչ համաչափ իրենց մեղքին: Սպ. Սպանդարեանին դեպի մայրաքաղաքները գնալու թոյլատրութեան մէջ դատարանը չի տեսնում առանձնապէս անհանգստացուցիչ հանգամանքներ, զլիսաւորապէս նոյն նկատումներով, որոնց հիման վրայ "Դաշնակցութեան" համարում էր Սպ. Սպանդարեանին իր քաղաքական հակառակորդ. բացի դրանից, դատարանին յայտնի է, որ աչքի բնկնող հայ յեղափոխականներ արտօրելիս են եղել նոյն ժամանակներում դեպի արեղիսի հայկական կենտրոններ, ինչպէս Ռոստով և Օդեսսա:

Վե տ 4. — Այդ կետի վերաբերմամբ Վտեանը անկարող եղաւ համաձայնել "Դաշնակցութեան" ներկայացուցչի փաստերի հետ, որովհետև նրանք բոլորը հիմնւած էին այն ենթադրութեան վրայ՝ թէ ոչ Վայսմանը, ոչ կօծում. Սպանդարեանը, ոչ երկուսը իրարից գատ, ոչ էլ միասին չէին կարող խորել Ռոսիկ. Բաժանմունքը: Ռուսաձայնիցով մատչելի նիւթը և հիմնելով Մեծնիկոյի ցուցմունքների վրայ, որը տեսել է կօծում. Սպանդարեանին Ռոսիկ. Բաժանմունքի մէջ, ունեցել է իր ձեռքում՝ բոլոր այն թղթերը, որոնք

անցնում են "յատուկ բաժանմունք" -ից, որ գրուցել է նոր կողմիսեան գործակալ: Սպանդարի մասին Գուրգոյիչի և Մեղնիկի վի հետ, որոնք պնդել են, թէ երկու Սպանդարեանների մասին Ռոսիկ. Բաժանմունքի մէջ խօսք չի կարող լինել, — Դատարանը հնարաւոր է համարում՝ բնոյնել (ենթադրել), որ կօծում. Սպանդարեանը ներկայացել է Բաժանմունքի մէջ, իբրև "Նոր-Գար"ի խմբագիր, ամենին չպնդելով, սակայն, որ դա միակ հնարաւորութիւնն է՝ բացատրելու համար Սպանդար Սպանդարեանի անւան ներկայութիւնը Ռոսիկ. Բաժանմունքի ցուցակի մէջ (судь считаетъ возможнымъ допустить, что Константинъ Спандарьянъ былъ представленъ въ Департаментъ, какъ редакторъ "Нор—Дара", воее не отстаивая, однако, что это единственная возможность объяснить присутствие имени Спандара Спандарьяна съ спискѣ Департамента Полициі):

Քննելով այս կէտը, Վտեանը յիշում էր, որ "Դաշնակցութեան" համար գատական ատեան գումարելու զլիսաւոր շարժառիթն էլ հէնց նրա ցանկութիւնն էր՝ պարզել, ի՞նչ պէս է մտել "Նոր-Գար"ի խմբագիր Սպ. Սպանդարեանի անունը Ռոսիկ. Բաժանմունքի թղթերի մէջ: Գործի բոլոր հանգամանքներից՝ դատարանը չկարողացաւ գուրս բերել այդ խնդրի վերջնական լուծումը: Գ ւ տ ա ռ ա ն ը և կ ա ռ ծ ա ու մ է, որ ա ու ս ա կ ա ն ի ղ ա ղ ա ն ն ա լ է կ ա ն զ ո յ ու լ թ իւ ն ու ն ե յ ո ղ պ ա յ մ ա ն ն ե ռ ի մ է ջ ն ա չ ի կ ա ղ ո ղ լ ու ծ ե լ ա յ ղ խ ն ղ ի ղ ո ղ ո չ ա յ ժ մ, ո չ է լ մ ե ռ ձ ա ո ղ ա յ ա ղ ա յ ժ մ է ջ, — և միայն դիպածը, որի վրայ դատարանը իրաւունք չուէր յոյս դնել, կարող է պարզարանել մութ անգղը (Изъ всёхъ обстоятельствъ дѣла судъ не могъ вывести окончательнаго рѣшенія этого вопроса. Судъ полагаеть, что при существующихъ условіяхъ русской дѣйствительности рѣшить этотъ вопросъ ни теперь, ни въ ближайшемъ будущемъ онъ не можетъ; и только случайность, на которую судъ не въ правѣ расчитывать, можетъ разъяснить темное мѣсто):

Ռերմէն շ'որոշելով այն հանգամանքները, որոնց մէջ Սպ. Սպանդարեանի անունն ընկել է Ռոսիկ. Բաժանմունքի աշխատակիցների ցանկի մէջ, դատարանը իրեն մատչելի եղած ամբողջ բնական նիւթի մէջ չգտաւ ոչ ուղղակի և ոչ անուղղակի ցուցմունքներ, որոնք իրաւունք տային կասկածելու Սպ. Սպանդարեանին՝ թէ նրա գիտութեամբ կամ համաձայնութեամբ արւած լինի այդ (իր անւան) արձանագրումը: Այդպիսով, ոչ մէկը այդ շորս կէտերից, առանձին-առանձին, ոչ էլ բոլորը մեկտեղ ապացոյց չեն կարող լինել դատարանի ուշքում Սպ. Սպանդարեանի աշխատակցութեան՝ քաղաքական սասիկանութեանը:

Սպ. Սպանդարեանը տւեց Վտեանին ամենամարման բացատրութիւններ՝ իր Թիֆլիսից մեկնելու վայրկեանի, Մոսկա գնալու, այնտեղ մնալու, Պետերբուրգ փոխադրելու և կողմիս վերագառնալու մասին, յղեկով բազմաթիւ վկաների ու ակնմատենների \*) վրայ, որոնք վկայ են եղել նրա մեկնումին, ապրելուն և կողմիս վերագառնալուն և ներկայացրեց մի բանի ապացոյցներ (հաշիւ, անցաթուղթ — проходное свидѣтельство): Այդտեղ պարզեց, որ Պետերբուրգում ժամանակաւորապէս մնալու իրաւունքը Սպանդար Սպանդարեանին էր և բերել յատուկ խնդիր ներկայացնելով դեներալ Լերիէին:

Պետերբուրգ լինելով Սպ. Սպանդարեանը միաժամանակ իր անցագրի հոգեւորի հետ սարքում էր իր գործերը մատուցի գործերի զլիսաւոր վարչութեան մէջ, ուր նրան յաջողեց պաշտպանել իր իրաւունքը՝ խմբագրելու լրագիրը շ'ապրելով Թիֆլիսում:

Այդ միջոցներին Պետերբուրգ եկաւ իշխան Գօլիցին և Սպ. Սպանդարեան որոշեց ձեռք բերել Գօլիցինի քարտու-

\*) Վայսմանի տեղեկագիրը հայկական շարժման և հայ գործիչների մասին՝ գեաեղւած է սոյն Արձանագրութիւնից յետոյ

\*) Այդ վկաները, ընկանաբար, Պարիզ չէին, Վտեանի առաջ ալ կողմատու ու Ռուսաստանում: Սպ. Սպանդարեան յիշատակում էր մի շարք անուններ Մ. Խ.



զարի միջոցով իրաւունք՝ վերադառնալու Արփիսուս և կարգի բերելու իր լրագրային և անձնական գործերը։ Այդ թղթաւու թիւեր վերջիվերջոյ նրան տուեց և 1905 թ.ի սեպտեմբերի վերջին Ապ. Ապանդարեան Մոսկուայի վրայով գնաց Թիֆլիս, կանգ առնելով ճանապարհին Նախիջևանի և Բագրեի մէջ, բարեկամների հետ խորհրդակցելու համար։

1905-ի ապրիլի 17-ին Ապ. Ապանդարեանը վերադարձել է Թիֆլիսու Իսկույն և եթ նրան առաջարկել է հետանալ Թիֆլիսից և միայն Արիմ-Գիրեյի միջամտութեան շնորհիւ աջակցել է նրան մնալ այնտեղ։ 1905-ի դարձան և ամառը Ապ. Ապանդարեանի մաս եղել է երեք անգամ խուզարկութիւն։

Ապ. Ապանդարեանի մանրամասն պատմութիւնը իր կեանքի բազմաթիւ կողմի մասին այն ժամանակներում, ամբաստանաւոր յղումներով վիանքի ու դժուարութեան վրայ, ընդհանուր առմամբ կատարեալ արժանահաւատութեան ապաստանութիւն էր անուս։ Սակայն, յետագայում հաստատուեց մի անձնութիւն Ապ. Ապանդարեանի յուցումներին մէջ, այն է. նա պնդում էր, որ իր եղբորը Պետերբուրգում չէ տեսել մինչդեռ, ինչպէս մանրամասնօրէն կը պատմէ յետագայում, եղբայրները հանդիպել են Պետերբուրգում։ (Подробный рассказ Спандара Спандарьяна о фактической стороне его жизни в эту эпоху, подкреплённый ссылками на свидѣтелей и на документы, в общем, производил впечатление полной достоверности. Однако впоследствии была установлена одна неточность в показаниях Спандара Спандарьяна, а именно: он утверждал, что брата своего в Петербурге не видал, между темъ, какъ это подробно будетъ изложено дальше, встреча братьевъ в Петербурге произошла.)

Տալով այդ յուցումները, Ապ. Ապանդարեանը ներկայացրեց Ատեանին վերը բերած կօստ. Ապանդարեանի նամակները։

«Դաշնակցութեան» ներկայացուցչի համար այդ նամակները հիմք ծառայեցին՝ յայտնելու Ապ. Ապանդարեանին նոր մեղադրանք \*). և նա առաջարկում էր հետևեալ հիպոթեզը.—Ապ. Ապանդարեանը տեղեակ լինելով կօստ. Ապանդարեանի ծառայութեան և Պոլսում առևտրական գեպանատան մէջ և երկիւղ կրելով երկարատեւ բանտարկութիւնից ու վարչութեան խիստ վերաբերմունքից, դիմել է եղբոր միջամտութեան, առաջ է բերել նրա միջոցով դեպանատան միջամտութիւնը իր գործի մէջ, համոզել է կօստ. Ապանդարեանին մտնել Ստաիկ. Բաթանմունքի ծառայութեան մէջ և յետոյ, հանդիպելով նրան 1904 թ. թիւի յունւարին Մոսկուայում, Տաղորդել է նրան այն աւելանքները, որոնք յետագայում մտել են Ապանդարեանի տեղեկագրի մէջ։

Այդ հիպոթեզի հիմք են ծառայում, «Դաշնակցութեան» ներկայացուցչի կարծիքով, առանձին տեղերը կօստ. Ապանդարեանի նամակների մէջ (Ապանդարին ուղղւած)։

«Դու միշտ միայն բո մասին ես մտածել, իսկ ես եղել եմ միամիտ եմ» (չորրորդ նամակ)։

«Ապանդար, Ապանդար, ես ինձ զոհարեցի եմ բո սիրոյն համար» (երրորդ նամակ)։

«Դու աշխատում ես անպատճառ սեւացնել ինձ, ինձ վրայ բարդելով մարդու Տիրալի է։ Այսպէս եմ ես հատուցանում» (չորրորդ նամակ)։

«Արա՛ ինչ որ հնարաւոր է, որպէս զի գաս այստեղ» (երկրորդ նամակ)... «Հաս կարելի է՝ ուրիշ տեղ պիտի գնանք» (նոյն տեղը)։ «մենք երկուսս մեկտեղ պէտք է պարզենք գործը ամբողջ ազգի և մարդկութեան առաջ» (նոյն տեղը)։

Ատեանի կարծիքով, այդ ֆրագները կորցնում են իրենց սպեցիֆիկ իմաստը, եթէ կարդալ նրանց կապելով նամակ-

ների նախընթաց ու յետընթաց պարունակութեան հետ. այդ ֆրագները վկայում են միայն կօստ. Ապանդարեանի ստեղծարձակ լրբութեան մասին, մի մարդու, որ անտարակուսելի կերպով հաստատուած է որպէս Ստաիկ. Բաթանմունքի գործակալ, որ առաջարկում է պարզել գործը «ազգի ու մարդկութեան առաջ». կամ թէ այդ ֆրագները յայտնուած են մի խաղ, որին նա դիմում է որոշ նպատակով. համոզել Ապ. Ապանդարեանին, որ նա հրաժարւի պարզելու յետագայում նրա, կօստ. Ապանդարեանի առնչութիւնը դէպի գործը և յամենայն դէպս չտայ եղբոր ձեռքը իր մեղքի գրաւոր ապացոյցներ, որովհետեւ վախենում էր իր կեանքի համար։

Այդ պայմանների մէջ և ի հաշիւ առնելով կօստ. Ապանդարեանի ինքնատիպ ոճը, նմանապէս և այն նպատակը, որին նա, Ատեանի կարծիքով, հետամտում էր ըստ երևոյթին— համոզել Ապ. Ապանդարեանին Փորձով պաշտպանութեան առաւելութեան մէջ—Ատեանը գտնում է, որ նամակները յայտնում են իբրև մէկը լուսաւոյն ապացոյցներից՝ որևէ հասկերաչի գործակցութեան բացակայութեան՝ եղբայրների միջև։

Ի հաստատուած գաղափարների այդ տեսակ հայեաղքի կօստ. Ապանդարեանի նամակների վրայ՝ կարելի է բերել և հետևեալ տեղերը եղբայրների թղթակցութիւնից. Առաջին նամակում, դեռ չ'իմանալով Թիֆլիսում պտտող շշուկները և Ապ. Ապանդարեանի բարեկամների կասկածները, կօստ. Ապանդարեան բարեացակամօրէն խոստանում է իբրև եղբայր և մարդ կատարել իր պարտքը՝, ասում է, որ «միջոցներ է ձեռք առել», «պատում է նամակի և խորհուրդների և յայտարարում է, որ ինչ որ կարևոր բան ունի հարգելու»։

Երբ որ Հասպարանեանի նամակից տեսնում է, որ իր դէմ կասկածներ կան և որ Ապ. Ապանդարեանը տալիս է իր նամակները բարեկամներին, մէկէն իմէկ նամակների տոնը և բովանդակութիւնը փոխուած են «նա ստացայ պատասխան, որը աւելի աշխատում է փորձել ինձ, բան թէ պարզել ճշմարտութիւնը»։ «նա ինձ այնպիսի հարցեր է տալիս, իբր թէ ես մասն ունիմ այդ գործի մէջ կամ կարծես թէ ես եմ սարքել և պէտք է իմանամ»...

Պարզ է, որ ճշմարիտ պատասխաններ չեն կարող լինել, անկեղծութիւն նոյնպէս Պատասխանելով ամպամած ֆրագներով, գուհիկ ու փրուսոյց մեկով, կօստ. Ապանդարեանը ձգտում է տալ իր եղբոր պաշտպանութեանը այն ուղղութիւնը, որը իրեն ամենից աւելի ձեռնառու է։

կօստ. Ապանդարեանի չորրորդ նամակից պարզ երևում է, որ արդէն անսնուն միջնորդը չէ, այլ ինքն Ապ. Ապանդարեանը, որ հարց է տալիս եղբորը՝ չի՞ նա արդեօք շահագործել նրա անունն ու դիրքը։

Այդպէս չեն թղթակցում նախկին գործակիցները \*):

\*) Ցարաբախտար, հրապարակի վրայ չկան Ապ. Ապանդարեանի նամակները, գրւած կօստ. Ապանդարեանին. մենք չգիտենք, թէ ինչ է գրել նա Թիֆլիսից իր բարեկամ Հասպարանեանի միջոցով և նրանից անկախ Այդ նամակների պատճէնը, տարաբախտարար, չէր բերել Ապ. Ապանդարեանը, թէև չէր զլացել հետն առնելու—Երոպա ուղևորւելիս — իր եղբոր կօստ. Ապանդարեանի բոլոր նամակները (վերջինի մի մասը միայն կորցնելով), թէև չէր մոռացել բերելու նոյնիսկ 1904-ին իր Մոսկուա—Պետերբուրգ ուղևորութեան միջոցին հիւրանոցներում արած ծախսերի հաշիւներն անգամ, որ պահպանել էր Յամենայն դէպս «Դաշնակցութեան» ներկայացուցչի համար այդ ամբողջ գործի ընթացքում մի բան ակներև էր. «այն» որ Ապ. Ապանդարեանը միանգամայն հեռու էր եղբորը, կօստանդիներին, «Դաշնակցութեան» ձեռքը մատնելու ձգտումից, ընդհակառակը, աշխատում էր խնայել, թագ-

\*) Այս բառի առթիւ անհրաժեշտ է դարձեալ փորձիկ բացատրութիւն. «Դաշնակցութեան» ներկայացուցիչը շեշտել է այդ և ուրիշ շատ գէպերում, մինչև Ատեանի վերջին նիստը, որ Ապ. Ապանդարեան մնում է մեղսակցութեան ԿԱՍԿԱՄԻ տակ։



Եթէ Կոնստ. Ապանդարեանը յիրաւի փրկած լինէր իր եղբոր, կամ թէկուզ նրա զիտուիթեամբ փորձած լինէր այդ անել,—նա չէր սահմանափակուի այդպիսի մթութիւններով ի պատասխան իր նախկին գործակցի լիբր Տեղուիթեան, սե ապերաստութեան, գործակցի՝ որ ձգտում էր ուղղել նրա վրայ դաշնակցականների պատժող բազուկը:

Կոստ. Ապանդարեանի նամակների ուշագիւր ուսումնասիրութիւնը բերում է Ատեանին անտարակուսելի համոզման՝ որ Ապ. Ապանդարեան ձգտել է դուրս կորցել եղբորից խոստովանութիւններ, որոնք կը պարզէին Կոնստ. Ապանդարեանի ճշմարիտ դերը և որ Կոնստ. Ապանդարեանը աստիճանաբար է միայն հասկացել, թէ ինչպիսի կասկածներ գոյութիւն ունին իր դէմ:

Դատի այդ շրջանի ընթացքում, երբ դատարանը բնուում էր Ապ. Ապանդարեանին ուղղած նոր մեղադրանքը, «Դաշ-

ցնել, վարագուրել եղբորը. թէ Կոպկասում, թղթակիցների ինտերվիւնների միջոցին, թէ Պարիզում նախնական քննութեան ժամանակ, Բուրցեփի և Նատանսոնի ներկայութեամբ, իրեն դուրս հարցումին՝ կասկածում է արգեօք որևէ մէկին, կասկածում է արգեօք իր եղբոր Կոնստանդինին,—նա վճռականապէս պատասխանում էր՝ ոչ ոչ «Սուրհանգակ» թերթի աշխատակիցը հարց էր տալիս Ապ. Ապ.—ին.

— Գուցէ՞ շեր անունը շփոթել են ուրիշի անուն հետ.

Ապ. Ապ. պատասխանում է.

— Օ, այդ մասին մի հարցրէք, գիտեմ, դուք ակնարկում էք այն բանի վրայ, որի մասին խօսում են... Միթէ՞ Տնարաւոր է... Ինչպէս կարող եմ ես ասել այդ... Իս ձեզ կը խնդրէի նախազգուշացնել ն ը ա ն ց, որովհետև այդ Բուրցեփը, այդ Իվանով-Մենշիկովը... (սես «Բակու» ասերէն թերթը, 1 հոկտ. 1910 թ.):

Նոյն տակտիկը — և արտասահմանու մի Ապ. Ապ.—ը որոշել էր մինչև վերջ զըպարտութիւն «գոռալ Պաշնակցութեան» հասցէին, մինչև վերջը վտրագուրել եղբորը, որի էութեան ու արարքներին վաղուց ի վեր լաւատեղեակ էր. շատ լաւ գիտէր, անտարակոյս, Կ. Պոլսում ունեցած նրա դերը, և այն բոլոր մանրամասները—Կոնստանդինի մասին—որոնք 1910-ի աշնան, «Դրօշակ»ի ծանուցումից յետոյ, գրւում էին Թիֆլիսից ամբրիկահայ թերթին: Անձամբ և հրապարակօրէն՝ Ապ. Ապ.—ը չէր ուզում որևէ ակնարկ անգամ անել եղբոր մասին, և երբ Եղափոխական Ատեանը հարց դրեց նրան՝ կը համաձայնէր արգեօք յանձնելու Կոնստ. Ապանդարեանի նամակները «Դրօշակ»ի ներկայացուցչին՝ հրատարակելու համար, Ապ. Ապ.—ը բուռն կերպով ընդդիմացաւ:

Վարագուրելու, եղբոր գարշելի ազգադաւ յանցանքները ծածկելու մտահոգութիւնը ինքնին չափազանց աննպաստ մի վկայական էր Ապ. Ապ.—ի քաղաքացիական և ազնուութեան համար, բայց շարկապելով մնացած բազմաթիւ նկատումների հետ՝ սուեր էր ձգում նաև նրա քաղաքական ազնուութեան վրայ: «Դաշնակցութեան» ներկայացուցիչը, հակառակ առհասարակ բացատրելու այդ խնայումի ու վտրագուրման տակտիկը եղբայրական զգացումների թերագրութեամբ, չէր կարող, սակայն երբեմն չմտածել, որ այդ տակտիկի շարժառիթը թերևս այն է՝ որ Ապ. Ապ.—ը չի ուզում գրգռել եղբորը և ստիպել նրան անցանկալի գաղտնիքներ բաց անելու:

Օ. Խ.

նակցութեան» ներկայացուցիչը մի քանի անգամ խնդրեց յետաձգել գործը, նոր սպացոյցներ ներկայացնելու և բնական համար Ապանդարեան եղբայրների յարաբերութիւնները: Չտեսնելով առարկութիւն Ապ. Ապանդարեանի կողմից, որ նոյնպէս ցանկանում էր բազմակողմանիօրէն պարզել գործը՝ —դատարանը յարգեց այդ դիմումը:

Չնայեա՞ծ սակայն, որ դատական քննութիւնը, շնորհիւ այդ բոլորին ձգձգուեց մինչև յունիսի վերջը, ամբողջ նոր նիւթը եղաւ միայն Կոնստ. Ապանդարեանի մի նամակը, ՂԸԲԿ-ւած 1911 թ.ի գարնան Կ. Պոլսի, իր մի ծանօթին:

«Նա աղեան չեմ եղել, ինձ ուրիշ պաշտօն էր տրւած բոլորովին և ես գրած ունիմ», թող հանն, հայերէն է զըբուածքս և այն տանն տեսնեն, թէ դատապարտելի եմ, թէ մարդ եմ: Հատ կը ցաւիմ, որ դու կը կասկածիս եղբորս վրայ, երբէք նա այդպիսի բան չի անիւր. յիրաւի նա սիրտ չունի, նա մեր ամբողջ բնութանիբը կործանեց, նա իմ վրայ ամենապատ յարեք տարածեց և կարող է տարածել. նա փիս կնկայ նման բամբասանքով կը պարսպի... Բայց ես իրեն սիրած եմ, իմ արիւնս իմ եղբայրն է, բայց և ճշմարտութիւնն է, թէ նա այդ բոլորս չէ... Նա կարող էր ինձ մղել բնեւէն, բայց ինքը ոչ...»

Ենտեմ Կոնստ. Ապանդարեանը հարցում է այն մասին, որ դեռ Թիֆլիսում խոստովանել է մի քանի գաշակցականների և իր եղբայր Միքայէլին, որ եղել է Աստիկ. Բաժանմունքի ծառայութեան մէջ:

«Նա կամոզիկոսին դիմեցի, որ ինձ համար հանգանակութիւն բնէ, իմ օգտին... Նամակ տաի Մօսկվա... Բաժնում Մ. ինձ դրամ ժողովեց մինչև Պետերբուրգ... Գնացի որ Ապանդարի տեսնեմ և նամակը տանեմ Մօսկվա: Բայց Ապանդարի հետ նստիլ խօսիլ չ'ըլլար, միշտ կոխ է. ինչ բանի վրայ խօսք ուզեմ ձգել, նա բոլորովին կը փախէ, իրեն ներսն է հետ կուզէ բռնաւոր վարել: Նամակին համար բոյ, պատ քաշեց՝ թէ օգուտ չ'ունենար, ճանապարհահամարս մի կուտան և կը ճամբեն. ես այ մտածեցի, թէ կարելի է իրեն կ'օգնեն... Աշխատեցայ խօսք ձգել, թէ ինձ համար կ'րտեն, թէ ես ուսուաց մարդ եմ, բայց այնպիսի խօսակցութիւններ խառնեցան, որ այլ մնաց միայն այսբանս, որ երբ բի՛ թէ այս կուտակցութեան տեղը որտեղ է—թէ ծրնէվ, բոյ ես կ'երթամ այնտեղ որ պարզեմ, նա ըսաւ միայն օգուտ չունի, միայն կարծ ես անոնց ծառայութիւն բնել, ուրիշ ոչինչ... Ամբ կարծ միջոց տեսութեանն յետոյ երկրորդ օրը որ ճամբայ պիտի ելնէի, անգամ չտեսայ, մէյ մըն ալ այս վերջերս յանկարծ Բուրցովի մօտ տեսայ...»

\*) Նտարագիրը մերն է:

Օ. Խ.

\*\*) Կոնստ. Ապանդարեանի այդ նամակը, որ դեռ ուրիշ հետաքրքրական կէտեր ևս ունի և որի ամբողջական պարունակութիւնը զետեղում ենք յետագայում, դուրս ձգելով միայն ընտանեկան հանդամանքների մասին եղած ակնարկները, — այդ ուշագրաւ նամակը թէ մեզ համար և թէ Եղափոխական Ատեանի համար՝ մի անակնկալ յայտնութիւն էր: Սկզբից ի վեր «Դաշնակցութեան» Արևմտեան Բիւրօի հետապնդած խնդիրներից մէկն էր՝ իմանալ, չե՞ն հանդիպել արգեօք երկու եղբայրները 1904-ին Թաիլն, մայրաքաղաքում: Դեռ նախ քան Ատեանի գումարումը, այսպէս կուլած նախնական քննութեան ընթացքում՝ Նատանսոն և Բուրցեփ գրին այդ հարցը յաջորդաբար երկու եղբայրներին էլ և ամեն անգամ ստացան պատասխան, թէ չեն հանդիպած: Ապ. Ապանդարեանը ասում էր, որ 80-ական թերթից ի վեր չէր տեսած իր եղբայր Կոստանդինին: Նոյնը պնդեց նա Ատեանի առաջ: Բայց ահա մեր ձեռքն է հասնում Կոնստանդինի այդ նամակը, ուր ոչ միայն աւելի որոշ կերպով է շեշտուած նախկին նամակներում եղած մութ ակնարկները իր եղբոր գործակցութեան



Այդ նամակը «Գաշնակցութեան» ներկայացուցչի կարծիքով վկայում է նախ՝ Սպ. Սպանդարեանի թեւադրութեան (զրգման) մասին նա կարող էր մղել ինձ այդ բնելու» և երկրորդ՝ Սպ. Սպանդարեանի կողմից Ատեանի առջև թաղցրած եղբայրների յորտարութիւնների մասին, 1904 թ. ինչու Ծանօթանալով նամակի պարունակութեան հետ, որի ստացումը Սպան. Սպանդարեանին զեռ ևս յայտնի չէր, Ատեանը հրաւիրեց նրան արտակարգ նիստի և վճարահանապէս դրեց նրան հարց, տեսնել՞ է արդեօր իր եղբայրը կօնստ. Սպանդարեանի հետ 1904-ին և յետագայ թւականներում:

Այս անգամ Սպ. Սպանդարեան պատասխանեց, որ տեսնել է 1904-ի նոյեմբերին հետեւեալ պարագաներում մի անգամ կօնստ. Սպանդարեանը մտեցաւ նրան երեկոյան այն փոքրոցում, որ գտնուում էր Սպ. Սպանդարեանի բնակատան մօտ Աերջինը, սակայն, չ'ուզեց որևէ խօսակցութեան մէջ մտնել նրա հետ, որովհետև իրեն յայտնի էր, որ իր թիֆլիսեացի եղած ժամանակ կօնստ. Սպանդարեանը ոչ միայն աշխատում էր վարկաբեկել նրան, իբրև խմբագրի, ամեն կերպ իրեն ի ջոյց դնելով, որպէս աւելի պատշաճ մարդու լրագրի խմբագրութեան համար, այլ և նոյնիսկ Սպ. Սպանդարեանի բնտանիքի մէջ պահում էր իրեն անթոյժատրելի կերպով:

Հետեւեալ օրը, գալով նիկոլայեմսկի կայարանի բուֆետը ճաշելու, Սպ. Սպանդարեանը հանդիպեց եղբորը և երբ վերջինը փորձեց խօսակցութեան մէջ մտնել նրա հետ, նա (Սպ. Սպանդարեանը) յայտնեց նրան իր բոլոր զգուշացումները և հեռացաւ առանց մնալ բարովի Այ կաթողիկոսի, ոչ Ստիկ. Բաթանուների, ոչ Գաշնակցութեան՝ մասին խօսք չի եղել, Սպ. Սպանդարեանի ասելով:

Ատեանը մեծ զգուշութեամբ է վերաբերում կօնստ. Սպանդարեանի նամակին, բանի որ նրա մէջ ևս բաւական պարզ է նպատակը — արդարանալ Գաշնակցութեան՝ առաջ, խոյս առնելու սպասուող գաղտնագրութիւնից: Նամակի մի բանի մասերի ստուգելը ակնբեր է. «Ես ազնեւտ չեմ եղել, ասում է կօնստ. Սպանդարեանը, իր իսկ խոստովանութիւնից յետոյ «ես ունիմ հայերէն լեզուով գրաւոր փաստաթուղթ», շարունակում է նա, աշխատելով այդ անմտութեամբ սպասուող ինքզինքը պատժից: Հաւատար չա-

մասին, այլ և յայտնած է, որ երկու եղբայրները հանդիպել են 1904-ին Պետերբուրգում: Գատաւորների պէս՝ մենք ևս չափազանց թերահաւատ էինք — և ենք այսօր էլ — դէպի կօնստ. Սպանդարեանի ճշմարտախօսութիւնը. բայց և մտածում էինք՝ «ստախօսը երբեմն կարող է ճիշտ բաներ էլ ասել» և յանձնեցինք նամակը Ատեանին: Աերջինը որոշում է կանչել առանձին նիստի մէջ Սպ. Սպանդարեանին, «Գրօշակ»-ի ներկայացուցչի, բացակայութեամբ և — առանց յայտնելու կօնստանդինի նոր նամակի մասին, յորդորում է անպայման խոստովանել ճշմարտութիւնը 1904-ի հանդիպումի առթիւ: Սպ. Սպանդարեանը, հասկանալով, որ մինչև այն թագադրած հանդիպումի գաղանիքը արդէն բացւած է, և որ իր կողմից նորէն թագցնելը կարող է անցանկալի հետեւանքներ ունենալ — խոստովանում է: Այդ խոստովանութիւնը ի միջի այլոց պարզեց մի բան, որ անկարելի էր թուում «Գրօշակ»-ի ներկայացուցչի աչքում. — այն՝ որ կօնստ. Սպանդարեանի նամակների մէջ կարող են լինել նաև ճշմարտութեան տարրեր, և որ հետևապէս, չի կարելի բացարձակ սկսել պատժեամբ վերաբերել և դէպի նոյն նամակի միւս յայտնութիւնը նաև կարող էր մղել ինձ, ինչպէս նաև դէպի մի շարք ուրիշ ակնարկները, նախկին նամակներում, որ արդէն բերեցինք դատական արձանագրութեան մէջ:

փով անհաւանական է, որ նա իբր թէ խոստովանել է Գաշնակցականներին՝ իր ծառայութեան մասին Ստիկ. Բաթանուների մէջ, բանի որ այդ դէպքում կուսակցութիւնը արդէն 1904-ին կ'իմանար նրա մատնիչութեան մասին:

Այդպիսի պայմաններում ի՞նչ նշանակութիւն կարելի է տալ այս ֆրագին. «նա կարող էր ինձ մղել այդ անելու»:

Նրա մէջ չկայ նոյնիսկ հաստատութեան բաւականաչափ որոշութիւն և գուցէ կայ միայն ենթադրութիւն, յայտնուած ի պատասխան Վ. Պօլոյի ծանօթի հարցապնդումին: Բայց եթէ մինչև անգամ նա յայտնէր ուղղակի մեղադրանք, այն ժամանակ ևս կօնստ. Սպանդարեանի այդպիսի յայտարարութեան պարագայ, անփաստ լինելը չի կարող լինել բաւականաչափ հիմք՝ որևէ եզրակացութիւնների համար:

Հաւատար չափով բաւական չէ, Ատեանի կարծիքով, կօնստ. Սպանդարեանի մի սոսկ յայտարարութիւնը, թէ իբր նա Պետերբուրգում արել է խոստովանութիւն Սպ. Սպանդարեանին — մի բան, որ ի դէպ նորից պատմուած է սովորական կիսատութիւններով ու դիտարկելով միտութիւններով — որպէս զի թերահաւատութեամբ չվերաբերել Սպ. Սպանդարեանի կատարելապէս ճշմարտանման բացատրութիւններին:

Աերջինը բացատրեց Ատեանին, որ իր եղբոր հետ հանդիպելու մասին նա առաջները չի խօսել երկու պատճառով. նախ չէր ուզում՝ չօշափել գործի հետ էական ոչ մի առնչութիւն չունեցող միջոցէպը, բայց որի առթիւ նա կը հարկադրուի տալու այնպիսի բացատրութիւններ, որոնք ծանր էին նրա համար և վերաբերում էին զուտ բնական կան յարաբերութիւններին. երկրորդ՝ նա համարեա դատի են սկզբից զգացել է, որ Վարանդեանը առիթ է միայն փնտրում՝ յայտարարելու համար, որ գործը պարզ չէ, որ եղբայրների յարաբերութիւնները յանցաւոր են, որ կուսակցութեան մեղադրանքները հիմնաւոր են, և պացուցանելու համար, թէ որքան իր վիճակը ծանր էր դատարանի մէջ, յիշատակում էր այն՝ թէ ինչպիսի բժախնդրութեամբ և մեղադրական դիտումնաւորութեամբ է վերաբերում «Գաշնակցութեան» ներկայացուցչիը կօնստանդինի նամակներին:

Սպ. Սպանդարեանի հարցաբնուութիւնից յետոյ, «Գաշնակցութեան» ներկայացուցչիը յայտարարեց, որ համարում է կօնստ. Սպանդարեանի հարցաբնուութիւնը անխուսափելի Սպ. Սպանդարեան միացաւ այդ խնդիրքին և դատարանը յետաձգեց գործը, հետեւեալ որոշելով:

«Գատարանը կատարելապէս համաձայն է Վարանդեանի հետ, որ կօնստ. Սպանդարեանի ցուցմունքներին չի կարելի հաւատ ընծայել և որ միայն պատահաբար նրա ցուցմունքներից կարելի է դուրս կորզել ճշմարտութեան էլեմենտներ և որ այդպիսով այդ վկան լուրջ նշանակութիւն չի ներկայացնում: Ի նկատի առնելով, սակայն, որ Վարանդեանն այնուամենայնիւ պնդում է կօնստ. Սպանդարեանին հրաւիրելու մասին և որ Սպ. Սպանդարեանն դրա դէմ չի աւարկում, բայց և դրա հետ միասին հնարաւոր չգտնելով, գործի հանգամանքների մէջ, ստիպել Սպ. Սպանդարեանին սպասելու անորոշ ժամանակ, դատարանը որոշեց:

Անել մի փորձ ևս՝ կօնստ. Սպանդարեանին բերելու, այն է՝ զրկել նրան նամակ, յանձնարարելով «Գաշնակցութեանը»՝ ձեռք առնելու իր միջոցները կօնստ. Սպանդարեանին հրապարակ կոչելու համար. եթէ երեք շաբաթաւոր ենթադրուած կօնստ. Սպանդարեանից կրտստչի պատասխան, որով նա կը համաձայնի գալ, նշանակել որոշ ժամանակամիջոց և սպասել այդ ժամանակամիջոցը, եթէ չեն լինի դրոշմ առարկութիւններ Սպ. Սպանդարեանի կողմից: Այդ վերջին պարագայում, նաև եթէ կօնստ. Սպանդարեանը կը հրաժարի գալուց կամ երեք շաբաթուայ ընթացքում բնաւ չի պատասխանի, — այն ժամանակ դատարանը իրաւունք է վերապահում՝ հրաժարելու այդ վկային հրաւիրելուց»:

Նշանակուած ժամանակամիջոցն անցնելուց յետոյ, տեսնելով, որ կօնստ. Սպանդարեանը երևան չի գալիս, դատարանը ի նկատի առնելով, որ հետագայում ձգձգումներ յայտնուած են աննպատակ և որ ուրիշ, դատի միջոցին ենթադրուած լրացուցիչ բնական գործողութիւնները ճանաչուած են գա-



տարանի կողմից մասամբ աւելորդ, մասամբ անիրագործելի և որ „Պաշնակցութեան“ ներկայացուցչի ու Սպ. Սպան-դարեանը աւել են իրենց եղբարեակիչ բացատրութիւնները, դրեց այն խնդիրները, որ ենթակայ էին դատարանի վճռին. դրա հետ միասին բնորոշեց ի գիտութիւն նաև Սպ. Սպան-դարեանի խնդիրը՝ բննելու իր դրամական յաւակնութիւնները „Պաշնակցութեան“ հանդէպ:

ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԱՏԵԱՆԻ ՎՃԻՌՔ \*)

Յեղափոխական Ատեանը, կազմած Պարիզում Է. Յ. Պաշնակցութեան նախաձեռնութեամբ, բննելու համար այն գործը, որ ծագել է „Նոր-Պար“ չայ լրագրի խմբագիր Սպանդար Ամիրջանեան Սպանդարեանի և „Պաշնակցութեան“ միջև, շնորհիւ այն բանի, որ վերջինի կենտրոնական օրգան „Պրոշակ“ թերթի մէջ հրատարակել է մեղադրանք Սպանդարեանի դէմ, իբր նա ունեցել է յարաբերութիւններ Ստիկ. Դեպարտամենտի հետ:

Ունենալով իբրև անդամներ՝ Ա. Ի. Ֆէյտ, ընտրւած իբրև գառաւոր, Սօց.-Յեղափոխական կուսակցութիւնից, Բ. Ի. Իգօրև, ընտրւած նոյն պաշտօնով Ռուսաստանի Սօց.-Դեմօկրատ Բանւորական կուսակցութեան կողմից և Ա. Ֆ. Ստաւլ, ընտրւած իբրև գառաւոր և միանգամայն Ատեանի նախագահ վերոյիշեալ երկու գառաւորներին կողմից:

Բննելով Ատեանին ներկայացւած փաստագրերը, լսելով իրազեկների (էկսպերտների) եղբարեացութիւնը և վկաների ցուցմունքները, նմանապէս և Սպանդարեանի ու „Պաշնակցութեան“ ներկայացուցչի բացատրութիւնները, առաջագրեց իր լուծման՝ հետևեալ խնդիրները:

1. Մեղադրւում է արգեօք Սպանդարեանը—գատի մէջ պարզւած հանգամանքներով—թէ նա եղել է Ստիկ. Բաժանմունքի ծառայութեան մէջ:
2. Մեղադրւում է արգեօք Սպանդար Սպանդարեանը, թէ նա (կամ նրա գիտութեամբ, իր ընտանիքը), իր վիճակը թեթեւացնելու համար կամ ուրիշ շարժառիթներով, դրդել է կօնստանտին Սպանդարեանին՝ մանելու Ստիկ. Բաժանմունքի ծառայութեան մէջ:
3. Մեղադրւում է արգեօք Սպ. Սպանդարեանը այն բանի մէջ, թէ կօնստ. Սպանդարեանը Ստիկ. Բաժ. ծառայութեան մանելուց յետոյ՝ ինքը (Սպանդարը) գործակցել է նրան՝ բաղաբական խուզարկութիւնների մէջ:
4. Բարեխիղճ կերպով է արգեօք վարել „Պաշնակցութիւնը“, մեղադրելով մամուլի միջոցով Սպանդար Սպանդարեանին Ստիկ. Բաժանմունքի հետ յարաբերութիւն ունենալու մէջ և ունեցել է նա արգեօք հիմքեր՝ համարելու մեղադրանքի աւելանքը, իբրև արժանահաւատ փաստեր:
5. Չե՞ն խախտել արգեօք „Պաշնակցութեան“ կողմից ձևական (ֆորմալ) երաշխաւորութիւնները իրաւունքների, որոնք պատկանում են անհատին, որի դէմ հրապարակով ուղղւում է մի այդպիսի մեղադրանք:

\*) Ամբողջական համար՝ վերստին հրատարակուած են:

Առաջին երեք հարցերին Ատեանը պատասխանում է բացասաբար: Դատի մէջ պարզւած գործի հանգամանքները ոչ միայն չը հաստատեցին ա) թէ Սպ. Սպանդարեանը մեղաւոր է Ստիկ. Բաժանմունքի հետ դատապարտելի յարաբերութիւններ ունենալու մէջ, ուղղակի կամ իր եղբայր կօնստանտին Սպանդարեանի միջոցով. բ) թէ նա որևէ ճնշում է գործ դրել կօնստ. Սպանդարեանի վրայ, որպէս զի գրդի նրան մանելու Դեպարտամենտի ծառայութեան մէջ. կամ գ) թէ նա գործակցել է կօնստանտին Սպանդարեանին քաղաքական խուզարկութիւնների մէջ — այլ և չեն կարող հիմք ծառայել կասկածելու Սպ. Սպանդարեանին այդօրինակ արարքների մէջ:

Չորրորդ հարցին Ատեանը պատասխանում է հաստատաբար: Մինչև այն վայրկեանը, երբ մեղադրանքը Սպանդար Սպանդարեանի դէմ հրատարակել է „Պրոշակ“ մէջ, հանգամանքների բովանդակ գումարը եղել է այնպէս, որ „Պաշնակցութիւնը“ ունեցել է բաւարար հիմքեր՝ համարելու մեղադրանքը կատարելապէս արժանահաւատ. անկեղծօրէն համոզւած է եղել Սպ. Սպանդարեանի մեղաւորութեան մէջ, ուստի և վարել է լիակատար բարեխղճութեամբ, սպազբելով այդ մեղադրանքը:

Հինգերորդ հարցին Ատեանը պատասխանում է հաստատաբար: Ի նկատի ունենալով, որ մեղադրանքը ղետեղւած է եղել յեղափոխական կուսակցութեան կենտրոնական օրգանում, որ նրա արժանահաւատութիւնը յենւել է բացառապէս նրա հեղինակութեան վրայ և որ կուսակցութիւնը ընդունել է իր վրայ մեղադրանքի ամբողջ պատասխանատուութիւնը, Ատեանը, գտնում է, որ „Պաշնակցութիւնը“ պարտաւոր էր, նախ բան իր հրատարակումը, տեղեկացնել դրա մասին Սպ. Սպանդարեանին: Այդ ձևական պարտաւորութեան կատարումը ներկայ դէպքում կարող էր ապահովել կուսակցութիւնը ակամայ սխալից, իսկ Սպանդարեանին՝ նրա բարի անունը արատաւորող մեղադրանքի ծանր հետևանքներից:

Ինչ վերաբերում է Սպ. Սպանդարեանի յարուցած հարցին, թէ „Պաշնակցութիւնը“ պարտաւոր է նրան դրամական հատուցում այն վնասների համար, որ պատճառել է նրան յիշեալ հրատարակութիւնը, — Դատարանը, հնարաւորութիւն չունենալու որևէ պատասխան տալու գործի մէջ եղած աւել լինելի հիման վրայ և թոյլատրելի չը համարելով ձգձգել գործի աւարտումը դրամական յաւակնութիւնների բնութեամբ, որոշեց:

Առաջարկել Սպ. Սպանդարեանին և „Պաշնակցութեան“ լուծել սոյն խնդիրը իր լիակատար ծաւալով, իրաւախօհութեան (արբիտրաժ) ճանապարհով, ի դէմս Ատեանի նախագահի կամ նրա ցուցմունքով անդամներից որևէ մէկի:

Ներկայ որոշումը ընդունւած է գառաւորների կողմից միաձայն և ստորագրւած է բոլոր երեքի ձեռքով: „Պաշնակցութեանը“ և Սպ. Սպանդարեանին տրւում է մի մի պատճէն, ստորագրութեամբ նախագահի և այն գառաւորների, որոնք յանձնուածի միջոցին գտնուած են Պարիզում:

„Պաշնակցութիւնը պարտաւորւում է հրատարակել



ներկայ որոշումը ամբողջութեամբ «Դրօշակ»-ի ժողովով  
համարուած Սպ Սպանդարեանին իրաւունք է տրուում  
հրատարակել նոյն որոշումը ամբողջութեամբ իր ցան-  
կացած թերթերի մէջ:

Ստորագրած  
Նախագահ Առեանի Ա. ՍՏԱԱԼ  
Անդամ Առեանի Բ. ԽՊՐԵԻ

\*\*\*

Կատանդին Սպանդարեանի վերջին նամակը, զրկուած Կ.  
Պօլիս իր մի բարեկամին, 20 ապրիլ 1911-ին.

Սիրելիս... Պ. Առամեանին կրնաս ըսել թէ ես  
կուզեմ որ ինձ հաւատան. եթէ անգամ մը չեն ուզեր  
հաւատալ, ինչ կերպով ալ ընեմ պիտի այլ կերպ բա-  
ցատրութիւն տան: Միշտ կը կրկնես թէ Պարիզէն գալով  
Առամեանին չտեսնեցայ. դու լաւ գիտես գնացի իմաց  
ուիր, երեք օր սպասեցի, երբ չեկաւ, ստիպուած էի  
ճամբայ ելնել. եթէ այն օրը չ'եղէի, պէտք էր մէկ  
շաբաթ ևս շոգեմալի սպասել: Ես այնպէս կարծեցի թէ  
առանձն իրենց կուսակցութեան կանոնով ալ ինձ հետ  
տեսնել չեն ուզեր, ինչպէս բեղ ալ ըսի, քանի որ այն  
երեք օրու մէջ ոչ կանչեց ինձ և ոչ ինքը եկաւ: Ինչ-  
պէս ալ Պարիզ Արամեանն չ'ուզեց ինձ հետ  
առանձին տեսնել, մինչ ես գնացեր էի իրեն հետ  
տեսնելու. եթէ նա ինձ հետ տեսնուեր, այն ժամանակ  
մենք ջուրի երեսը կը հանէինք այդ Բուրցեմ-  
Մուրցեմի գործը: Երկար ասդին անդին ընկ-  
նելու բան չկայ: Թող լաւ գիտնան, որ ես ամեն լեզ-  
ւով ու հրատարակելու կարող եմ իմ գիտուս անցածը  
հրատարակել: Ինձ զրկեց Պարիզ, տեսայ որ ոչինչ  
թողած չէ տեսնուած. այլևս երբ կ'ըսեմ թէ ես եմ և  
ոչ թէ եղբայրս... ինձ կ'աշխատեն որ ըսեմ թէ այն  
ինձ ամենողը ինձ ներկայացուցեր է իբր խմբագիր Ա.  
Սպ... ես կ'ըսեմ ոչ, իմ ներկայութեան այդպիսի բան  
եղած չէ. դեռ Արամեանը և իմ եղբայր օլաճաղը  
կ'ըսեն այնտեղ տես կը սորվեցնեն թէ ինչպէս ըսելու  
ես և որով կ'ազատուի... ես չեմ կարող ստել: Ես կըրկ-  
նեցի թէ թէ և ինձ ամենողը որքան ցած ու խորագիտ  
մարդ լինելը ես յետոյ հասկցայ, բայց այնուամենայնիւ  
ես չեմ կարող ըսել սուտ թէ նա ինձ եղբորս անու-  
նով ներկայացուց, ոչ, ընդհակառակն, պրօֆէսոր և թէ  
Յ(1) տարի Պօլիս եղած և ինչ և ինչ: Այժմ ալ կըստիպես  
կամ կըստիպեն քեզ որ ես գրեմ թէ վիճակիս ծան-  
րութենէն տարուելով գիտնալով գնացեր եմ. ոչ և ոչ  
և ոչ. ես բան մը չգիտէի. ինձ այնտեղ սկսան նեղել  
իբր կօմիտէի անգամ, իբր Ժամհարեանին սպաննիչ զրկող,  
իբր մարդիկ զրկող եղբորս որ Պօլիցիսին սպաննել և ինչ  
և ինչ. ասոնք ի հարկէ շատ վերջը հասկցայ, որ միմիայն  
ինձ երկիւղ տալու համար է եղեր, իրենք նպատակ  
ունին ուրիշ բան... ես ազնեւ չեմ եղել, իսկ ուրիշ  
պաշտօն էր արւած բոլորովին և ես գրած ունիմ, թող  
հասնեն, հայերէն է գրուածքս և այն ատեն տեսնեն թէ  
դատապարտելի եմ թէ մարդ եմ... Շատ կը ցաւ իմ  
որ դու կը կասկածիս եղբորս վրայ. եր-

բէք նա այդպիսի բան չի անիր. յիշուի նա սիրտ  
չունի, նա մեր ամբողջ ընտանիքը կործանեց, նա իմ  
վրայ ամենավատ լուրերը տարածեց և կարող է տա-  
րածել. նա փիս կնկայ նման բամբասանքով կը պարագի-  
բայց ես իրեն սիրած եմ, իմ արեւնս իմ եղբայրս է, բայց և  
ճշմարտութիւն է թէ նա այդ ըրած չէ... նա կարող  
էր ինձ մ'ղել ընելու, բայց ինքը ոչ: Ես փետր-  
ւարին Քիֆլիս եմ գնացել. կարծելով թէ եղբայրս  
կը տեսնեմ և հետը խորհուրդ կ'ընեմ իմ գործիս վրայ,  
որովհետև իրեն ազատ լիլ ինձ խոստացան \*),  
անոր համար ալ գնացի, տեսայ անոր զրկեր են... ես հսկո-  
ղութեան տակ էի, ես ոչ ոքի չեմ տեսնուած. ես միշտ  
որուն հետ որ տեսնուեր եմ յօգուտ ուսուց եմ խօսեր,  
միշտ ըսած եմ թէ ինձ ուսուց մարդ կը կարծեն  
կամաւ. ես իմ գործիս վրայ մի ճաշի ժամանակ պատ-  
մեցի եղբորս՝ Միշային, երկրորդ օրը տեսայ, որ ուրիշ  
մէկ ծանօթս ինձ հանդիպեցաւ և պատմեց, ալ վախցայ:  
Միւս եղբայրս, գիտես, սարսափելի ստախօս է և չ'ինի:  
Ես կամօղիկսսին դիմեցի որ ինձ համար հանգանակու-  
թիւն ընէ որ կարողանամ գնալ Առանա: Մէկ գիշեր  
մնացի Ալեքսանդրօպօլ խորէնը գիտէ. անոր նամակաւը  
գնացի. Բաբու չ'աջողեցաւ բան մը, մէկ գիշեր մնացի.  
Կրկին կամօղիկսսին գացի, ուրիշ նամակ Մօսկվա վար-  
դապետի մը անունին, այդ նամակը այժմ Ելզը ը  
մեր ինչերուն հետ է, պահարանի մէջ: Գիշեր ժամա-  
նակ հիւանդէն պարտքս թողնելով փախած եմ Քիֆ-  
լիսէն մինչև Բաթում. այստեղ Մեղակորեանը ինձ դրամ  
ժողովեց մինչև Պետերբուրգ... Գնացի որ Սպան-  
դարը տեսնեմ և նամակը տանեմ  
Մօսկվա: Բայց Սպանդարի հետ նստել, խօսել չ'ըլլար,  
միշտ կռիւ է. ինչ բանի վրայ խօսք ուզես ձգել, նա  
բոլորովին կը փոխէ, իրեններուն հետ կուզէ բռնաւոր  
վարել: Նամակին համար ըսի, պատ բաշեց՝ թէ օգուտ  
չ'ունենար, ճանապարհածախս մի կուտան և կը ճամբն-  
ես ալ մտածեցի թէ կարելի է իրեն կ'օգնեն. և ալ մէկ  
կողմէն չի վայելեր, և մանաւանդ վարդապետը գնացեր  
է եղեր անկէ... Աշխատեցայ խօսք ձգել թէ ինձ հա-  
մար կ'ըսեն թէ ես ուսուց մարդ եմ, բայց այնպիսի  
խօսակցութիւններ խառնեցաւ մէկ բառէն միւսը, որ  
ալ մնաց միայն այսքանս, որ երբ ըսի թէ այս կուսակ-  
ցութեան տեղը որտեղ է — թէ Ժընեվ, ըսի ես կեր-  
թամ այնտեղ որ պարզեմ: նա ըսաւ, միայն ոչինչ օգուտ  
չունի, միայն կարող ես անոնց ծառայութիւն ընել, ահա  
այն ժամանակը. ուրիշ ոչինչ... Այդ կարծ միջոց տեսու-  
թենէն յետոյ, երկրորդ օրը որ ճամբայ պիտի ելնէի  
անգամ շտապ. մէյ մըն ալ այս վերջերս յանկարծ  
Բուրցովի ժող տեսայ... ես եթէ ուղղակի հետը չ'ու-  
սեցայ, պատճառն այն է, որ կարծեցի թէ նորէն իրեն  
Ֆրանց Մօրու թիւնը բռնել է:

\*) Ստորագրեց ամեն տեղ մերն են: Ե. Խ.





քանի որ ինձ կը դատեն կամ կը մեղադրեն իմ ամեն բանը ըսելու ես լաւ տեսայ որ Երեւանի մէջ ինձ զէ կուզէ բաներ իմանալ ու վերջը յերիւրիւ ինձ դէմ կ'ապացուցանեն։ Ինձ սպանեցին լճացան, մարմինս փաց, այն ալ իրենց կուտամ, թող այն ալ սպանեն։ միմիայն սիրելով իրանց և սիրելով ազգս, որուն պարտական եմ գոյութիւնս ու կեանքս, միմիայն այս կ'աղաչեմ, թող այս վերջինը լինի, թող աշխատեն ջանք ընել պահել այն որ 4000 տարիէն աւելի կեցեր է բնակիչ իր գեղեցիկ լեզուով...

Պ Ա Տ Ճ Է Ն

Վ Ա Յ Ս Մ Ա Ն Ի Տ Ե Ղ Ե Կ Ա Պ Ի Ի

ՆԵՐՈՎԱՅԱՑՈՒՄ ՈՍՏԻԿ. ԲԱԺԱՆՄՈՒՆԻՔԻ ՎԵՐԱՏԵՍՉԻՆ  
(Թարգմանում եմ նոյնպէս բառացի և ամբողջութեամբ)

Ահա և այդ Տեղեկագիրը „Հայկական շարժման“ և Հայ գործիչների մասին, որ 1904-ի գարնանը լրտեսապետ Վշաթմանի միջոցով ներկայացւած է ուսական Բարձր Ոստիկանութեանը Երեւանից շահերձ Հայ լրտեսների սանձարձակ անամօթութիւնը, նա միանգամայն բնորոշում է և այն փաստ, ճայրեմայր արտաւոր, մասնաթիւններից ու հրէշաւոր խարդաւանքներից հիւսած ուժեր, որ կառավարում է մեզ, տարաբարտար, դեռ այսօր ևս \*):

Մասնաթիւնով Հայերի մէջ եղած յեղափոխական շարժման հետ և պատելով այն վայրերը, որոնք բռնւած են այդ շարժումով, ես ժողովեցի հետեւեալ տեղեկութիւնները։ Հայ յեղափոխական շարժումը հաստատուած է գլխաւորապէս երեք շրջաններում — Թիֆլիս, Բագու և Ալեքսանդրոպոլ, իրենց շրջապատող վայրերով։ Այդ քաղաքները՝ տեղական յեղափոխական կողմակերպութիւնների գործունէութեան բնոյթի համեմատ և զանգւածների վրայ նրանց ունեցած ազդեցութեան տեսակետից՝ անհրաժեշտ է դիտել հետեւեալ կերպով. Թիֆլիսը մտաւոր շարժման կենտրոնն է, Բագուն, իբրև ընդարձակ արդիւնաբերական կենտրոնատեղ, հանդիսանում է գրեթէ բացառապէս պրոլետար-բանւորական շարժման վայր։ Ալեքսանդրոպոլը (Երևան) յայտնում է, որպէս օրգան հոգևոր ներգործութեան՝ զանգւածների վրայ։

Յեղափոխական շարժման գլխաւոր ղեկավարներ հանդիսանում են յիշեալ տեղերում ապրող մեծ մասամբ որոշ հասարակական գիրք ունեցող անձնավորութիւններ. — կապիտալիստներ, վաճառականներ, բարձր հոգևորականութիւն, պաշտօնականներ, լրագրային աշխատակիցներ, ուսուցիչներ, աշակերտներ և այլն։ Այդ անձերի ունեցած հասարակական գիրքը հնարաւորութիւն է տալիս նրանց, ծածկելով այդ գիրքի տակ, ազդել զանգւածների վրայ — մի ազդեցութիւն, որ սահմանագծում է հետեւեալ կերպով. կապիտալիստները, որպիսիք են, օրինակ, Ալեքսանդր Իվանովիչ Մանթաշեւի, Գրիգոր Մարտինովիչ Արաֆելով, Ալեքսանդր Ազաֆոնովիչ Մէլիք Ազարեանց, Իվան Պանոսյեւի (Պիտոյեւի?), Տէր Միրոկով (?) \*\* և այլն ցոյց են տալիս խոշոր գրամական աշակցութիւն հայ ուսանողների մեծ կոմիտէին, որոնք

լսում են ուսական և մանւանդ արտասահմանեան համալսարաններում։ Ընկապած է, որ յիշեալ ուսանողները, գտնելով գրեթէ կատարելապէս նրանց խնամակալութեան տակ և իրենց պարտաւորած զգալով նրանց առջև, գերազանց գործիր են առաջինների (կապիտալիստների) ձեռքում և անմիջական կապ պահպանելով մասսայի հետ, հանդիսանում են արտայայտիչներ նրանց ազգային. յեղափոխական գաղափարների։

Նրանց ներգործութիւնը մասսայի վրայ արտայայտուած է պրոպագանդի մէջ, թէ բանաւոր և թէ գրաւոր. սպագրական, արտայայտուած է իրենց գումարած ժողովների մէջ, ուր ղեկավարում են Հայ յեղափոխական կոմիտէների կողմից մշակւած ծրագիրներով մանւանդ յաճախ — ծածկելով լէգալ, օրինական գիրքի տակ — օգտուած են այլ և այլ հանրակրթական կուրսերից. իսկ գլխաւորապէս նրանց ազդեցութիւնը գործուած է միջնակարգ դպրոցների աշակերտների վրայ։ Նման եղանակով գործում են և ուսուցիչները՝ Տեղական Հայ մամուլի օրգաններում՝ „Մշակ“, „Ալգրիւր“, „Տարաղ“, „Մուրճ“ և այլն շատ յաճախ հրատարակում են յօդւածներ, որոնց մէջ, թէև բաւական մութ դարձւածների մէջ, արծարծուած են նոյն ազգային. յեղափոխական գաղափարները։ Շարժման ղեկավարներ Թիֆլիսի մէջ համարում են հետեւեալ անձինք. Ալեքսանդր Քալանթարեան, „Մշակ“ լրագրի խմբագիր, ունի ահագին ազդեցութիւն Հայերի մէջ. յայտնի է, որպէս ամենակատարի կողմակից Հայոց ինքնօրինութեան (ազատնամիայի), չի խոկում և ոչ մի միջոցից՝ այդ նպատակին հասնելու համար խաժակ Գարեգին, ուսուցիչ. հրապարակաբոս, մէկն է տերրորիտական ֆրակցիայի պարագլուխներից, երկար ժամանակ ապրել է արտասահմանում, եղել է և փակւած թիւրքական բանտում, որովհետև փորձ է արել ապստամբութիւն բարձրացնելու, նա գործօն յարաբերութիւններ ունի բանկիր Աղանեանի հետ, որ ապրում է Կ. Պոլսում, յայտնի է իբրև ծայրայեղ ուսատեոց և անմիջական յարաբերութիւնների մէջ է անգլիական կառավարութեան հետ։ Տիգրան Կալանթարեան, խմբագիր „Ալգրիւր“ և „Տարաղ“ լրագրիների — տերրորի կողմակից, Լևոն Սարգսեան, „Մուրճ“ ամսագրի խմբագիր — տերրորի կողմակից։ Մարկոսեան, „Մշակ“ լրագրի աշխատակից, Քալանթարեանի ամենամօտիկ աշխատակիցը, ազատնամիայի գաղափարների պրոպագանդի մէջ։ Լալայեան (...) Հանդէսի խմբագիր — տերրորի կողմակից։ Մելիք-Բախտամեանց, ունի մագազին Երևանեան հրապարակի վրայ, տերրորի ծայրայեղ

ինքը Գրոյտի ներկայացուցիչը, Բայց այդ ամբիւ ուսարական գործիչներ Երեւանից հետ միասին, դիտել տին, որ լրտեսներն ու մասնիչները յաճախ դիտմամբ — ոստիկանութեան թելադրութեամբ իսկ — մոյջում են իրենց տւած դուցմունքների մէջ մի քանի աբսուրդ, անհեթեթ իրողութիւններ, որպէս զի յետագայում, յանդանք բացուելու միջոցին հնարաւորութիւն ունենան — նոյն այդ կապիտան հեթեթութիւնների վրայ յենելով — արդարանալ։

Աւելացնելը և այն, որ ինչպէս Երեւանից յայտարարեց Միլեան. Յեղ. Ատեանին, Վշաթման Հայկական շրջաններում խարդախիս՝ ունեցել է բայի „Ամիրովից“, ուրիշ տեղեկատու աշխատակիցներ ևս, որոնք զուցէ երևան կը գան ժամանակին։

\* ) Ընթերցողն ինքը կը զանազանէ այդ դօկլադի մէջ լուրջը զաւելտականից։ Այդ զաւելտական կողմերի վրայ ամենից առաջ և դեռ սկզբում, ուշադրութիւն դարձրեց

\*) Ընթերցողն ինքը կը զանազանէ այդ դօկլադի մէջ լուրջը զաւելտականից։ Այդ զաւելտական կողմերի վրայ ամենից առաջ և դեռ սկզբում, ուշադրութիւն դարձրեց



կողմնակից է, թագցնում է իր մօտ զանազան գաղափար գործիչները՝ Յակոբ Ասեփանեան, ինժեներ-տեխնոլոգ, պրօպագանդիստ է և տերրորական ֆրակցիայի անդամ Խաչատրեան, «Տիֆլիսսկի Լիսակ»-ի աշխատակից, խաղաղ պրօպագանդի կողմնակից է, Սամօեան (?), Չէրքէզեան, ծառայող Մանթաշեփի գրասենեակում, Սարգիս Քամոյեանց, Աւետիս Ահարոնեան, Սիմէօն Զաւարեան, Նիկօլայ Մատինեան, Սիմէօն Լոփուեան, վրթանէս փափագեան։ — այդ ընդ որ անձերը, որ պարագում են դասեր տալով և հրատարակախօսութեամբ, յայտնի են, իրրև ծայրայեղ միջոցներ, տերրորի կողմնակիցները կազմակերպութեան անդամների ժողովները շատ յաճախ սարքուում են «Կազմայ» ծխախոտի մագազինում, Գօլօֆինսկի պրօպագանդի վրայ։

Բագուի մէջ հայերը ունին բացառիկ դիրք այսպէս անւանւած ինտելիգենտ-պրօլետարիներ։ — գործակատարներ, բանւորների վերակացուներ, գրասենեակի ծառայողներ և այլն Էարժման պարագլուխներն ու ղեկավարները, իրենք անձամբ չմտնելով բանւորների հետ շփման մէջ, օգտուում են յիշեալ տարրերից՝ հակակառավարչական մտքեր յուզելու և ազգու կերպով ներգործելու մասսայի վրայ, հարկաւոր դէպքում սարքելու գործադուներ, ցոյցեր և այլն։

Բագուում շարժման ղեկավարներ համարուում են հետևեալ անձիքը. Քալանթարեաններ — Անտօն, Արշակ և Գրիգոր — «Մշակ» լրագրի խմբագրի եղբայրները և նրա ամենամօտիկ աշխատակիցները հայկական շարժման մէջ։ Մաթէոս Մաթէոսեան, վարդապետ, շատ յաճախ է խօսում հակակառավարչական բնոյթ ունեցող բարոզներ, որոնց մէջ կոչում է ժողովուրդը դէպի ապստամբութիւն։ Լևոն Մանուէլեան, «Մուրճ» հանդէսի աշխատակից, — կողմնակից է տերրորի։ Տէր Ներսէս Տէր Կարապետեան, քահանայ և գիմնազիայի ուսուցիչ — պրօպագանդիստ է և տարածող անօրինական գրականութեան, կողմնակից է թիւրք կառավարութեան։ Կարաման Քեօխայեան, Թիւրքիոյ «Բիւզնդիօն» լրագրի թղթակից, տարածում է անլէզալ գրականութիւն և մղում է հակառուսական պրօպագանդ, որպէս կատաղի թիւրքասեր։ Իշխան Դատեան, վրացի, յայտնի է, իրրև համոզւած կողմնակից հայոց ափսոսօմիայի և աջակցում է հայ յեղափոխական կազմակերպութիւններին խոշոր գրամական նպաստներով։ Սերգէյ Կրասիլնիկով, շատ ունևոր մարդ է, պրօպագանդիստ և կազմակերպութեան անդամ։ Օրիորդ Գնունեան, որ ունի սեփական տուն Ցիցիանօփսկայա փողոցի անկիւնում, — պրօպագանդիստ է և կազմակերպութեան անդամ։ Յովհաննէս Յովհաննիսեան, գրաւաճառ, ծախում է ի միջի այլոց զանազան անլէզալ հրատարակութիւններ՝ ի նպաստ յեղափոխական կազմակերպութիւնների, յայտնի է, իրրև համոզւած կողմնակից տերրորի, խէօ, Գեփօ և Արբահամ — փախստականներ Թիւրքիայից, «Կարմիր Աղբուր» տերրորական կօմիտէ անդամներ, ամենից յաճախ հաւաքուում են նոյն կօմիտէի անդամ՝ կօչկակար Ալէքսան Ղարիբեանի մօտ, որ բնակուում է Արմեանսկայա փողոցի վրայ։ Նրա մօտ սարքուում են կամաւորների ժողովներ, որ պիտի անցնեն թիւրքական սահմանը՝ զինւած ապստամբութեանը մասնակցելու համար։ Միհրան Օսիպեան, մանուֆակտուրային խանութի տէր Կրիփայա փողոցի վրայ, զինւորա-

գրում է կամաւորներին՝ զինւած ապստամբութեանը մասնակցելու համար և պահպանում է եռանդուն յարաբերութիւն Կ. Պօլսի կենտրօնական կօմիտէի հետ։ Ալէքսան Մարտիկեան, երկաթագործ պրանքներ խանութի տէր, Մօլօկանսկի այգու մօտ, մղում է պրօպագանդ և տարածում է անլէզալ գրականութիւն։ Օսիպ Բէգնազարեան և նրա քոյր Վարսենիկ, որ բնակուում է Պերսիդսկայա փողոցի վրայ, տերրորի բարոզիչներ են և անլէզալ գրականութեան տարածողներ։ Երրորդ եղբայրը թողել է տերրորական փրակցիան և անցել է սօցիալ-դեմօկրատների շարքերը։ Արմենակ Բաղդասարով, դերձակ, ապրում է «Գրանդ Օտէլ» հիւրանոցի մօտ, տերրորիստ է։ Սաշա Գոլվաթեան, գործակատար Ղօնտաղ-սագեանի մօտ, պրօպագանդիստ է, սօցիալ-դեմօկրատ։ Մաթէոս Ահօպով, տերրորական ֆրակցիայի անդամ։ Արիստակէս, արտաքսւած գիմնազիայից, տարածում է անլէզալ գրականութիւն։ Նիկօլայ Մէլիք Մանուշարով, բնակուում է Պերսիդսկայա փողոցի վրայ, տարածում է մեծ քանակութեամբ անլէզալ գրականութիւն։ Յովհաննէս Կօլբասարով, թղթակաճառ, նրա բնակարանի մէջ սարքուում են ժողովներ։ Սուրէն Նալանէթեան (?), ռեալական դպրոցի աշակերտ, պրօպագանդիստ է և տարածող անլէզալ գրականութեան։ Նրա ինժեներ եղբայրը ամենամիտ խոշոր նպաստ է մտցնում տերրորական ֆրակցիայի գանձարանը։ Ղազար Տէր Ղազարեան և նրա եղբայր Նարիման, պրօպագանդիստ սօցիալ-դեմօկրատներ։

Բարձր հայ հոգևորականութիւնը, որի շահերը ամենից շատ են տուժել եկեղեցական գոյքերը առնելու միջոցին, բացի անձնական պրօպագանդից, ազգում է իրեն ննթարկւած ստորին հոգևորականութեան վրայ, որը եկեղեցական բարոզների և անձնական զրոյցների մէջ մղում է իր ազգի մէջ ուժգին ագիտացիա, հակակառավարչական բնոյթ ունեցող։

Ալէքսանդրօպօլի և Երևանի մէջ շարժման ղեկավարներ համարուում են հետևեալ անձերը. Յարութիւն Զաքարեան, բանկային ծառայող, Յակոբ Չիլինկարով, Ֆէլդֆէբէլ, գասալիք, զինւորագրում է կամաւորներ զինւած ապստամբութիւն բարձրացնելու համար։ Աւետիք Մեղքունեան, գինու պահեստի տէր, նրա մօտ յաճախ ժողովներ են սարքուում։ Եւ Ղազարչակ Մինասեան, Հայ յեղափոխական շարժման պարագլուխների մէջ ահագին ազդեցութիւն ունի ամենայն հայոց կաթողիկոսի ազգական Խորէն Խրիմեանը, թիւրքահայաստակ, որի մասին ես արդէն պատիւ եմ ունեցել հաղորդելու։ Նա պահպանում է գործօն յարաբերութիւն Կ. Պօլսի կենտրօնական կօմիտէի հետ։

Առանձնապէս մօտիկ յարաբերութիւն ունի նա պօլսեցի բանկիր Աղանեանի հետ, որը յայտնի է, որպէս կենտրօնական կօմիտէի պարագլուխներից մինը։ Խրիմեան և Աղանեան իրենց յարաբերութիւնները առաջ են տանում յատուկ սուրհանդակների միջոցով։ Կայսրութեան միւս բաղաքներից մեզ յայտնի են հետևեալ անձերը։ Օդեսսայում — Թորոս Կիւրեղեան, թիւրքահայաստակ, «Արարատ» ճաշարանի տէր, Պրիմօրսկայա փողոցի վրայ։ Նրա մօտ շատ յաճախ թագնուում են «ինքնապաշտպանութիւն» ընկերութեան անդամները, ինչպէս նաև կամաւորները, որոնց նա ղրկում է հարկաւոր տեղերը։ Վարդան Սուքիասեան, եկած է Վար-



նայից տերրորական սկտեր կատարելու համար: Կիրեն-  
դեանի մօտ թագուում են դեռ էլի մի քանի մահա-  
փորձ կատարողներ, բայց նրանք հաստատուած չեն:  
Պերձ Պրօզեան և Բարախանեան, ուսանողներ, մղում են  
ուժգին պրօպագանդ և զինւորագրում են կամաւորներ,  
Ռուբէն Պալլօվիչ Բաթանեան, ուսանող, պրօպա-  
գանդիստ:

Պետերբուրգում՝ Աղաբալեան, ուսանող համալսարա-  
նում, և Գօնենցեան ( ), ուսանող Զինւոր. Բժշկ. Ակա-  
դեմիայում, դրամ է հօնգանակում, որ նրանք զրկում  
են արտասահմանեան կենտրոնական կոմիտէներին:

Ներկայումս հայ յեղափոխական կուսակցութիւնները  
զբաղւած են գլխաւորապէս ապրիլ ամսում թիւրքիոյ  
մէջ բռնկելիք զինւած ապստամբութեան պատրաստու-  
թիւններով, համաձայնութեամբ մակեդօնացիների հետ.  
Նրանք մտադիր են այդ ապստամբութիւնը նետել և  
Ռուսաստանի սահմանները, որի համար և նրանք պատ-  
րաստում են մեծ քանակութեամբ զէնք, մեծ մասամբ  
գողացւած հայ զինւորների գործակցութեամբ ուսական  
բանակներից, մասամբ էլ կօնտրաբանտով փոխադրւած  
Պարսկաստանից: Չէնքը պահուում է ներքնատներում և  
մաս առ մաս տարւում է կամաւորների ձեռքով Տաճ-  
կաստան: Ի միջի այլոց յամառ լուրեր են պտտում, որ  
հայ կազմակերպութիւնները ուս յեղափոխական կազ-  
մակերպութիւնների հետ համաձայնելով, պատրաստում  
են ապրիլի 18-ին հսկայական ցոյց, ուրաձգութիւննե-  
րով — մի ցոյց, որ պիտի լինի մի տեսակ նախերգանք  
հայերի ընդհանուր ապստամբութեան և հնարաւորու-  
թիւն պիտի տայ նրանց՝ հաշուելու իրենց ուժերը: Ասած-  
ներիս կարող եմ աւելացնել և հետևեալը. ի նկատի  
ունենալով, որ առաջիկայում պէտք է դէպի թիւրքիա  
քշին հայ փախստականները, որոնք չեն ցանկանում  
ուսահապատակութիւն ընդունիլ, հայերը գտնուում են  
շատ գրգռւած վիճակում և այդ վտարումների պատ-  
ճառ համարելով իշխան Գալիցիի նշանակները (տե-  
ղեկագիրները), վճռել են ինչ գնով էլ որ լինի, վերջ  
գնել նրա կեանքին. և այդ նպատակով նրան յամառ-  
րէն հետապնդում են:

Վերջին ժամանակներս յաճախ են հրապարակ նետ-  
ւում հայկական կոչեր, որոնք ի միջի այլոց տարածւում  
են մեծ քանակութեամբ միջնակարգ դպրոցներում: Այս  
օրերս, օրիորդաց գիմնադիւաններից մեկում, գասերի ժա-  
մանակ փակցուել էին պատերի վրայ հայկական թուղ-  
ցիկներ, սակայն գիմնադիւանի վարչութիւնը թագցնում է  
այդ՝ իշխանութիւններից:

Աշխատակից Ա.Ե.Ա.Ե.Բ

Թիֆլիս, 15 մարտ 1904 թ.

Մ Ի Հ Ա Տ Ի Ա Մ

ԴԱՆՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑՅԻ ՄԵՆԱԿՐԱԿԱՆԻՑ \*

Ընկեր դատաւորներ,

Ինչպէս է կատարել այդ անօրինակ միասնակա-  
ցիան, ինչպէ՞ս է խաբել բարձրագոյն Ոստիկանական  
Բաժանմունքը, արձանագրելով իր թղթերի մէջ «Նոր-  
Գար» խմբագրի անունն ու տիտղոսը:

\*) Պատճէնը յանձնուած է Ատեանին:

Խաբել է կամ Կօնստանդին Սպանդարեանը կամ թէ  
նրան ուղեկցող լրտեսապետ Վալսմանը: Բնենք երկու  
հիպօթէզները: Յոյց առնք, որ երկուսն էլ անհնարին  
են, անհիթեթ, անարամարան:

Խաբել է, դիցուք, Կօնստանդինը՝ ներկայացել է, դի-  
ցուք, իր եղբոր անւան տակ՝ աւելի կշիռ տալու համար  
իր անձին և աւելի մեծ վարձատրութիւն ստանալու  
ակնկալութեամբ:

Ինչպէս, սակայն լ:թէ Կօնստ. Սպանդարեանը  
կամենում է ճանաչել տալ ինքզինքը Ոստիկ. Բաժան-  
մունքի մէջ, իրրև Կովկաս հրատարակող լրագրի խմ-  
բագրապետ, ինչո՞ւ է նա տալիս Բաժանմունքին այն-  
պիսի տեղեկութիւններ ու տիտղոսներ այդ կովկասեան  
խմբագրի մասին, որոնք պատկանում ու վերաբերում են  
իր եւն-կեղծ ողին և որոնք կարող էին շատ շու-  
տով բաց անել կեղծիքը: Ինչո՞ւ էր նա ասում, թէ  
«Նոր-Գար» խմբագիր Սպ. Սպանդարեանը նաև ու-  
սուցիչ է, բերւած կ' Պօլսից:

Եթէ ինքը Վալսմանն է կատարել այդքան պատաս-  
խանատու և իր լրտեսական կարիքերի համար վտան-  
գաւոր մի կեղծիք, եթէ նա կամեցել է ներկայացնել  
յանձին Կօնստանդինի՝ խմբագիր Սպ. Սպանդարեանին,  
նոյն խոշոր վարձատրութեան ակնկալութեամբ, ինչպէս  
է, հարցնում եմ, որ այդպիսի ճարպիկ, խելօք մի  
լրտես — որպիսին ներկայացնում է մեզ Լէօնիդ Մենշի-  
կով — այդքան յիմար, թեթեամիտ ձևով է վարւել, և  
աւել է այնպիսի տեղեկութիւններ իր նորանւած գոր-  
ծակալ Սպ. Սպանդարեանի մասին, որոնք չեն վերա-  
բերում Սպ. Սպանդարեանին: Նկատեցէք դեռ, որ նոյն  
Մենշիկովի վկայութեամբ, այդ Վալսմանը ձախողու-  
թիւնների հանդիպելով Բալկաններում և ընկնելով  
Պետերբուրգի ցերեքների աչքում, ձգտում էր վերա-  
կանգնելու իր վարկը և ամբապնդելու իր կարիքերի մէջ:  
Ինչպէ՞ս կարող էր նա, այդ սէրալիտացիայի նպատակով  
դիմել այդպիսի մի շահատակութեան, խաբել այդքան  
կոպիտ ձևով Գուրօվիչներին ու Լօպուխիններին:

Ընկունել է նոր գործակալին Գուրօվիչ, որ անտա-  
րակոյս, տեղեակ էր մեր կովկասեան գործերին, մանա-  
ւանդ այն փոթորկոտ ժամանակում:

Նկատեցէք, որ այդ դէպքը տեղի է ունեցել մեզ հա-  
մար պատմական այն վայրկեանից յետոյ, երբ ամբողջ  
Ընդհանրակազմը բռնել էր հայկական ըմբոստացման  
հրդեհով, ազգային-եկեղեցական գոյքերը յափշտակ-  
ւելու առիթով, դա գրեթէ այն ժամանակ էր, երբ ինքը  
Կովկասի գլխաւոր հրամանատարը, դաշունահարւած հայ  
տերրօրիստների ձեռքով, ընկած էր հոգեվարքի մէջ, երբ  
Նիկօլայ II-ը ուղղում էր իր ներքողալի և ցասկոտ  
հեռագիրը արևմտաթաթախ իշխանին և երբ ամենագոր  
Պլեյզէն մտել էր տենդային թղթակցութեան մէջ հայոց  
կաթողիկոսի հետ, երբ նա իր մօտ, Սամարայում «այցի»  
էր կոչում երկու հայ եպիսկոպոսներին... Մենշիկով  
պատմում է, թէ որպիսի տենդային ուշադրութեամբ  
էին այն ժամանակ Պետերբուրգի մէջ հետևում կով-  
կասեան, հայկական անցքերին: Տարակոյս չկայ, որ տե-  
ղեկութիւններ ստացւում էին Ոստիկ. Բաժանմունքի  
մէջ տեղեկութիւններ հայոց շարժման դերակատար-  
ների, կուսակցութիւնների և առանձին գործիչների մա-  
սին: Այդ գործիչների շարքերում էր «Նոր-Գար»



խմբագիրը, նոյնիսկ առաջին շարքերու մէջ ընկերները տեղեկագրում են, թէ ինչպէս այն վտանգաւոր ժամանակներում «մշակական» - առաջադիմական կոչում բանակի ղեկավարները թուլամորթ խոհեմութեամբ անկիւններն էին մտել և թէ ինչպէս նորդարականները իրենց արի ու համարձակ ընթացքով արժանացել էին ժողովրդի, երիտասարդութեան համակրանքին: Կոչումը «ի խմբագիրը առաջին շարքերու մէջ է, նա մէկն է թիֆլիսեան ցոյցի կազմակերպողներէն, նա արտասանում է արմատական ճառ, ձերբակալում է և բանտարկում» Ճշմարիտ յեղափոխականների հետ: Կրթական շարքերում են ծանր մեղադրանքներ, նրան սպանում է թիֆլիս Կրթական շարքերում յամենայն դեպս շատ լաւ յայտնի էր կովկասեան բարձր կառավարութեան: Հաղորդել էին նրա մասին, հաւանորէն, և Պետերբուրգ: Ահա թէ ինչ էր ստում ինքը Սպ. Սպանդարեանը «Սուրհանդակ» թերթի թղթակցին (արտասպ. «Բակու» թերթի մէջ, 1 հոկտ. 1910 թ.):

— «Դրօշակ»-ը պնդում է, որ ես ծանայել եմ Ռուսիկ. Բաժանմունքի մէջ 1904 թ. ից սկսած... Բայց հէնց այդ ժամանակ, Ռուսիկ. Բաժանմունքի կարգադրութեամբ, ես ձերբակալեցի և քստուրեցի: Իսկ իմ լրագիրը խափանեցի և անսովոր նմանապէս, որ այդ ժամանակից ես յայտնի եմ Ռուսիկ. Բաժանմունքին, իբրև պետութեան համար վնասակար ու վտանգաւոր մարդ»:

Եւ ահա, ընկեր դատարաններ, այդ նոյն փոթորկալի ժամանակներում մի գեղեցիկ օր լրտեսապետ Ալէքսանդր Վալսաման բերում է իր հետ Կ. Պոլսից, ներկայացնում Ռուսիկ. Բաժանմունքի բարձրագոյն պաշտօնականներին մի կիսախելօք ծերուկի, որ հազիւ գիտէ երկու խօսք կապել արամարանօրէն և ստում է Դէպարտամենտին:

— Ահա ձեզ մի խոշոր նւաճում, հայկական «Կոչում» լրագրի խմբագիր Սպ. Սպանդարեան, յայտնի հայ հասարակական գործիչ... և Դէպարտամենտի մէջ այդ ֆէնօմէնը յարուցանում է հրճւանք—այդպէս է հաղորդում ինքը Մենշիկովը—որովհետև շատոնց փնտրում էին խոշոր, ինտելիգենտ կովկասցի աշխատակից, որ տար մանրամասն տեղեկութիւններ «անջատական» հոսանքների մասին այդ սարսափելի Ծայրագաւառում: Կրկնում եմ, ինչպէ՞ս հնարաւոր եղաւ մի այդպիսի հրէշաւոր, անհասկալի մեքենայութիւն:

Բանաւոր պատասխաններ չունինք այդ հարցի հանդէպ: Բոլոր այդ հիպոթեզները չեն մնում կանգուն՝ ոչ արամարանական և ոչ հոգեբանական տեսակէտից:

Ինչպէ՞ս եղաւ, որ ամիսներ շարունակ նոր ազնետը թիֆլիսի մէջ և այլ քաղաքներում, տեղական ոստիկանութեան ու բարձր վարչութեան աչքերի առջև, նրանց հսկողութեան տակ լրտեսական խուզարկութիւններ կատարեց Սպանդար Սպանդարեան անան տակ, երբ այդ անունը լաւ ծանօթ էր կովկասեան Օխրանային և բոլոր վարչութիւններին:

Եւ մի՞թէ իրաւունք չունի մեր Էրզրումի ընկերը, երբ նա գրում է.

— Եթէ նոյնիսկ իսկական ազնետը Կոնստ. Սպանդարեանն է, այդ դեռ չի նշանակում, թէ ինքը խմբագիր Սպանդարեանը մաս չունի գործի մէջ. վարագործի ետև:

Մի՞թէ՞ զրպարտելու, անիրաւորէն դատապարտելու տենդով են բռնած մեր մի շարք ուրիշ ընկերները, որոնք գտնում են—այդ ծանօթ պարագաների հանդէպ—որ Սպ. Սպանդարեանի 1904-ի ուղևորութիւնը դէպի Վոսկա և Պետերբուրգ, լրագրի համար թուլաւութիւն ստանալը և կովկաս վերադառնալը՝ որ այդ բոլորը թուում է կասկածելի... Կասկածելի՞ բանի որ այն հարեւաւոր հայ քաղաքական «յանցաւորների» մէջ, որոնք նոյն ժամանակ քստուրում էին Պլէվէի հրահանգով, «Կոչում» խմբագիրը միակն էր, որին թուլ էր տրում Պետերբուրգ մտնել և ապրել ամիսներ, այն ինչ՝ մնացածները, նաև վտանգաւոր, համեստ գործիչներ, ուղարկում էին հարաւային կամ արևելեան նահանգները, արգելած լինելով օրէնքի յատուկ յօդուածով, նրանց մուտքը Ծայրաքաղաք:

Եւ մի՞թէ՞ լոկ պատահական զուգահիսութիւն է երկու եղբայրների գրեթէ միաժամանակ (միևնոյն ամսում) ուղևորութիւնը դէպի Ռուսաստանի Ծայրաքաղաքները: Ահա մի հիպոթեզ, որ մենք դժարանում ենք ընդունել... Աւելացրէք այն՝ որ Կոնստ. Սպանդարեանը Կ. Պոլսում ուսաց զնսպանատան ու հիւպատոսարանի պաշտօնականներին ծանօթ է եղել, իբրև «մտերիմ» և աշխատակից, որ լրտեսապետ Վալսամանի հետ ծանօթացել է այդ պաշտօնականներից մէկի միջոցով, որ Կոնստ. Սպանդարեանը բազմիցս յայտարարել է, թէ ինքը Պետերբուրգ գնացել է՝ եղբորը փրկելու համար... Նա, անտարակոյս, որոշել է Պետերբուրգ գնալ ազնետութեան դիտարկութեամբ՝ իր եղբոր Սպանդարի արկածից յետոյ. այդ արկածը, անտարակոյս, դեր ունեցել է Կոնստանդինի որոշման և ուղևորութեան մէջ: Երկու զուգահիսուղ ուղևորութիւնները մենք կապում ենք, չենք կարող չկապել:

\*

Ազատ է մեղադրեալը՝ վերագրելու մեզ ամենասուգաւոր ու մեքենայութիւններ իր անձի դէմ: Ազատ են նրա բոլոր համախոհներն ու համակիրները՝ ամբաստանելու «Կաշնակցութիւն»-ը զրպարտութեան մէջ, կուսակցական հաշիւների մէջ, Դուր տեսաք, որ այդ զրպարտութեան սուտերն անգամ չկայ, որ կուսակցական հաշիւների մասին խօսք անգամ չի կարող լինել քանի որ մեզ համար այդ մարդը գոյութիւն չունէր իբրև հակառակորդ: Կաշնակցութիւնը համոզիչ կերպով ի ցոյց դրեց այդ՝ պատմականօրէն գծելով հայ կուսակցութիւնների յարաբերութիւնները և «Կաշնակցութեան» էլօլիսիօնը:

Զրպարտի դերը ինքը մեղադրեալը յանձն առաւ, տարաբախտաբար. եղբորը, այդ զազիր լրտեսին, ծածկելով, վարագործելով, շարունակաբար մեզ մեղադրեց ամենաքստմեղի դաւադրութեան մէջ:

Եթէ նա լինէր ազնիւ մարդ, ինքն անձամբ կը մերկացնէր իր ստոր եղբորը, որի շահատակութիւններին վաղուց ծանօթ էր: Ինչ հոգն էր Սպ. Սպանդարեանի՞ թէ այդ յանցագործ եղբայրը իր մատնութիւններով կարող էր հալածանք յարուցանել հասարակական գործիչների դէմ, դժբախտացնել ամբողջ ընտանիքներ, դեմօրալիքացիա, լքումն ցանել ազատասէր երիտասար-



դուժեան մէջ, մասնելով այն՝ մի անխիղճ կառավարութեան քմահաճոյքին:

Եւ ի՞նչ բարեբախտութիւն էր, որ Կոնստ. Սպանդարեան խոստովանեց, մերկացաւ... Երևակայեցէք, որ Սպ. Սպանդարեանը միանգամայն անմասն է, որ միակ մեղաւորը իր եղբայր Կոնստանդինն է և որ այդ եղբայրը բոլորովին ինքնաբերաբար, խղճի վերջին մնացորդների թելադրութեամբ, որոշել էր հրապարակով խոստովանելի: Մենք ասում ենք, յիշուի, ի՞նչ բարեբախտ հանգամանք էր այդ... թէ չէ՝ ինչպէ՞ս պիտի գտնէինք նրան: Ոստիկ. Քաժմանուկների թղթերի մէջ Կոնստանդինի անունը չէ, այլ Սպանդարի: Այդ Սպանդարը պիտի գար Մենչիկովին ներկայանալու: Մենչիկովը պիտի ասէր, որ նրան չի տեսել: Խնդիրը պիտի գոցւէր— գէթ երկար ժամանակով— Սպ. Սպանդարեանը պիտի վերադառնար, աւելի ևս յաղթականօրէն գոռալով՝ «զրպարտիչներ, դահիճներ», լաւ իմանալով, որ ոստիկանական գործակալ Ամիրովը իր եղբայրն է, մի խօսք անգամ չ'ընչալով նրա մասին... Այո, անտարակոյս, խմբագիր Սպ. Սպանդարեանը բոլոր ուժով աշխատել է— բանի դահնարաւոր է եղել — որպէս զի երկու եղբայրներն էլ պատուով դուրս ելնեն անարգիչ մեղադրանքի տակից և խարանեն իրենց ատելի «Դաշնակցութիւն»-ը: Աշխատել է նա, ղեկավարելով կեղծ հասկացողութեամբ ընտանեկան պատւի և իր բաղաբացիական պարտքի մասին, բայց գուցէ և ուրիշ, զուտ եսական մասհոգութիւններով:

Ընկեր դատաւորներ: Գիտեմ, թէ որքան դժուար է ձեզ, Պատուոյ Ատեանիդ՝ դատապարտել մարդուն լոկ կասկածների հիման վրայ: Եւ մենք էլ չէինք ուզի այդ: Բայց և միւս կողմից, դուք իբրև յեղափոխականներ, գիտէք, թէ որքան ծանր ու պատասխանատու է այն կուսակցութիւնների գործը, որոնք ներկայ ունենալի շրջանում հսկող ու պահպան են կանգնած Յեղափո-

խութեան շահերի: Ընաւ չկամենալով կասկածն ու մեղադրանքը սիստեմի վերածել՝ մենք հարկադրուած ենք զգոյշ լինելու այն մարդկանց նկատմամբ՝ որոնց դէմ գոյութիւն ունին շատ թէ քիչ ծանրակշիռ կասկածներ: Այդպէս է մեզ թելադրում մեր հայկական միջավայրը, ուր վիտում են բունկալութեան ամեն տեսակ սպասաւորներ, ինտելիգենս և անուս, ուղղակի և անուղղակի, վարձկան և անվարձ. նրանց թունոտ ժանիքները ուղղած են ամենից առաջ, կարելի է ասել, գրեթէ միայն մեր կազմակերպութեան դէմ: Նրա դէմ են շղթայազերծւած ամենավայրագ ատելութիւնները, ամենամոլեգին թշնամութիւնը: Եւ թող այդ փաստը չզարմացնէ ձեզ, «Դաշնակցութեան» դէմ ուղղւած այդ գոնօսային և դաւադրական համաճարակի պատճառը մասամբ, հարկաւ, մեր յետամնաց բարբերի մէջ է, մասամբ էլ այն հանգամանքի մէջ՝ որ այդ կազմակերպութիւնը, ստիպւած լինելով երկար տարիներից ի վեր պայքարելու ամենադժուարին պայմաններում երեք ասիական բռնապետութիւնների դէմ, իր անողորմ և նեարդային մեկուսացման մէջ՝ դիմել է յաճախ խստագոյն արմատական միջոցների՝ չէզոքացնելու համար ժողովրդի և Յեղափոխութեան բոլոր ներքին պարագիտներին:

Վերջացրի: Տարակոյս չունիմ, որ Ատեանը պիտի վճռէ այս նզովեալ խնդիրը լիակատար անաչառութեան անկեղծ ցանկութեամբ, կշռելով մեղադրելի և մեր աւած փաստերը: Եւ կը վճռէ խղճով ու բանականութեամբ՝ արդեօք աստիճան պարզ է իրեն համար և արդեօք կարելի՞ է եղած փաստերի հիման վրայ արձակել վերջնական և կատէգորիկ դատաւճիռ: Եւ միայն մի բան գիտեմ: Քանի դեռ չեն պարզւի վերը յիշատակած կէտերը՝ կ'ասկածը Սպանդար Սպանդարեանի վերաբերմամբ կը շարունակէ պահպանել իր գոյութեան իրաւունքը: